



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՍԵՐԵՐ

644

Հրատարակ. Թիֆլ. Ընկ. Հայերէն Գրքերի Հրատ.

№ 57

Գ. ԱՂԱՅԵԱՆ

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

Չմուսկրում 25 Կ

ԵՐԿՐՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Շարանկի. || Тип. М. Шарадзе.

1892

891.99

U - 44

Բնկերութեան հետեւեալ հրատարակութիւնները յա-
ճառօրում են Բնկերութեան գրասենեակոյում եւ հեղ-
րոնական գրախմբատանցում։—

	Ռ. Կ.
1 Թաւամազ մեղու, Թարգմ. օր. Ն. Տէր-Մար-	
կոսեան	— 40
2 Կարմիր լապտեր, Թարգմ. օր. Ն. Տէր-Մար-	
կոսեան	— 50
Նոյնը առանց կազմի	— 30
3 Թովմաս եղբօր տնակը, Թարգմ. օր. Ն. Տէր-	
Մարկոսեան	— 60
Նոյնը առանց կազմի	— 45
4 Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա	— 25
Նոյնը առանց կազմի	— 15
5 Մօրեխ և նրա ջնջելու հնարները, Հ. Տէր-	
Բարսեղեանի	— 10
6 Առողջապահական ընթերցանութիւն, նեղ	
և խոնաւ բնակարանների մասին, Հ. Ա-	
ռաբելեանի	— 10
7 Սրբոյ Հօրն մերոյ Մովսիսի խորհնացոյ	
Պատմութիւն Հայոց	— 80
8 Փոքրիկ ձեռնարկ դործնական տնտեսու-	
թեան Մօրիս Բլօքի, փոխադր. Ս. Պա-	
սանեանի	— 50
9 Ռօբինզօնի պատմութիւն, Թարգմ. Գիւտ	
քա՛հ. Աղանեանցի	— 60
10 Գամառ-Քաթիպայի բանաստեղծ. (սպառ.)	— 50
11 Ուխտաւորք, դործ Վիլհէլմ Հաուֆի	— 75
12 Գառնուկ եւ լուսատուիկ, վէպեր Քրիստա-	
փոր Շմիդտի, Թարգմ. Նուարդ	— 25
13 Սպեկաթ-Նօփա, ազգային երգիչ	— 5
14 Ծանդեան պատմութիւնը եւ Մայիսեան	
տօնը Ֆինլանդիայում	— 10
15 Ազաթանդեղեայ պատմութիւն	— 1
16 Գիւղական եռլիֆայ, Ա. Արարատեանցի	— 50
17 Վանայ Սազ, Գ. Շէրենցի	— 75

Սերէք
644

48

Հրատարակութ. Թիֆլ. Ընկ. Հայերէն Գրքերի Հրատ.

№ 57

25 JUN 2005

Գ. ԱՂԱՅԵԱՆ

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

ԵՐԿՐՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի. || Тип. М. Шарадзе.

1892

Дозволено цензурою, Тифлисъ, 20-го Юля 1892 г.



644-2009

(5199-59)

Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

48640.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ



Ա.

Ես տասներկու տարեկան էի և գիր էի սովորում Շա գիւղի քահանայի մօտ: Մէկ ամառնային շոգ օր էր: Երկու հատ տանձի ծառեր կային տան ետեւը. նրանց մէկի ստեւրում տէրտէրն էր նստել և սաղմոս էր քաղում, իսկ միւսի տակ ես էի դասս սովորում: «Բարձր կարգա», հրամայում էր ինձ տէրտէրը, նկատելով, որ երեսս է միայն գրքի գիմացը, իսկ ուշք ու միտքս գետումն էր, ուր այդ ժամանակ լողանում էի բոլոր իմ հասակակից տղայքը: Ես քթիս տակ մոմուում էի, իսկ աչքիս տակովը տէրտէրին էի մտիկ տալիս, որ տեսնեմ երբ պիտի քունը տանի, որ ես օգտւեմ այդ հանգամանքից ու փախչեմ գէպի գետը:

Նինջն արդէն սկսել էր իջնել տէրտէրիս վրայ ու յոյս կար, որ գլուխը դնել տար բարձի վրայ, հէնց այդ ժամանակ մօտ եկաւ մեզ անծանօթ մի երիտասարդ, տէրտէրի աջը համբուրեց և այնպիսի մի բան

ասեց, որից տէրտէրիս քունը փախաւ և երեսի գոյնն ալլալլեց: Երևում էր, որ երիտասարդը նրան մի խորհրդաւոր գաղտնիք էր յայտնում այնքան ցածր ձայնով, որ ես չըլտեմ: Այս բանն աւելի ևս զգացի, երբ տէրտէրն ինձ հրամայեց, որ երթամ ճաշելու: Այս կընշանակէր ցանել ինձ, որ ներկայ չըլինիմ երիտասարդի խոստովանութեանը:

Ես վեր կացայ և քալլերս ուղղեցի գէպի տուն, բայց հետաքրքրութիւնս այնքան սաստկացել էր, որ ուզում էի անսլափառ իմանալ թէ ով էր այդ անծանօթը և ինչ էր խօսում տէրտէրի հետ: Դատ չանցաւ, անծանօթը հեռացաւ տէրտէրից և եկաւ ընկաւ իմ առաջը: Ես ընկայ նրա քամակից և քալլերս արագացնելով սկսեցի զննել նրան ոտքից մինչև գլուխ: Մի վայելչակազմ երիտասարդ էր նորաբոյս բեխերով ու մօրուքով, խոշոր աչքերով ու խիտ ունքերով: Մի գեղեցիկ հրացան ունէր, որ արծաթաբանդ լինելով վառվռում էր, անդրադարձնելով արևի ճառագայթները: Արծաթաբանդ էր և առըրճանակը, որ խրած էր արծաթի քամարի տակ, որից կախ էր արած և արծաթապատ խանջալը: Այսպիսի զարդարանք չեն ունենում օրական աշխատանքով ապրող գիւղացի երի-

տասարդները, այլ նրանք միայն, որոնք հընձում են առանց ցանելու, կամ ոչ ցանում և ոչ հնձում են, այլ «Ես ղամաթ» ասելով մի գիշերային ճամպորդութիւն են անում իբրև զբօսանք և առատ գրպաններ որսում մութ անտառներում:

Երիտասարդն ամենեւին ուշք չէր դարձնում ինձ վրայ և կարծես չէր տեսնում, որ ես որսորդի շան պէս պտըտում էի նրա չորս կողմով ու քիչ էր մնում ոտքի տակն ընկնիմ: Այսպէս շարունակեց մեր քալլերը մինչև հասանք գիւղի ծայրը: Այստեղ միայն նկատեց ինձ անծանօթը և հարցրեց.

— Դու ո՞ւր ես գնում, բալա ջան.

Ես պատասխանեցի կակազելով թէ ուր եմ գնում:

— Դէ հիմա լետ դարձիր, ասաց, գնա տէրտէրին ասա՝ գայ ինձ հաղորդ տայ. ես այստեղ կսպասեմ: Այս ասելով՝ դուրս եկաւ ճանալիցը և հրացանը վայր բերելով՝ նստեց:

Այս առաջարկութիւնն ինձ այնքան անտեղի թւաց, որ ես խօսք չըգտայ պատասխանելու: Ողջ-առողջ մի մարդ, հաղորդել է ուզում. այն էլ գիւղից դուրս, ճամպի վրայ. այս ինչ է նշանակում արդեօք, մտածեցի ես,

առանց կարողանալու որ և է առիթ ենթադրել:

— Գնա, ապրեն, գնա, կրկնեց երիտասարդը, և նկատելով իմ զարմանքը, աւելացրեց.

— Նս հեռու տեղ պիտի գնամ. ո՞վ գիտէ՝ ի՞նչ կը պատահի ճամպին. դրա համար ուզում եմ հաղորդելի:

Նս հաւատացի և յետ դարձալ, բայց հազիւ երեք թէ չորս քայլ էի արել, ետևիցս թնդաց հրացանը և ես բոլոր մարմնովս ցընցւելով՝ վեր թռայ ինչպէս գետնին զարկած մի ուէտինի գնդակ: Յետ նայեցի և երիտասարդին տեսնելով թէ ինչպէս էր կռուում մահւան հետ, ճանկւտելով չորս կողմի հողն ու խոտը, աչքերս մթնեց ու ես վայր ընկայ:

Բ.

Աշունք էր: Մի անտառուտ ձորամիջում մեծ խարոյկ էին վառել ութ գիշերեկան արած, որոնք մինը քան զմիւսը կոպտատարազ և քաջառողջ երիտասարդներ էին:

— Տոէք, ի՞նչ սազ կը գայ էս կրակին, ասեց նրանցից մինը, ընդհատելով հասարակաց զրլարճախօսութիւնը:

— Մէկ մեծ խոզ, որ խանձենք սրա վրայ, ասեց մինը և կրկնեցին բոլոր միւսները:

— Լաւ իմացաք, համաձայնեց առաջարկողը և աւելացրեց. ո՞վ կուզի՝ գնալ խոզի...

Պատրաստակամութիւն ամենքը յայտնեցին: Առաջարկողը երկուսին հրամայեց որ գնան խոզ բերեն, երկուսին էլ, որ գնան խաղող քաղեն, երկուսին էլ, որ գնան, կաթսայ, ջրաման և աղ ու հաց բերեն: Խոզն ու խաղողը պիտի գողանալին, իսկ միւս բաները իրանց տներիցը պիտի բերէին: Սրա համար էլ գլխաւորը գնացողներին հետևեալ հրահանգը տուաւ.

— Խոզի դուռնիցը կը բռնէք ու խույն պինդ կը կապէք, որ ձայն չը հանէ և խոզարածներին չը զարթեցնէ: Խաղողը Թաթոսի բաղիցը կը բերէք. ծոցները հողով լցրէք, որ եթէ բաղանչին առաջներդ դուրս գայ, իսկոյն աչքերն ածեցէք: Հացի ու ամանի գնացողները էլ էնպէս պիտի գեղը մտնէք և դուրս գաք, որ ոչ մի շուն չը հաչի ձեզ վրայ, ոչ մի մարդ չը տեսնի: Դէ, Աստուած կանչեցէք, գնացէք:

Գողութեան գնալիս Աստուած կանչելու սովորութիւնը շատ հին է: Մի ժամանակ գողերն էլ են ունեցել իրանց զանազան և

պաշտպան Աստուածը: Վաղի ու գողի զսմա-
թըն էլ է Աստուած տալիս, ասում է առա-
ծը: Մի խոզի դուռն է կապել, որ ձայն չըհա-
նէ, կամ այգեպանի աչքերը հող ածել, դը-
րանք այնպիսի կատակներ են, այնպիսի խա-
ղեր, որոնք ամառը կատարւելով՝ ձմեռը դառ-
նում են պատմելու նիւթ զանազան աւել-
ւածներով ու զաւեշտներով...

Այս անմեղ գողերի գլխաւորի անունը
Արզուման էր: Սա ամենից փոքրն էր, բայց
ամենի սիրելին էր և ամենից խելօքն ու ճար-
պիկը: Սա իր մօտ պահեց և ամենից մեծին,
Խաչատուրին, որ արդէն հասակ առած մարդ
էր և ջահելութիւն անելու անյարմար: Ար-
զումանը սրան իր սրտակից բարեկամն էր հա-
մարում ու իր սրտի խորհուրդը միայն սրան
էր ասում: Երբ տղէքը գնացին, Արզումանը
մի խոր մտածութեան մէջ ընկաւ: Աւագն
այս նկատելով, ասեց.

— Էսօր քէփըդ տեղը չի, Արզուման,
ինչի՞ վրայ ես մտածում:

— Ի՞նչ ասեմ, Խէչօ, պատասխանեց Ար-
զումանը. — գիշերս մէկ էրազ եմ տեսել, սաղ
օրս դրա վրայ եմ մտածում, թէ եարար ի՞նչ
պիտի պատահի:

— Ի՞նչ ըլի, ասա, տեսնեմ ի՞նչ ես տեսել:

— Էրազումս մի սիպտակ ձիու վրայ նըս-
տած էի: Ենպէս մի ձի էր, որ աստղերի հետ
էր ուղում խաղաղ: Եարաղըս կապել էի, ամեն
սարք ու կարգս վրաս էր: Գիւղի առաջին
խաղացնում էի ձիս, ամենքն էլ ինձ էին մը-
տիկ տալիս, ինձ էին թամաշա անում: Զիս
քար ու խօլ չէր հարցնում, ուր ասես թըռ-
չում էր: Շատերը բղաւում էին. կամաց քը-
շիր, մի քշիր, վէր արի, վէր կընկնիս: Նը-
րանց ախանջ չէի դնում: Հէնց այս ժամանակ
նկատեցի, որ մի քանի հարս ու աղջիկ, Հէ-
րիքնազս էլ նրանց միջին, ճանալի զրաղին
կանգնել, ինձ են մտիկ տալիս: Ես որ տեսայ,
աւելի տաքացայ. ձիուս գլուխը բաց թողի:
Զիս թռաւ, էլ չըկարացի գլուխը բռնել...

— Յետո՞յ, ո՞ւր գնաց ձին.

— Զին քօռացաւ, թէ՛ աչքերն արնով
լցւեց, ճամպէն ծռեց, ու շիփ շիտակ ընկաւ
աղջկէքանց մէջը: Երկու հոգի ընկան ձիու
տակը, ձին գլխի վրայ տնկեց, ես էլ բե-
րանքսը վէր գետնին փռւեցի: Սրա վրայ զար-
թեցի: Ի՞նչ կասես, սա լաւ նշան չի: Զիու
տակն ընկնողը Մարիամն ու Հէրիքնազն էին:
Աշկարա էրեւում է, որ ես մուրազիս չըպի-
տի հասնեմ:

— Ի՞նչ ասեմ, օրը գիտէ: Շատ անգամ

մարդ վատ էրազ էլ է տեսնում, բայց եթէ օրը բարի է լինում, էրազն էլ բարին է կատարում: Չեն ասում, թէ ում որ մեռած տեսնես, շատ կապրի. կամ որ թուրք տեսնես—սուրբ է, թէ որ տէրտէր տեսնես—սատանայ է: Բայց դիփ սուտ, Աստուած ըզորդ: Ինչ որ լինելու է, էն կըլինի. էրազին շատ չըպէտք է հաւատաս ու սրտումդ դարդ շինես, մտածես...

Եթէ Խաչատուրը մի քիչ աւելի զարգացած լինէր, կարող էր աւելացնել, որ էրազից նախապաշարւելով՝ մարդ կարող է մոլորվիլ և եթէ հաւատում է, որ պիտի մեռնի, կարող է հիւանդանալ և ապրելու յոյսը կըտրելով՝ մեռնի: Տկար մարմնի մէջ դեռ էլի կարող է առողջ հոգի լինել, բայց տկար հոգի ունեցող մարմինը երբէք առողջ լինել չի կարող: Ես հաւատում եմ սակայն, որ կան բացառիկ հոգիք, որոնք իրանց գլխի գալիքը տեսնում են էրազի մէջ:

Շատ չանցաւ, գիւղ գնացողները եկան: Բոլոր պատւիրածները բերել էին, նրանց հետ նաև մի կապոց, որ դրին Արզումանի առջև:

Արզումանը բաց արաւ ծրարը և նրա միջից հանեց մի եփած չաղ հաւ և մի քանի հատ գաթա: Նա իսկոյն իմացաւ, թէ ինչ

տեղից պէտք է լինի այդ, և թէև շատ ուրախացաւ, բայց այնու ամենայնիւ սաստիկ բարկացաւ, որ իր պատէրը ճիշտ չեն կատարել:

— Տղէք, դուք մեր անունը պիտի խաշտառակէք, ասաց նա, բարկանալով: Ես ձեզ ասեցի՝ էնպէս պիտի մտնէք գիւղը, որ ոչ մի կատու, ոչ մի շուն չիմանայ, ձեզ ինչպէս գտան, որ էս բաներն ուղարկեցին:

— Աստուած, Երկինք, Արզուման, ոչ մի հոգի, ոչ մի շունչ չի տեսել մեզ: Մենք ամեն բան վեր կալած Նեսուհե տան կշտովն անց էինք կենում, մէկ էլ տեսանք մթնումը, չափարի տակին մի շրւաքի պէս բան է էրեւում: Մօտեցայ տեսայ էրեսը ծածկած մի հարս: Մտքումս ասեցի, հրէս որտեղ որ է, կըփախչի. բայց նա փէշքիցս բռնեց ու էտ տըւաւ ինձ: Ես իսկոյն գլխի ընկայ, որ քեզ համար է: Հարցրի, ասեցի՝ դու Սարիամն ես. նա գլխով արաւ.—էս Արզումանի համար է. նա էլի գլխով արաւ ու փախաւ...

Արզումանը գլուխը կախ գցեց ու քթի տակին փնթփընթաց—էրնդ, էրնդ...

Այս միջոցին հրացանի ձայներ լսեցին: Տղէքը վեր թռան տեղներիցը և կասկածելով սկսեցին իրար հարցնեն, թէ չըլինե՞ր իրանց

ընկերները վրայ արձակեցին այդ մարդասպան գործիքները, և հարկաւոր չէր արդեօք զնալ օգնութեան, բայց հէնց այդ ժամանակ խաղողի գնացողները եկան: Իրանց հագուստները յարմարագոյնը խուրճին էին շինել և խաղողով ու խնձորով լցրել, գցել ուսները: Բեռները ցած դրին, և քրտնած երեսները գդակներովը սրբելով նստոտեցին կրակի շուրջը:

— Տղէք, ոչով հօ չըտէսաւ ձեզ, հարցրեց Արզումանը: Տղէքը պատասխանեցին շնչարգելւելով յոգնածութիւնից.

— Բաղւանջին տեսաւ... Վայ էն տեսներուն, որ նա տեսաւ, իր մահը տեսաւ, աշխարհքը գլխին մթնեց, մեզ չըճանաչեց:

— Չըլինի՞ թէ խեղճի օրը սեւացրիք...

— Չէ, չէ, մի ծիծաղ էր, ծիծաղ. դեռ էսպէս խելօք բան չէինք արած: Մտանք բաղը թէ չէ, առաջ ուղեցանք բաղւանջուն գտները ու յետոյ մեր բանը տեսները: Գնացինք դադին մտիկ արինք, տեսանք էնտեղ չի. դէս ու դէն ընկանք, տեսանք վերի մեծ խնձորքի տակին քամակի վրայ պառկած խռմփացնում է: Մենք էլ էս կուգէինք: Մագօն տեսցի, դէ հիմի դու զնա արխային բաղը քաղիր. ես սրան կըպահեմ: Մագօն զնաց, ես խանչալս հանեցի, բաղւանջու գլխավերեւը

կանգնեցի մահւան հրեշտակի նման: Բաղւանջիս բաւական ժամանակ խոր քնի մէջ էր, մէկ էլ՝ երազ տեսաւ, թէ խրշխրշոյն ընկաւ ականջը, մօծակները զօռեցին, թէ լըւանը կծեցին, մէկ էլ տեսնեմ՝ սա ժաժումաժ է գալիս: Չէ, տեսայ որ գլուխն էլ է ուզում բարձրացնի, ես խանչալս գլխավերեւը պսպրղացրի: Բաղւանջիս մահն առաջին տեսաւ թէ չէ՝ քաղցր քնի մէջ մտաւ, աղւէսի նման սուտմեռուկ էլաւ: Մագօն իր բանը որ պըրծար, բաղիցը դուրս եկաւ, ինձ շըւացրեց: Մենք կիսաճանալի էինք, որ բաղւանջին նոր վեր կացաւ, քամակները թւանք գցեց. մէկէնքն էլ նրա ձէնի փրայ իրանց թըւանքները դարտկեցին...

Խոզի գնացողները նոյնպէս եկան: Սրանք էլ իրանց արածները պատմեցին, և շուտով մորթեցին խոզն ու խանձեցին, ոչ մի հետք չըթողնելով կրակի շուրջը:

Արզումանը ոչ մի բանի ձեռք չէր տալիս, ոչինչ չէր խօսում, միայն երբ որ խոզը մաքրեցին և կտրատելու վրայ էին, առաջարկեց, որ մի աղբը կտրեն իրան տան և թողնեն երթալու գիւղը: Տղէքը հասկացան նրա միտքը, և խփոյն կատարեցին նրա խնդիրը: Արզումանը, իր բաժինն առնելով՝ ճանապարհ

ընկաւ ոտքով դէպի մի աննշան խրճիթ, իսկ երեւակայութեամբ՝ դէպի Մուհամմէդի եօթներորդ երկինքը:

Գ.

Դ. գիւղի վերի թաղումը մի տուն կար բոլորովին կղզիացած միւս տներից: Այդ տան չորս կողմովը բաւական բարձր չափար էր քաշած, որ պարսպի ամրութիւն ունէր, և, ինչպէս ասում են հէքիաթներումը, թռչունն իր թևովը, օձն իր փորովը, չէին կարող ներս թափանցել:

Ժամանակով մեծ տուն էր այդ տունը: Մէկ անգամից ութ-իննը օրօրոց էր օրօրում այդ տանը, չորս ու հինգ թոնիր հաց էր թխում Աստուծոյ օրը: Երկու գութան էր դուրս գալիս այդ տանիցը, վացսուն գլուխ կով ու գոմէշ էր կթում. սուրում ոչխարներ, բոլոկներով խոզեր, իլիկներով ձիաներ էին պահում: Այդքան ապրանքի կառավարութեան համար ոչ մի վարձկան ծառայ չունէին: Տասը եղբայր էին, որոց ու թոռների տէր, որոնց թիւը հասում էր մինչև եօթանասունի: Բայց երբէք չէր պատահում, որ

դրանք ամենքը միասին մի սեղանի վրայ գտնուին, միասին իրանց նահապետի չորս կողմը շարւին: Մի քանի հոգի տարւայ մեծ մասը սարերումն էին անցկացնում, ուր պահում էին իրանց ոչխարի հօտերը, խոզարանները իրանց խոզերի հետ էին թափառում, տանում էին այն տեղերը, ուր նրանց համար կերակուր էր գտնւում, թէկուզ այդ տեղը տասն օրւայ չափ հեռու լինէր իրանց գիւղիցը, տաւարի համար էլ նոյնպէս հեռաւոր տեղերում ունէին իրանց ձմերոցները, վար ու ցանք անողները նոյնպէս դաշտերումն էին կատարում իրանց գործը: Այս հանգամանքը այն վատ կողմն ունէր, որ վայրենութեան մէջ էր ձգում նրանց, հեռու պահելով տնական և հասարակական կեանքից, բայց միւս կողմանէ այն լաւութիւնն էլ կար, որ տան բոլոր անդամները իրարից հեռու մնալով, միշտ միմեանց կարօտ էին քաշում և միմեանց հետ սիրով մնում:

Ահագին մեծութիւն ունէր տան շինութիւնը, և եթէ շէն չըլինէր, մտնողի վրայ սարսափ կըբերէր լիշեցնելով հէքիաթների մէջ եղած դէւերի բնակարանները:

Հարիւր երեսուն տարեկան էր, երբ մեռաւ այս տան վերջին նահապետը, և ինքը

105-5615

644-2009



Յօբ երանելու պէս ականատես էր իր բոլոր
 ժառանգների և հարստութեան կարճ միջո-
 ցում ոչընչանալուն, և Յօբի պէս Աստուծոյ
 փառքը բերնից չըպակսեցրեց մինչև մահը:
 Ես շատ անգամ եմ տեսել այդ նահապետին:
 Յակօբ էր անունը և նրան տեսնելիս՝ միշտ
 հրէից Յակօբ նահապետին էի երեւակայում:
 Շատ անգամ եմ համբուրել նրա ձեռքը և
 նա ինձ օրհնել է: Նրա օրհնութիւնը շատ
 անգամ խորհրդաւոր միտք էր ունենում և ինձ
 վրայ մեծ տպաւորութիւն էր գործում: Սուրբ
 էր համարւում դրանց օջախը, և սովորութիւն
 կար գիւղումը, որ նորապսակ հարս ու փեսա-
 յին եկեղեցուց դուրս բերելուց յետոյ, կըտա-
 նէին դրանց օջախը համբուրելու: Չորում էին
 նորապսակները, օջախի քարից համբուրում, և
 ծերունազարդ Յակօբի օրհնութիւնն ստանա-
 լով՝ գնում էին իրանց մուրազին հասնում:

Ահա այս տանից մնացել էին երկու աղ-
 ջիկ միայն. մեծի անունը Մարիամ էր, փոք-
 րինը՝ Հերիքնազ: Մարիամին մի զարաբաղցի
 մարդ ուզել էր և տան փեսայ դառնել, Հերիք-
 նազին էլ նոր պիտի ուզէին: Սրանք մեծ
 տանը չէին բնակում, այլ մի փոքր սենեակում:

Մարիամը շատ սիրուն էր, Հերիքնազն
 աննման էր, — երկու հիւրի-փարի: Մարիամն

ուզում էր Հերիքնազը տալ Արզումանին,
 որովհետեւ, տեսնում էր, որ քրոջ աչքը նրա
 վրայ էր: Արզումանը նոյնպէս մեծ օջախի
 որդի էր, բայց այժմ իր մօր միներնաւորն էր:
 Նա չուներ ոչ մի հարստութիւն, այլ միայն
 մի անվեհեր սիրտ, որ շատ անգամ ի չարն
 էր գործ դնում: Ատելով ատում էր հարուստ-
 ներին, որովհետեւ նրանք յափշտակել էին հայ-
 րական ունեցած չունեցածը իր անչափահաս
 ժամանակ: Չըկարողանալով յետ ստանալ հայրա-
 կան հողերը, աշխատում էր վնաս տալ նրանց
 ինչքան որ ձեռքիցը կը գար, իսկ ձի գողա-
 նալը իր համար շինել էր մի անբուժելի ցաւ:
 Ուրիշ բաներն ուրիշների էր գողանալ տալիս,
 իսկ ձիաները միայն ինքն էր գողանում: Չընա-
 յած այս բանին, նրան ամենքն էլ սիրում էին,
 շատերը երկիւղից, կեղծաւորութեամբ, որ
 իրանց մի վնաս չըտայ, շատերն էլ անկեղծ
 սրտով, և շատ անգամ ասում էին. «Մի ձի
 չի՞, մենք գիտենք որ դու ես տարել, բայց
 քո չարին փոխ ըլի»: Սրա պատճառն այն էր,
 որ եթէ մի քանիսին վնաս էր տալիս, բայց
 և շատերի համար էլ իր գլուխը յետ դրած
 ունէր, նեղեալներին և չքաւորներին օգնում
 էր ինչով որ կարող էր: Պէտք է այս էլ ասեմ,
 որ գողութիւնը, աւազակութիւնը այս գիւ-

դացոց մէջ մի պախարակելի և անսովոր բան չէր, մի ժամանակ ամենքն են եղել աւագակ, նոր էր սկսել գողութիւնը նըւագիլ: Վրաստանի հոգեվարք ժամանակ սրանք զարաբաղից եկել էին երկիրը պաշտպանելու, և պաշտպանում են եղել տաճկի, պարսկի և լեզգու դէմ պատերազմելով, բայց խաղաղ ժամանակ էլ՝ աշխատելու անսովոր լինելով՝ սկսել են շրջակայ խաղաղ ժողովրդին կողոպտել: Սինչև այսօր էլ այս գիւղից դուրս են գալիս նշանաւոր աւագակներ, ինչպէս վերջերումս Սբրահամ Տէր-Անդրէասեանց, որ իր արհեստն սկսել է տասներորս տարեկան հասակից, չընայած, որ ոչ մի կարիք չունէր, լինելով մեծ և հարուստ օջախի որդի:

Դ.

Կէս գիշերը մօտ էր լրանալու: Լուսինը մի նիզակաչափ բարձրացել, և արեգակի ճառագայթները գողանալով՝ սփռել էր մի անկողնու վրայ: Այդ անկողինը մի սրահի մէջ էր, որ ուղիղ դէպի արեւելք էր նայում: Նախընթաց գլխի մէջ լիշտած ցանկապատի մէջն էր այդ սրահը և Մարիամն ու Հերիքնազն

էին նոյն անկողնու մէջ պառկած: Քրնի հրեշտակը տարածել էր նրանց վրայ իր թւերը և շատ քաղցր երազների մէջ էին նրանք այս րոպէիս:

Մարիամի ամուսինը՝ Շամիրը, որ իր բոլոր կեանքը որսորդութեամբ էր անց կացնում, այժմ քաղաք էր գնացել, իր աշխատութեան պտուղը տնական կարիքների հետ փոխանակելու: Նա հրացանը երկու գնդակով լցրել, կախել էր կնոջ մօտ և խառիւ պատուիրել, որ մի անհաւատարիմ ոտք ներս մտնելուն պէս, իսկոյն գնդակահար կործանւի: Երկուսն էլ, թէ Մարիամը և թէ Հերիքնազը բաւական վարժ էին այդ բանումը, բայց Հերիքնազն արդէն սկսել էր գերազանցել Մարիամին: Երբ որ իմանում էր, թէ այս ինչ նշանի խփելու խալաթը Արզումանն է ստացել, Հերիքնազն այդ օրը մի տասն անգամ աւելի էր կրկնում իր փորձը իր դրած նշանին զարկելով: Դրացիները կարծում էին, թէ Շամիրը կը լինի այդ փորձն անողը: Շամիրը միշտ գանգատուում էր, որ վառօդը պակասում է, բայց չէր գլխի ընկնում, որ Հերիքնազն էր նրա վառօդի գողը:

Լուսնի շափաղը Մարիամի երեսին ընկնելով՝ զարթեցրեց նրան, հենց այդ ժամանակ մի ոստիւնի ձայն հասաւ ականջին: Ար-

զուգահեռ էր, որ չափարի վրայից թրըմփաց։ Մարիամը փոքր ինչ ահազաց, ձեռքը մեկնեց գէպի հրացանը, բայց մէկ էլ մտածեց, որ Արզումանը կըլինի, որին սպասում էր իր սիրտը, թէև չէր պատահած ոչ մի անգամ, որ գիշերով նրան հիւրընկալած լինի։ Շտապով հագաւ շորերը և նստեց տեղի մէջ։ Արզումանը գիտէր Մամիրի բացակայ լինելը, այս պատճառով համարձակ առաջ գնաց և Մարիամին տեսնելով «բարի իրիկուն» ասեց։

— Արզուման, դու ես, հարցրեց Մարիամը, որպէս թէ լաւ չըճանաչելով։

— Ես եմ, պատասխանեց Արզումանը։

— Ի՞նչ ինչ ունիս ձեռիդ։

— Ոչինչ, մի քիչ միս է, մի քիչ էլ խաղող ու խնձոր։

Մարիամը վեր կացաւ իսկոյն, ձեռքիցն առաւ բերածը որ տանի տեղաւորի, պատուիրելով՝ որ Հէրիքնազին չըզարթեցնի։

Հէրիքնազը զարթել էր արդէն և սուտ քունն էր գրել իրան, գլուխը եօրդանի մէջ թաղելով։

Արզումանը նստեց անկողնու մօտ մի կիթոցի վրայ իբրև աթոռի։ Նայելով եօրդանին, սաստիկ նախանձում էր նրան, որ իր սիրուհուն այնպէս փաթաթել և անջրպետել

է իրանից։ «Ես գեռ մի վերմակի չափ երջանկութիւն չունիմ», երևի ասում էր նա իր մտքումը։ Նրա երեակայութեան առջև եօրդանը, դօշակը, բարձը, մահճակալը և մինչև անգամ շրջակայ պատերն ու քարերը ոգի առած՝ որն ուրախանում և որն էլ տնազ էր անում։ Եօրդանը տնազ անողներին էր անշուշտ։

Մարիամը տեղաւորեց Արզումանի բերածը, լետ քաշեց կրակի անթեղը և խանձողների ծայրերն իրար մօտ բերելով կրակը վառեց։ Մի քանի րոպէ չանցած՝ ձրւածեղ շինեց և երկու շամփուր խորոված։ Արզումանը շատ ասեց, թէ ախորժակ չունիմ, հաց եմ կերել, նեղութիւն մի քաշիր, բայց անկարելի էր, որ Մարիամն իր ուզածը չանէր։

— Ի՞նչ որ էդպէս է, ասաց Արզումանը, քրոջդ վեր կայրու, թող նա էլ գալ հաց ուտի։

Մարիամը համաձայնութեան ժպիտ ցոյց տաւ, գնաց ներսը շոր փռեց, ճրագ վառեց. սուփրա գցեց, Արզումանին ներս կանչեց նստեցրեց, իսկ ինքը դուրս եկաւ, որ քրոջը զարթեցնէ։

Արզումանը ներս գնաց թէ չէ՝ սուտ քնած Հէրիքնազը գլուխը բարձրացրեց, բայց չուզեց վեր կենալ։ Արզումանը աւելի ամօթ-

խածութեան վերագրելով այդ բանը՝ լուեց, բայց հալալ հաց էլ չըկերաւ: Նա աւելի լաւ էր համարում Հէրիքնագից մօտիկ քաղցած նստել, քան թէ նրանից հեռու առատ սեղանի վրայ: Շուտով դուրս եկաւ և իր առաջւայ տեղը նստեց: Մինչև Մարիամը սուփրան կը հաւաքէր, Արզումանն աչքը գցել էր ճրագի վրայ և տեսնում էր, թէ ինչպէս թիթեռը պտըտւելով ճրագի չորս կողմով խանձում էր թւերը մինչև վերջապէս խեղացաւ բոլորովին և ճրագի վրայ ընկնելով այրւեց: Նա որ այդ րոպէին ամեն բանի մէջ միայն սէր էր տեսնում, ձեռաց մի բան ասեց, որ անգիտակցաբար ոտանաւոր դուրս եկաւ, ինչպէս.

Ճրագին սիրում է փարւանան

Գլխովը պտըտւում է,

Բայց անգութ ճրագը նրան

Զըխըղճալով՝ այրում է:

Հէրիքնագն այս լսելով՝ չըկարաց լուռ մնալ և պատասխանեց, թէ «փարւանան ճրագին չի սիրում, այլ սւգում է հանգցնել նրան, նա էլ ջգրու էրում է»:

«Լեզւիդ մատաղ», ասեց Արզումանն իր մտքումը և օգուտ քաղելով այդ հանգամանքից սկսեց խօսեցնել նրան:

— Ախի, էդ քնչ ասեցիր, մէկ էլ ասա, ես լաւ չիմացայ:

— Ասեցի որ հասկանաս, չասեցի որ սովորես, պատասխանեց Հէրիքնագը հեգնելով:

— Ես հասկացայ ինչ որ ասեցիր:

— Որ հասկացար, էլ ինչք ես ասում «մէկ էլ ասա»:

— Հէնց էնպէս. ուզում եմ խօսեցնեմ: Շատ ժամանակ է քո խօսիլը չեմ լսել: Միտըդ է, որ մէկ օր բաղիցը տուն էինք գալիս, դու էնքան խօսեցիր, որ ես ասեցի. «Ախի, քիչ խօսիր, գլուխս տարար». դու էլ բարկացար վրաս... Ո՞վ գիտէր, թէ յետոյ դու եղապէս...

— Եղապէս քնչ:

— Հիմա էլ ես չեմ ասիլ քո ջգրու:

— Մի ասիլ, ես էլ չեմ խօսիլ քեզ հետ, որ էլի չասես «գլուխս տարար»: Բայց մի բան ասեմ. թէ դու լաւ մարդ ես, էս կէս գիշերին ինչք ես եկել մեր տուն: Դու չըգիտէիր, որ Շամիրը տանը չէ:

— Գիտէի, էնդուր եկայ:

— Լաւ չես արել, դրա տակիցը վատ բան դուրս կըգայ: Առաջ աշկարա կըգնան ուր որ ուզում են, օրը ցերեկով և ոչ կէս գիշերին, յետոյ թաքուն էլ գնան, վնաս չունի:

— Ես առաջ թաքուն եկայ, որ քեզա-

նից մի խօսք իմանամ, որ յետոյ կարողանամ աշկարա գալ: Ես կարծում եմ, որ էսպէս աւելի լաւ է:

— Յետոյ, ինչանից թնչ պէտք է իմանաս:

— Ախի, ախր...

— Ախր թնչ...

— Ոչինչ: Դու ասում էիր էլ չեմ խօսիլ, բա ինչի՞ ես հղքան խօսում:

— Ի՞նչ անեմ, զօռով խօսեցնում ես:

— Դէ մի լաւ բան խօսիր, մի հէքիաթ ասա, ահանջ դնենք:

— Դու ասա, ես ահանջ կըդնեմ:

— Լաւ, դէ լսիր:

— Լսում եմ:

— Ելել է չի ելել մի աջիկ է ելել:

— Իմացայ. էդ աղջըկայ անունն էլել է

Հէրիքնազ:

— Էդպէս չէ, թող ես ասեմ:

— Լաւ, դէ ասա:

— Էդ աղջիկն ունեցել է...

— Մի քոյր. անունը Մարիամ:

— Էդպէս չէ, թող ասեմ:

— Լաւ, դէ ասա:

— Էդ աղջիկն ունեցել է մի պառաւ մէր...

— Անունը Գիւլլուզար... իմացայ, իմացայ...

— Ել չեմ ասիլ, դու չարութիւն ես անում, քեզ պէտք է պատեմ...

— Հը՛... ձեռք չըտաս թէ չէ, հրէս լիքը դաբանչէն կըշտիս գրած...

— Աբա տեսնեմ, էդ թնչ դաբանչա է...

Այստեղ Արզումանը Հէրիքնազի երկու ձեռքը ճանկը դցեց ու սկսեց մի ձեռքով մի թուշին միւսով միւս թուշին թեթեւ ապտակներ տալ և ցաւն ամոքել ջերմ համբոյրներով...

— Դէ հիմա խելօք կըկենսւ թէ չէ, խօսեց վերջապէս Արզումանը:

— Թող թէ չէ՝ ձեռքդ կըկծեմ...

— Ձեմ թողնիլ, մինչև չասես՝ սիրո՞ւմ ես ինձ, թէ՞ չէ:

— Դէ թող, լաւ:

— Ձէ, պիտի ասես:

— Արզուման ջան, թող, հոգուդ մատաղ:

— Ե՛ս քեզ մատաղ, ես: Մէկ անգամ ասա. «քեզ սիրում եմ. քեզ կուգեմ», ես էլ թողնեմ:

— Զօռով սիրել կըլինի՞. ինչի՞ ես ստիպում, չեմ սիրում...

Արզումանը սուտ խռովելը դրաւ իրան, ձեռքերը յետ քաշեց և սկսեց քթի տակ փրնթփնթալ. — Ըղորդ որ զօռով սիրել չի լինիլ. տեսնում եմ, որ ինձ չես սիրում:

— Դէ լաւ, լաւ, մի խռովիր, եկ բարը-
շենք, ասեց Հէրիքնազը և ձեռքը փաթաթեց
Սրգումանի պարանոցին: Սրգումանի սիրտն
այնպէս շարժեց, որ քիչ մնաց լաց լինի: Իր
կեանքումը առաջին անգամն էր փոխադարձ
սիրոյ ճաշակն առնում:

— Ել ինչո՞ւ ես հարցնում, թէ «սիրո՞ւմ
ես ինձ»: Սէրը սրտումը կըլինի, ոչ թէ լեզ-
ւումը. եթէ չըսիրէի, դու ինչպէս կարող էիր
գալ էստեղ, ասեց վերջապէս Հէրիքնազը:

Մարիամը գիտութեամբ ներսը մըլոլ էր
անում, որ ներկայ չըլինի նրանց խօսակցու-
թեանը, բայց տեսնելով որ շատ են չարու-
թիւնն անում, դուրս եկաւ, որ խելօքացնէ:

— Սխչի, Հէրիքնազ, ինչի՞ ես խօսում,
չես ամաչո՞ւմ, նկատեց Մարիամը:

— Բա ինչի՞ է ինքը խօսում, ուզեց ար-
դարանալ Հէրիքնազը:

— Տղայի ագաթն է, կըխօսի, բայց աղ-
ջիկը պէտք է չխօսքան կենալ:

— Ինչի՞. ես թնչ մեղաւոր եմ, որ Աստ-
ւած ինձ աղջիկ է ստեղծել: Էս լեզուն էլ
ինչի՞ համար է, որ չըխօսեմ:

— Լսո՞ւմ ես, Սրգուման, թնչ է ասում
մեր աղջիկ պարոնը:

— Շատ ըղորդ է ասում, ես ու իմ Աստ-
ւածը:

— Հիմա կըշտկես. էդպէս է մարդոց խա-
սիաթը. հիմա սա սուտ էլ որ ասի, քեզ ըղղ...

Մարիամն ուզում էր ասել՝ «քեզ ըղորդ
կըթըլայ», բայց ցանկապատի դռան թխկոցը
նրա խօսքը ցակհատով կտրեց:

— Շամիրն է, Սրգուման, ասաց Մարիա-
մը, շուտ արա հեռացիր, թէ չէ, գլխներիս
վատ բան կըգայ: Այս ասելով՝ ճրագը հանգ-
ցրեց: Սրգումանը մթնից օդուտ քաղելով մի
վերջին համբոյր էլ տւաւ Հէրիքնազին ու հե-
ռացաւ:

Ե.

Մարիամը դեռ ևս դուռը բաց չարած՝
առաջ փեսացու հիւրի հետքերը փարդակեց:
Վերջապէս դուռը բացւեց, Շամիրը ներս մը-
տաւ, խուրջինը վայր բերաւ և սկսեց ձին
ման ածել բակումը: Այս երթևեկելու ժա-
մանակ մի ոստիւնի ձայն հասաւ նրա ական-
ջին: Չափարի չորացած փուշը ճըրթճըրթա-
լով՝ հասկացրեց Շամիրին, որ մի ծանօթ ոտք
նրան ճնշեց վերեւից:

Շամիրը որսորդ լինելով՝ սուր լսողութիւն և հոտառութիւն ունէր։ Բայց այդ ոչինչ. նա չափից դուրս կասկածոտ էր, չափից դուրս նախանձոտ և խաչին։ Մարդիկ սովորաբար արթուն ժամանակ շատ բան են ցնորում, երեւակայում, երազում, նայած թէ ով ինչպիսի հոգեկան տրամադրութիւն ունի, ինչ ձգտում, ինչ բաղձանք և վերջապէս ինչպիսի կիրք և բնաւորութիւն, ինչպիսի ճաշակ և հասկացողութիւն։ Մարդիկ կան, որ միշտ ուրախ են, միշտ զըւարթ։ Սրա պատճառն այն է, որ նրանք բարի սիրտ ունին, հանգիստ խիղճ և մի վառ երեւակայութիւն, որով իրական աշխարհից վերացած՝ միշտ իդէալական աշխարհում են ապրում։ Այդպիսիները որքան էլ անբախտ լինին, դարձեալ ամենից երջանիկն են։ Խելօք մարդը իր հոգու բոլոր յատկութիւնները իր բախտաւորութեանը կրճաւայեցնէ, իսկ անխելքն իր անբախտութեանը։ Այս վերջին տեսակիցն էր Շամիրը, որ երեւակայելու շնորհք ունենալով՝ միշտ վատ բան էր երեւակայում, փոխանակ արքայութիւն երեւակայելու, միշտ դժոխք էր երեւակայում, փոխանակ բարի հրեշտակի՝ չար սատանայ, փոխանակ բարեգործութեան՝ եղեռնադորժու-

թիւն, փոխանակ սիրոյ և փաղաքշանքի՝ ատելութիւն և կոպտութիւն։ Շամիրը միշտ երեւակայում էր, որպէս թէ իր կինն իրան անհաւատարիմ է գըտնըւել, սկսում էր պաօշները կծոտել, ատամները կրճըտացնել, կնոջ ննջաւանը չերթալ, ինքն իրան խռովել, մոռանալով որ իրականի մէջ այդպէս բան չըկալ, որ այդ իր ցնորքն է։ Մի մարդ, որ այդպիսի հոգեկան ցաւի ենթակայ լինի, թնչ կըլինի նրա դրութիւնը, եթէ երբ և իցէ իրականի մէջ իր ցնորքն արգարացնող մի փաստ գըտնի։ Եւ ահա փաստը գտնւած է, և նա մտածում է. «Ճրագը վառած էր, ինչո՞ւ յանկարծ հանգաւ։ Այս թնչ ճրթոց էր, թնչ թրքմփոց»...

Մարիամն իմացաւ, որ մարդը մի բանի հոտ է առել, և սկսեց հարց ու պատասխանով իր դատավճիռը յօրինել։ Հերիքնազը բարկանում էր ինքն իրան, և իր մէջ որոշում էր, որ եթէ բանը գէպի վատը երթայ, ինքը կասէ ուղղակի, որ այս ինչ տղային պիտի ուզի, ինքն է հրաւիրել նրան, այստեղ Շամիրի միջամտութիւնն աւելորդ է։ Մարիամը մտածեց, որ իր յարաբերութիւնը սովորականից չըփոխէ և զօռով ինքն իրան չըմատնէ։ Տեսաւ որ մարդը շատ է ուշանում, գնաց ձին առաւ ձեռիցը, ասելով, բաւական չէ, քանի ման

ածես, գնա Հանգստացիր, յոգնած կըլինիս: Մարիամը ձին քաշեց գոմը, իսկ Շամիրը մնաց տեղն ու տեղը փէտացած:

Մի բուդալա *) տղայ էր Շամիրը, երբեկաւ այս գիւղը, ուր նօքարութիւն էր անուամի քանի տարի սրա նրա մօտ: Մարիամին խորհուրդ տւին, որ Շամիրին ուզի, նա էլ ուզեց միամտաբար, չիմանալով թէ ինչ կուպիտ մարդու հետ պիտի գործ ունենայ: Երբ որ նօքարը տանտէր և աղա դառաւ, սկսեց բռնակալի բնաւորութիւն ստանալ: Մարիամին դուր չեկաւ մարդու վարմունքը և օրէցօր սկսեց պաղիլ: Երբեմն փորացաւ, երբեմն սրտացաւ ունիմ ասելով, քրոջ մօտն էր քնում և մարդուն մենակ թողնում: Սկզբումը Շամիրը հաւատում էր կնոջ ասածին, բայց յետոյ տեսաւ, որ կինն իրան չի սիրում: «Եթէ ինձ չի սիրում, մտածեց նա, ապա ուրեմն մի ուրիշին է սիրում»: Այս անտեղի կասկածը իր համար ցաւ շինեց Շամիրը: Նա սկսեց ամեն մի հեռու տեղ գնացած ժամանակ երկար միջոց նշանակել, իսկ ինքը վաղօրօք երեւիլ, երբեմն մէջ գիշերին, երբեմն փոքր ինչ ուշկամ

*) Բ ու դ ա լ ա — անտուն, անտեղ, միայնակ, սալթ:

վաղ, որ կնոջ մօտը մարդ գտնէ, բայց երբէք չըլաջողեց նրան այդպիսի մի բանի հետք նշմարել: Այս անյաջողութեան համար նա փոխանակ ուրախանալու, սաստիկ բարկանում էր, որ աշխատանքն ի գուր էր անց կենում: Բարկութիւնը երբեմն այնքան սաստիկ էր լինում, որ մի սուտ առիթ գտնելով՝ ծեծում էր կնոջը: Այս անգամ ահա ուրախ էր, որ կարողացաւ մի բան նշմարել, բայց թնչպէս սկսէր գործը, քանի որ ոչ ոքի երես չըտեսաւ: Մտածեց, որ լռէ մի առժամանակ և Մարիամին նշմարել չըտայ, որ ինքը մի բանի հօտ է առել, և լռեց, բայց վայ էն լռելուն, որ Շամիրը լռեց: Արտաքուստ էր միայն այդ լռութիւնը, իսկ ի ներքուստ տանջում, մաշում էր ինքն իրան զանազան ցնորքներով: Ներս գնաց վերջապէս և շնթուկեց իր համար գցած տեղումը:

2.

Արգումանը գնաց: Տղայոց մօտ հասաւ թէ չէ՝ զարթեցրեց նրանց, թէ վեր կացէք, եզինքը կըցրւին, կըկորչին: Նոյն օր հախսը իրանն էր, այսինքն՝ իր համար պիտի վարէին: Առաւօտեան արշալոյսը բացւեց թէ չէ՝ եզինքը

հաւաքեցին, ականեցին և ջոկջրկելով տարան լրծելու:

—Արգուման, որ տափդ պիտի գնանք, հարցրեց մաճկալը այնպիսի բարձր ձայնով, որ կարծես Արգումանն իրանից մի վերստ հեռու լինէր:

Այս գիւղացիք սովորութիւն ունէին խիստ բարձրաձայն խօսելու: Նոյն իսկ միմեանց կից մի օջախի չորս կողմով նստած ժամանակ այնքան բարձր են խօսում, որ խամ մարդը կը կարծէ, թէ խօսողի զրոյցընկերը նրա կողքին չէ նստած, այլ կամ կտրին է, կամ մի այլ սենեակում, միջնապատով անջրպետած իրանից: Իսկ հայերէն չիմացողը կը կարծէ, թէ սրանք ոչ թէ խօսում են սիրով, այլ կռոււմ են, և մի մեծ վէճ կայ իրանց մէջ: Ինչ աւել կուզի, որ վէճ ու կռիւ եղած ժամանակ էլ խօսելու ձայնն այնքան է բարձրանում, այնպիսի բղաւոց ու ճղաւոց է լինում, որ ինչքան չափազանցացնես, դարձեալ իսկականի ստւերը կըլինի:

—Վերի հողերը, ձաղարանց տափը, պատասխանեց Արգումանը աւելի մեղմ ու տխուր եղանակով:

—Հըմ... գիշերս կռւիէրազ եմ տեսել...

—Երազ էլ որ տեսած չըլինիս, էլի կռիւը կըլինի, եթէ լինելու է:

—Գնանք, հրամայեց մաճկալը և գուրթանը ճրլըստալով գնաց դէպի ձաղարանց Թաթոսի տափը:

Մենք մի առած ունինք, որ ասում է. «Խովիդդ սուր է, բայց հանդը բաժանովի է»: Այս առածը խեղճերն են ասել, իսկ իշխողներն ուրիշ առած են ունեցել, որ է՝ «Քաջերի սահմանը—իրանց գէնքն է»: Գիւղացիք սովորութիւն ունին վարելու հողը բաժանելու իրանց մէջ ամեն տասը կամ տասնհինգ տարին մէկ անգամ. բայց ամեն անգամ հեշտութեամբ չեն բաժանում, քիչ հողատէրերը սկսում են կռւել շատ բաժին ունեցողների հետ, և եթէ մի կերպ բաժանում են, աւելի ուժեղները թույլ չեն տալիս իրանց հողին ուրիշը մօտենալ: Նրազած օջախների հողերը վարում են զօրեղները և նրանց վերջին միակ շառուիղը չափահաս դառնալով հող չի ունենում վարելու: Այսպիսիներին քեօխւան մի կերպով պահպանում է, աւելի հող ունեցողներից մի կտոր տալով, մինչև օրինաւոր բաժին լինելը: ձաղարանց Թաթոսը Արգումանի հօր բաժինը սեփականել էր, քեօխւան էլ հրաման էր տրւել Արգումանին, որ գնալ նրա տափերից մէկը վարէ: Հիմա տեսնենք ինչ է գուրս գալիս սրանից:

Գուժանը տեղ հասցրին և հաղիւ հինգ վեց ակօս էին արել, յանկարծ գիւղի մէջ մի շփոթմունք ընկաւ:

— Ա՛գա, Մարտիրոս, Կիրակոս, Հասէք, մեր տափը վարում են... Մէկ տեսէք՝ էդ ո՞վ է, էդ աչքերն արնով լցւածը. մեծ պատառն ականջը թողէք: Այդպէս բղաւեց, գոռաց մի թէև ալևոր, բայց բաւական ժիր ու առույգ մարդ: Սա ինքն էր ձաղարանց տան նահապետը՝ Թաթոսը, որ տասը, տասներկու տղայ ունէր, մի այդքան էլ եղբօրորդէք և երկու այնքան թոռներ...

— Ել ո՞վ պիտի լինի, Արզումանն է. բա երեկ չըլսեցիք, որ քեօխւիցը տափ էր ուղում, նա էլ մեր տափը նշանց տըւաւ, թէ գնա՛ վարի: Այդպէս խօսեց Թաթոսի տղան, որով ուղեց ցոյց տալ, որ քեօխւէն էլ իր հօրը մարդու տեղ չի դնում, նրանից չի վախենում, չընայած, որ Թաթոսն է նրան քեօխւա շինել, և երբ ուղենալ, կարող է դուրս անել:

— Տօ ես քեօխւի օխտը պորտը, կնիկն ու մէրը, մեռելն ու կենդանը... Տօ, ես դող Արզումանի համար եմ փուշ կտրել, տակոի հանել, քարեր հաւաքել, խամհատել, որ նա գնալ էսօրւան օրը իմ մուլքը ձեռնիցս խլի...

Տօ, հասէք, բա դուք տղամարդիկ չէք, էլ ո՞ր օրւալ համար եմ ձեզ հաց տըւել պահել...

Այսպէս՝ ալևոր գաղանը, որ իր կեանքումը արդարութեան ու խղճի ձայն չէր լսած, ինչքան հայհոյանք գիտէր, անատամ ըռխիցը թափեց և տասը քսան բռի արջերի գրգռելով՝ ուղարկեց Արզումանի դէմ: Բոպէ չանցած, տեղ հասան. նրանք չէին գնում, ալ վազում էին, կարծես առջևները փախչող կար, պիտի բռնէին:

— Հօօօ, հօ: Ոտն արէք, տղէք, գոչեց սովորական ձայնով մաճկալը: Արզուման, էս արջերը մեզ վրայ են գալիս: Արի դուրս գցենք գուժանը, ասենք՝ ախպէր, ձեզ ըլի, չենք ուղում, միայն թէ մի արիւն չանէք էստեղ:

— Յետո՞յ, էլ էս փափախը գլխիս հարամ չի՞ ըլիլ, էլ թնչ երեսով պիտի մտնեմ գեղը, որ մի քանի թագի-թուլա պիտի ինձ վախեցնեն, փախցնեն: Տո՛ւր ինձ էդ սրբիչը, ասեց Արզումանը բարկանալով և մաճկալի ձեռնից առնելով սրբիչը, որ մի հաստ գազանակ է՝ ծալըր ակշաճե երկաթ հագցրած: Մի կտտաղութիւն եկաւ քաջ երիտասարդի վրայ, ջանն սկսեց դողդղալ կալոդ փահլեանի պէս և այնպէս էր զգում ինքն իրան, որ ոչ թէ քսան,

այլ լիսու՛ն մարդ անգամ չըպիտի կարողանալին հովութիւն տալ նրա տաքութեանը:

Տափատէրերը հասան թէ չէ՝ գութանն ակօսից հանելով՝ գցեցին քարերի ու փշերի մէջը: Հնար չեղաւ այստեղ բան հասկացնելու. ամենքն էլ սկսեցին գոռալ, գոչել միաձայն, ոչ մէկը միւսի խօսքը չէր լսում: Եղան էր, որ վրայ էր գալիս սրա նրա գլխին. էլ բըհեր ասես, դադանակ ասես, չօմաղ ասես, մահակներ ու ձողիք նորեկների կողմից իջնում էին սրա նրա գլխին ու թիկունքին:

Հոտաղները մի մի ճիւղտից աւելի բան չունէին, իսկ դրանով թնչ կարող էին անել, ճարահատուած փախան, որ իրանց անգէնք գլուխն ազատեն: Մաճկալի գլուխը վաղուց արդէն կիսել էին և գցել ակօսի մէջը: Խեղճ կենդանիները, այն անբան ու անմեղ եզն ու գոմէշներն անգամ չազատուեցին հաստ մահակների հարւածներից...

Իսկ Արզումանն ինչ էր այս արիւնհեղութեան ժամանակ: Նա սկզբումն սկսեց ձեռի սրբիչովը միայն ինքն իրան պաշտպանել, ինչպէս մի վահանով, աշխատելով հասկացնել եկողներին, թէ ինչ իրաւունքով է վարում այդ տափը, բայց տեսնելով, որ նրանք իրանից բան իմանալու չեն եկել, այլ ուղ-

ղակի սպանելու, երբ տեսաւ մաճկալի կիսաշունչ ընկնիլը, այնուհետեւ սրբիչի զօրութիւնը պաշտպանողականից դարձրեց յարձակողականի, և մի քանի ըոպէի մէջ կռուողները բոլորն էլ վալը թափուեցին հասած թութի նման:

Գիւղից նորանոր մարդիկ եկան իբր կռւի առաջքն առնելու համար, բայց էլ թնչ օգուտ, ինչ որ լինելու էր, արդէն եղել էր: Երեք մարմնի մէջ այլ ևս հոգի չըկար, մի քանիսը հոգեվարք էին և միւսներն էլ վտանգաւոր վիճակի մէջ: Գիւղացիք սալլեր բերին և իրանց քաջերին տարան որին առողջացնելու և որին թողնելու:

Է.

Կարելի է արդեօք նկարագրել այն պառաւ մօր գրութիւնը, որ այս ըոպէիս իմացաւ, թէ իր մինուճար որդին, իր ազիզ մագիզ, մուրազի վրայ եղող Արզումանը այնպիսի մի փորձանքի է հանդիպել, որ նրա տեսութիւնից յաւիտեան պիտի զրկւի ինքը:

Խեղճ պառաւը գութանաւորի համար առաւօտեան կերակուրը բերելիս ճանապար-

Հին տեսաւ, որ շատ մարդիկ են վազում դէպի իրանց գութանը, սկսեց կասկածել, թէ էս ինչ է պատահել արդեօք, չըլինի՞ թէ իր երեխի գլխին մի փորձանք է եկել:

Պառաւ Շողակաթը մի տարօրինակ կասկածոտ բնաւորութիւն էր ստացել զանազան դժբախտ դէպքերից յետոյ: Ամեն մի անակընկալ փորձանք պատահած ժամանակ միշտ իր Արզումանին էր միտը բերում, թէ նա էլ այնտեղ չէր արդեօք, չըլինի՞ թէ նրան էլ է մի բան պատահել: Երբ որ լսում էր, թէ այս ինչ գիւղումը մարդ են սպանել, այն ինչ գիւղումը մարդ է խեղդւել, մէկը ձիուց կամ ծառից վայր է ընկել, մէկը սալի տակն է ընկել, մէկին շունը կծել է, մէկը վարազի բերանն է ընկել, կամ արջի ճանկը և այլ այսպիսի մի բան, նա անդադար ախ ու վիշ էր անում և շարունակ վարանման մէջ էր լինում մինչև Արզումանը տուն էր գալիս ողջաւորով: Եւ այս շատ բնական էր: Ութ որդի էր մեծացրել խեղճ պառաւը, և դրանցից միայն մէկն ունէր այժմ: Միւս եօթը եղբայրներն ամենքն էլ քսան քսաներկու տարեկան ժամանակն էին մեռել, որը նշանած, որը նշնելու, և բոլորն էլ ոչ բնական մահով կամ հիւանդանալով՝ այլ մէկ մէկ փորձանքի

Հանդիպելով, ոչ մէկին մի սառը ջուր չէր տւել վերջին անգամ իր մայրական ձեռքով, ոչ մէկի գերեզմանին չէր արժանացել:

Չարմանալի բան է, արդարև: Միայն զինւորների կեանքը չէ վտանգի ենթակայ պատերազմի ժամանակ: Այն մարդոց կեանքն ևս շարունակ ենթակայ է վտանգի, որոնք լանդըզնութիւն ունին մարտ մղելու կեանքի անիրաւ և անարդար Հանգամանքների դէմ: Որքան անիրաւութիւն և անարդարութիւն կայ օրէնքով ու ադաթով անվտանգ վիճակի մէջ դրած: Ո՞վ կարող է դրանց ձեռք տալ և անպատիժ մնալ: Արզումանի եօթը եղբայրներից երեքը բանտումն էին մեռել, և երեքն աքսորանքում, և այս՝ իրանց անվեհեր և ազնիւ սիրտ ունենալուն համար միայն:

Խեղճ պառաւը ճանալի մէջտեղը նստեց, որ խելքը գլուխը ժողովէ, մէկ լաւ իմանայ, թէ էս ինչ բան է: Անցուդարձ անողներից ոչ ոք նրան պատասխան չըտւաւ մինչև մօտեցան մեռելների սալերը, որոնց չորս կողմը պատած մարդոց լաց ու կոծի աղաղակը զրմբացնում էր մօտակայ սարերն ու ձորերը: Յուզարկաւորներից մինը, որ Արզումանի ազգականներիցն էր, մօտեցաւ պառաւին և բանի էութիւնը հասկացնելով, աւելացրեց, որ

Արգղամանին չստիպէ տուն գալու:

— Ուրեմն էլ չբախտի տեսնեմ ես իմ որդու երեսը. հարցրեց պառաւը:

— Կըտեսնես, ո՞վ է ասում որ չես տեսնիլ, բայց հիմա հարկաւոր չէ տեսնել: Սպասիր մութն ընկնի, այն ժամանակ մի բան կըմտածեսք...

Շողակաթ նանի խելքը գլխիցը թռաւ և սկսեց խենթի նման զանազան ձեւաշարժութիւններ անել պարելու նման և իր գիտցած երգերից մի խառնուրդ կազմելով մըմնջել և ձայնն աստիճան առ աստիճան բարձրացնելով՝ սկսեց բառանչել ու գոչել—Արգղաման, Արգղաման: Այս անունն այնքան կրկնեց, մինչև ուժից ընկաւ բոլորովին և մեկնւեց ճանպի մէջտեղը: Մօտը եղող երիտասարդը շալակեց կիսաշունչ պառաւին և տարաւ տուն:

Բ.

Գիւղի մէջ տուն չըկար, որ կամ սպանւածների և կամ վիրաւորւածների ազգական չըլինէր, այս պատճառով ամբողջ գիւղը սուգի մէջ էր մտել:

Բըռի գիւղացիք, անսանձ կրքերի տէր.

մի որ և իցէ կիրք սաստկացած ժամանակ խելքներն իսպառ կորցնում են, եթէ միայն կորցնելու խելք են ունենում: Խելք՝ է, որ տիրում է մարդուս կատաղի կրքերի վրայ, բայց այդ տիրող խելքից զուրկ են գիւղացիք: Տեսել եմ աչքովս, որ մայրը որդու առջևը չորած, հայրը՝ ձեռները խաչած, աղաչում են եղել իրանց որդուն, որ կռւից յետ կենայ, բայց դրանով աւելի են կատաղացրել նրան: Անասունների մէջ միայն կարելի է սրա նմանը տեսնել: Երկու ցուլ, երկու գոմէշ, երկու շուն կռւելիս հնար չի լինում անջատելու, որքան խփում ես, այնքան աւելի են կատաղում: Բայց և անասունների նման էլ կռււից յետոյ չափից դուրս խեղճանում են, գայլից դառնում ոչխար և ակամայ գալիս ես այն եզրակացութեան, որ սրանք ֆիզիքապէս հրսկաներ լինելով հոգով ու մտքով կատարեալ երեխաներ են և չար երեխաներ:

Կռւից յետոյ շատ տխուր կերպարանք ստացաւ Դ. գիւղը: Ոչ մէկի բերնին ժպիտ չէր երևում, ոչ մէկի երեսին ծիծաղ չէր գալիս: Մարիամն ու Հէրիքնազը նոյնպէս մասնակից էին հասարակաց ախրութեանը: Թէպէտ մի կողմից ուրախ էին, որ Արգղամանը յաղթող էր հանդիսացել և ոչ յաղթւող, բայց

միւս կողմից էլ գիտենալով, որ այդպիսի յաղթութեան մրցանակը աքսոր է ու մահ, սաստիկ տխրում էին:

Շամիրը գէպի ոչ ոք համակրութիւն չէր ցոյց տալիս, նա կուգէր որ գիւղացիք բոլորն էլ մէկ տնգամից իրար ջնջեն և ինքը մենակ մնայ: Բայց և այնպէս սաստիկ նախանձում էր, որ ինքը մասնակից չի եղել կռւին, որ իր վրայ էլ խօսեն:

Սպանաճններից երեքը ձաղարանց տանիցն էին: Երեք մեռել մէկ անգամից տանը տեսնելով՝ Թաթոսը քարացել էր, չէր իմանում որի վրայ սրգայ, որի գլուխը լայ: Նրա խղճմտանքը տանջւում էր, որովհետեւ ինքն էր գրգռողը, ինքն էր նրանց ուղարկողը: Բայց իր անձը գերդաստանի մէջ արգարացնելու համար, Արզումանին էր անիծում, ստիպում էր քեօխին, որ նրան բռնել տայ անպատճառ և արգարագատութեանը լանձնէ: Քեօխան մարդիկ ուղարկեց տեղական ոստիկանութեանն իմաց տալու, որ դան վերահասու լինին գործի հանգամանքին: Կասկած չրկար, որ իշխանութիւնը գալուն պէս պիտի բռնել տար Արզումանին: Բայց Արզումանին արդէն փախցրել էին նրա բարեկամները: Այնտեղից մօտիկ էր Խրամը, որ հաղարաւոր փա-

խըստական կարող էր պատսպարել: Մինչև իր թշնամիքը բռնելու մասին կրճատածէին, նա արդէն Խրամի զառիվայրից ցած էր իջել, և ո՞վ կարող էր այլ ևս իմանալ թէ ո՞ր քարափի կամ ո՞ր քարայրի մէջ է գտնւում:

Թ.

Արզումանն իր անձի ապահովութեան համար երկիւղ չունէր ամենևին: Որտեղ մի ընկերութիւն կար գողերի—նրան յայտնի էր, որտեղ մի փախստական կար, նրա ծանօթն էր: Քանի որ այս փորձանքին չէր հանդիպել, նա փախստականների հետ ընկերութիւն անելիս, կասկածում էր, թէ մի գուցէ նրանք իրան բանի տեղ չէին գնում, որովհետեւ կարողացել են իրանց անունը հռչակել ամբողջ նահանգի մէջ և իշխանութեան ուշադրութիւնը գրաւել: «Նա ի՞նչ եմ արել, ասում էր ինքն իրան. մի քանի ձի եմ գողացել, այն էլ դեռ հաստատ չըղիտեն, որ ես եմ գողացել: Այնպէս էր մտածում Արզումանը և նախանձով նայում նշանաւոր փախստականների վրայ. բայց հիմա,

երբ փախստականի վիճակի ենթարկւած գտաւ իրան, նոր զգաց, որ իր նախանձն ի գուր էր եղել: Քիչ առաջ գուցէ ուրախ էլ լինէր, որ առիթ կունենայ պատժելու անխղճմտանք և անիրաւ մարդկանց, բայց ոչ հիմա, երբ սկսել էր սիրել և սիրւել: Քնած թէ արթուն միշտ Հէրիքնազին էր տեսնում, որ արտասուելից աչքերով ասում էր նրան. «Այս քնն արիր, Արզուման. նրա համար խլեցիր իմ սէրը, որ ինքդ չըվայելես և ուրիշներին էլ արգէլք լինիս»...

Եօթն օր կարողացաւ Արզումանը հեռու մնալ գիւղից և ոչ ոքի աչքում չերևալ: Նա գնաց իր ծանօթ զաչաղների մօտ, որոնք մեծ սիրով և ուրախութեամբ մեծարեցին նրան, բայց այս հանգամանքը չըմխիթարեց նրա վշտալից սիրտը, չըլագեցրեց նրա սիրոյ քաղցը:

Մէկ գիշեր փախստականներն իջևանեցին Խրամի Նախշուն անւանւած աւերակ վանքումը: Միւս օրը այդտեղից պիտի շատ հեռու տեղ գնային: Արզումանն ուզեց օգուտ քաղել գիւղի մօտաւորութիւնից և գնալ Հէրիքնազին տեսնելու: Սրա համար հրաման ուզեց աւագակապետից:

— Դեռ վաղ է, պատասխանեց աւագակապետը: Թող փոքր ինչ հանգարտեն գեղը-

ցիք, մեռելներին մոռանան, սաղերի հոգսը քաշեն, նրանց խըղճան, այնուհետև գնա՛, բան չեմ ասիլ: Բայց հիմա, ով գիտէ՝ ձաղարանց Թաթոսը քանի պաշապան է դրել գիւղի չորս կողմում, որ քեզ կամ բռնեն, կամ սպանեն:

— Ինչ ուզում է լինի, ես պէտք է գնամ, պնդեց Արզումանը. թէկուզ կտոր կտոր անեն, պէտք է գնամ, խօսք ունիմ տւած մէկին, կամ պէտք է խօսքս լետ առնեմ, կամ կատարեմ:

— Հասկանում եմ, ասեց աւագակապետը ժպտալով: Որ էդպէս է, հետդ երկու ձիաւոր էլ տար, թող գան գեղի տակին թաք կենան, եթէ մի բան պատահի, օգնութեան հասնեն:

— Հարկաւոր չէ, ես մենակ կերթամ, միայն ինձ մէկ լաւ ձի է հարկաւոր:

— Իմ սեւ ձին քեզ փէշքէշ: Սեւը լաւ է, գիշերն էլ մութն է:

Այս խօսակցութեան ժամանակ լանկարծ մի մարդ ներս մտաւ և մի խումբ մարդոց հանդիպելով տեղն ու տեղը մեխւեց: Նորեկը ութ իննը հրացանի խողովակների պսպղաւը իր գէմը տեսնելով և նրանց ասելը, թէ «թարփանմա, վուրդըր» (չըշարժւիս, խբեցինք), մնաց շըշկլւած, մինչև վերջապէս

խելքը գլուխը ժողովելով, հասկացրեց, որ ինքը վտանգաւոր մարդ չէ, այլ մի որսորդ է: Այս որսորդը Շամիրն էր, որին իսկոյն ճանաչեց Արզումանը և աւագակապետին հասկացրեց թաքուն, որ այս գիշեր մինչև առաւօտ նրան իրանց մօտ պահեն:

Շամիրին հրաւիրեցին նստել և ասացին իրան, որ նա մինչև լոյս իրանց գերին է, չեն կարող դուրս թողնել:

— Առանց ձեր ասելու էլ, ես մինչև առաւօտ դուրս գնալու միտք չունիմ, ուրեմն ոչ թէ ձեր գերին եմ, այլ ձեր պատուական հիւրը, կամ կուգէք դուք եղէք իմ հիւրը: Ես մի այժեամբ եմ սպանել և բաւական միս ունիմ պարկիս մէջ, եթէ ախորժակ ունիք, կրակ վառեցէք, խորոված անենք:

Շամիրի փորը աւելի նրա համար էր ցաւում, որ կրակ վառելով այս մարդոց երեսը լուսով տեսնէ, և շատ էր փափաղում Արզումանին էլ սրանց մէջ տեսնել, որ միւս օրը երթալ գիւղումը պարծենալ, թէ ինչպէս ինքը հիւր է եղել աւագակապետի մօտ, ուր տեսել է և Արզումանին:

Աւագակները կրակ վառեցին, բայց Շամիրն իր նպատակին չըհասաւ: Արզումանն արդէն գնացել էր, և այնպէս գնաց,

որ Շամիրը չիմացաւ, որ նրանցից մի մարդ պակասեց:

Ասած է՝ «Գողն քնչ կուզի,—մութը գիշեր»: Բայց մեր Արզումանին, որ այս գիշեր հարցնէիր, թէ քնչ կուզես, կասէր՝—Շամիրի բացակայութիւնն իր տանից: Մութը գիշերովը նա այնքան չէր ուրախ, որքան այդ յաջող դէպքովը: Նա եօթն օր սպասել էր միայն Շամիրի երկիւղից, թէ ինչպէս երթալ Հերիքնազի մօտ, և շատ մտածելուց յետոյ այս միակ հնարքը գտաւ միայն, որ ուղղակի երթալ Շամիրի մօտ և նրա պաշտպանութիւնը խնդրէ գիւղ մտած ժամանակը, այսպէսով նա միշտ հնար կունենայ և իր Հերիքնազին տեսնելու: Բայց հիմա Շամիրի գալը նրան գալթակղեցրեց և իր մտադրութիւնն ուրիշ օրւան ձգեց:

Քանի որ այս փորձանքին չէր հանդիպել, Արզումանը մտքումը դրել էր Շամիրին մօտենալ, և նրա հետ մի քանի օր որսորդութեան երթալով՝ բարեկամանալ և խնդրել նրանից Հերիքնազի ձեռքը, բայց հիմա, երբ հանգամանքն ուրիշ կերպարանք ստացաւ, էլ քնչ առաջարկութիւն կարող էր անել:

Մարիամը նույնպէս լուսով էր, որ մօտ օրերս նշանադրութիւն կըլինի, և ինքն էլ

ազատւած կըլինի Շամիրի անտեղի կասկած-
ներէց, բայց հիմա կարող էր ասել, թէ երբ
և իցէ ունեցել է այդ միտքը, և մինչև ան-
գամ պատիւ է ունեցել մէկ անգամ էլ, գի-
շերով հիւրընկալել Արզումանին: Իսկ Հէրիք-
նազը լաւ էր համարում, որ Արզումանը անու-
նով միայն փեսայ լինի, քան թէ ուրիշն
ստուգապէս: Նա Արզումանին պատահած գի-
շերից յետոյ ձեռներն ստէպ ստէպ շրթունք-
ներին էր մօտեցնում, կարծելով, որ միայն
իրան է զգալի, թէ որքան քաղցր են սիրա-
կանի շրթունքներին դիպած տեղերը: Նա
համբուրում էր իր ձեռները, համբուրում էր
Արզումանի բերած խնձորները, հոտ քաշում
նրանցից և այնպէս անարատ պահպանում:
Չէր ուզում ուտել, որ իր սիրականի յիշա-
տակն աչքիցը չըհեռանայ:



Երկու քոյրերը դարձեալ գըգւել էին
միմեանց մի և նոյն սրահի անկողնումը, որի
մէջ պատահել էր առաջին անգամ Արզումանը:
Երկուսն էլ իբր թէ քնած էին, բայց ոչ մէկի
քունը չէր տանում:

— Հէրիքնա՞գ:

— Հը՛:

— Ախչի, չես քնէլ:

— Քունըս չի տանում:

— Ինչք՞ չի տանում:

— Տանում չի էլի. համ զարթուն եմ,
համ աչքերս խփած էրազներ եմ տեսնում:

— Ի՞նչ ես տեսնում:

— Ինչ եմ տեսնում:

— Հա, թի՛նչ ես տեսնում:

— Ո՛վ գիտէ. ինչ ասես տեսնում եմ: Իբր
թէ ես տղայի հագուստ ունիմ հագած, զէնք
ու զրահ ունիմ կապած վրաս, նստած եմ մի
թռչկան ձիու վրայ: Մի սարի գլխի չորս յար-
կանի քօշք ու սարահի եմ շինել տըւել, չորս
կողմովը բերդի նման պատ եմ քաշել տըւել:
Միայն մի դուռն ունի, երկաթէ դուռը:
Դռան երկու կողմին մի մի առիւծ կան կա-
պած: Յետոյ շատ բան եմ անում: Ամբողջ
աշխարհքը դողում է ձեռիս...

— Ով որ գալիս է քեզ ուզելու, գլուխը
կտրել ես տալիս:

— Եդ էլ եմ անում, էլի ուրիշ շատ բան
եմ անում:

— Արզումանին տանում ես մօտըդ:

— Տանում եմ, բայց թի՛նչպէս:

—Չըզիտեմ, դ՞ու առա, թնչպէս ես տանում:

—Արզումանին բռնում են: Մի մեծ հրապարակի վրայ սիւներ են կանգնեցրել, կախաղան են պատրաստել, ուզում են կախ տալ, ինչպէս Ահմադին կախեցին: Շատ մարդիկ կան հաւաքւած, ամենքն էլ լուռ ու մունջ թամաշա են անում, ոչով սիրտ չի անում ձայն հանի, ոչով չի օգնում խեղճին: Հէնց էդ ժամանակը ես լոյս եմ ընկնում իմ թռչկան ձիու վրայ, մի ձեռիս վահան, միւս ձեռիս թուր, աջ ու ձախ կողմիս իմ առիւծները: Ընկնում եմ էդ ահագին բազմութեան մէջ, որին ես, որին իմ ձին, որին իմ առիւծները... Տէր Աստուած, ինչ արիւնհեղուծիւն ենք անում, ինչ ջարդ տալիս. ազատում են միայն վաղօրօք վախճողները: ձաղարանց Թաթոսն էլ է ուզում փախչել, բայց քեալլի միջին էնպէս խփում եմ թրովս, որ միջիցը հաւասար կիսւում է, կէսը մի առիւծիս բերանն է ընկնում, կէսը՝ միւս...:

—Յետոյ, մնում է մենակ Արզումանը:

—Հա, էդ լաւ իմացար: Նրա համար հետս մի ուրիշ ձի եմ ունենում տարած. նստում է էդ ձիուն, ու միասին թռչում ենք դէպի իմ սարահին:

—Նա էլ նոր ճանաչում է, թէ ով է իր ազատողը:

—Հա, նա առաջ կարծում է, թէ ես Սուրբ Սարգիսն եմ. երբ տանում եմ մօտս, նոր տեսնում է որ ես եմ:

—Ով գիտէ, էրազումդ էլ հէնց միշտ Արզումանին ես տեսնում:

—Ինչպէս չեմ տեսնում. ամեն գիշեր տեսնում եմ. բայց տեսնելիս էնպէս ուրախանում եմ, որ իսկոյն զարթնում եմ, էլ չենք կարում իրար հետ խօսել:

—Բոլ բանըդ շատ դժար է, Հերիքնազ:

—Դու ծիծաղիր վրաս, ի հարկէ դժար է:

—Ձեմ ծիծաղում, բայց Արզումանը քո թնչն է, որ նրա համար էդքան հալ ու մաշ ես լինում: Աղջրկայ աղաթն է, հազար տղի համար կասեն, վերջը մէկին կրտան: Հիմա նա որ չէլաւ, ուրիշին չըպիտի ուզէս:

—Մարիամ ջան, որ մի բան ասեմ, հօջէս ծիծաղիլ վրաս:

—Ինչի՞ պիտի ծիծաղեմ, ասա:

—Ես սիրել ուզում եմ, բայց մարդ չեմ ուզում, սէրը շատ քաղցր բան է, բայց մարդն աստելի: Դու քո օրումը լաւ մարդ տեսած կ'աս, մէկը մէկէլից վատթար արարածներ են:

—Միթէ կնանիքը լաւ են, միայն մարդիկն են վատ:

—Երկուսն էլ վատ են, երկուսին էլ չեմ սիրում:

—Լաւ, բա ասում ես սիրել եմ ուզում, էլ թնչպէս պիտի սիրես, ո՞ւմ պիտի սիրես, քանի որ մարդն էլ է վատ, կնիկն էլ:

—Եդ լաւ չեմ իմանում դեռ, մի լաւ կըմտածեմ, յետոյ քո պատասխանը կըտամ:

—Լաւ, եդ յետոյ կասես. բայց հիմա էս ասա. կնանիքն ինչո՞վ են վատ:

—Կնանիքը նրանով են վատ, որ իրանք իրանց բանի տեղ չես դնում, իշի նման ամեն օր ծեծւել են ուզում և պարծենում էլ են, որ ծեծող մարդ ունին: Ինչ օրը չէր ասում Հոռոմը, թէ էն մարդն թնչ տղամարդ է, որ կնկայ գլխիցը մահալը պակսեցնի: Ի՞նչպէս չատես էդպէս կնկանը, որ ծեծելն է տղամարդութիւն համարում:

—Հիմի քո ասելովդ ինձ էլ չպիտի սիրես, նրա համար որ ես էլ չեմ ձէն հանում, երբ որ Շամիրը ծեծում է ինձ:

—Չէ, քո բանն ուրիշ է: Շամիրը քեզանից զօռով է, դու որ ձէն հանես, նա աւելի կըծեծէ:

—Ո՞ւմ մարդը չի զօռով, ամենի մար-

դիկն էլ զօռով են: Բայց դու էս ասա, բա դու ինչո՞ւ ես սիրում Արզումանին: Մեր մարդիկը մարդ չեն սպանում, բայց նա մէկ օրումը երեք-չորս մարդ սպանեց:

—Արզումանը լաւ տղայ է, Մարիամ, դու չես իմանում, լաւ սրտի տէր է, լաւ հոգի ունի: Ես որ նրա տեղ լինէի, ոչ մէկին սաղ չէի թողնիլ: Ինչո՞ւ էին գնում կռիւ, ինչո՞ւ էին գնում նրան սպանելու. նա հօ զօռով չէր վարում, քեօխէն տըւել էր, նա էլ վարում էր: Չաղարանք քան զշուն շատ են, երեքը սատկեցին, տեղն էլի քսաներեքը կան. բայց Արզումանն իր մօր մինուճարն է: Մենք քառասուն օրավար տափ ենք ունեցել, ինչո՞ւ են խլել մեր ձեռիցը: Մեր Շամիրն ինչի՞ պիտի ամեն օր սար ու ջօլ ընկնի, ինչի՞ մեր տափերիցը մի քանիսն էլ նրան չեն տալիս, որ նա էլ վար ու ցանք անի, իր տանը նստի, էդպէս սար ու ձորում չըմեծանայ արջ կտրւի: Ոչինչ չեմ ուզում, մէկ ես մողղով լինէի, մեր վատ մարդկերանց մէկ լաւ խրատէի: Բայց հիմի ես մի խեղճ աղջիկ եմ, ինձ ո՞վ մարդու տեղ կըդնի:

—Ինչո՞ւ, հէնց հիմա էլ են վախում քեզանից: Ինչ օրը Շամիրն ուզում էր ինձ ծեծի, բայց դու որ աչքերդ վրան չըռեցիր, նա քո

ահիցը դուրս գնաց տանիցը:

— Սպասիր, Մարիամ, ես էնպէս բան պիտի անեմ, որ դեռ ոչ մի աղջիկ արած չըլիսի: Ճաղարանց ծուխը ես պիտի հանգցնեմ:

— Դու էդպէս ասա: Ճաղարանց Թաթոսը մտքումը դրել է, որ քեզ իր տղի համար ուզի:

— Ո՞ր տղի:

— Մադօի:

— Պընչեմ Մադօի վրէն. նա ինչանցու է, որ ես նրան մարդու տեղ դնեմ:

— Բա միտքըդ ի՞նչ է, մարդ չըպիտի ուղէս:

— Աստուած էն օրը մահ տալ ինձ: Երբ որ դուք կուգէք զօռով կշտներիցդ հեռացնել, էն ժամանակն էլ՝ Աստուած ողորմած է, ինչպէս լինի, ես իմ գլուխ կըպահեմ:

— Լա՛ւ, մի նեղանալ, հոգիս, ես հանաք եմ անում: Քանի որ ես ողջ եմ, ո՞վ կարող է քեզ ասել՝ «աչքիդ վերևն ունք կայ»: Միայն մի բանից եմ զարմանում ես, որ էդպէս շուտ սիրտդ կալաւ Արզումանին: Պէտք է նրան մըտքիցդ հանես, նրա աստղը թռաւ: Նա ինքը քեզ կասի, որ դու ուրիշ տղայ գտնես քեզ համար:

— Նա ինձ էդպէս բան չի ասիլ, ես չեմ հաւատում: Մենք նոր չենք սիրում մէկ

մէկու, կարծեմ Հէնց էդպէս ենք ծնւել մենք մեր մօրիցը: Ինչ որ խելքի եմ եկել, էն օրւանից դէսը նա ոչ մէկ օր աչքն ինձանից չի հեռացրել: Կուգես հաւատա՞, Մարիամ, կուգես՝ մի հաւատար, ես իմ տեսածը պիտի ասեմ: Շատ անգամ բաղի կամ ջրի ճանպին մտքովս անց եմ կացրել, թէ հիմա որ լետ մտիկ տամ, Արզումանին կըտեսնեմ: Յետ եմ մտիկ տըւել ու իսկույն երկուսս էլ կարմրել ենք երես երեսի գալով: Ես էլի շատ բանեմ նկատել, բայց քեզ չեմ ասել: Հիմա փորձանք էր՝ պատահեց: Հէնց համարենք թէ ինձ ուղեւուց լետոյ է պատահել: Քանի որ նա ողջ է, ես էլ կապրեմ, երբ որ նա, Աստուած մի արասցէ, կըմեռնի, ես էլ կըմեռնեմ: Աշխարհումս ո՞վ է սաղ մնացել, որ մենք մնաք. մի օր էլել ենք, մի օր էլ պիտի մեռնենք, լաւն էն չէ, որ արդար մեռնենք, անթառամ պսակին արժանանանք...

— Դէ որ էնքան շատ է ձեր սէրը, որ մէկ մէկու սիրտ, մէկ մէկու տեղ իմանում էք, աբա իմացիր, հիմա ո՞րտեղ կըլինի Արզումանը:

— Դու ծիծաղում ես ինձ վրայ, ես գիտեմ:

— Չեմ ծիծաղում, քո ազիդ արեւը, ես հաւատում եմ քո խօսքին: Ես հիմա նրա

Համար եմ հարցնում, որ իմ սիրտն ասում է՝ հիմա որտեղ որ է՝ Արզումանը կըգայ, դու թնչպէս ես կարծում:

— Երանի քեզ, որ էգպէս լաւ բան ես մտածում: Ո՛վ գիտէ նա հիմա որտեղ է, կամ ողջա՞ռողջ է. թնչպէս էլաւ, որ էդ կուռումը նա անվնաս դուրս եկաւ, կամ կուռը չըկոտըրւեց, կամ գլուխը չըպատռեցին, անկարելի է, որ մի բան պատահած չըլինի: Ինչ էլ որ լինի, դժար թէ նա հիմի սիրտ անի գայ:

— Խեղճ աղջիկ, ինչո՞ւ ես յուսահատւել... Մի վախիր, Արզումանը շուտ կորչող պտուղ չի, նրա ուշքն ու միտքը հիմա քեզ մօտ է:

— Եդ էգպէս կըլինի, բայց չէ՞ որ ձաղարանց տղէքը մի մի թըւանք առած նրա բոսուռնն են պահում, նա թնչպէս պիտի գեղը մտնի:

— Թէ որ գիտես նա էդքան վախկոտ է, էլ ինչք ես սիրում նրան: Ձաղարանց տղէքը նրան պէտք է քնած գտնեն, որ սպանեն, զարթուն ժամանակ նրան չեն կարող մօտենալ: Քնիր, քնիր, շատ մի մտածիր: Երազումդ կըտեսնես իրան, նա քեզ կասի, թէ հիմա որտեղ է:

— Բա ասում էիր՝ հիմա կըգայ որտեղ որ է...

— Ո՛վ գիտէ, կարելի է չեկաա...ւ, ասեց Մարիամը բարձրաձայն յօրանջելով: Այս յօրանջումը ազդեց և Հերիքնազի վրայ, նա էլ իր բերանը լայն բաց արաւ և օդի առատ հոսանք ներս քաշեց: Քնի հրեշտակը մօտեցաւ վերջապէս և իր հովանաւոր թւերի տակն առաւ մեր հիւրի-փարիներին:

ԺԱ.

Մարիամն ու Հերիքնազը քաղցր քնի մէջ էին, երբ մօտեցաւ նրանց Արզումանը: Լուռ ու մունջ նստեց մահճակալի մօտ և ղիմիշ չարաւ նրանց զարթեցնել: «Մի քիչ կընստեմ ու կերթամ», ասեց մտքումը, «չըզարթեցնեմ, մեղք են. բայց թնչ նշան թողնեմ, որ սրանք էգուց իմանան, որ ես եկած եմ էլել»: Մտածեց, որ մի թել կապի Հերիքնազի մատին: Տըրիսի թելի ծայրիցը կտրեց և անցաւ Հերիքնազի կողմը: Հերիքնազը կիսով չափ բացւել էր, ձեռները կուրծքին դարսել:

Արզումանը ձեռքը մեկնեց, բայց ձեռքն սկսեց դողդողալ, ինչպէս ասեղը մագնիսի

առջև: Յետ քաշեց կոշտացած ձեռքը և գլուխը մօտեցրեց, որ լեզուով և շրթունքներով վերցնէ Հերիքնագի քնքուշ ձեռնիկը: Բերանը բաց արաւ ու կամացուկ գրաւ Հերիքնագի թաթիկի վրայ: Նրա գլուխը ծանրացաւ, եւ չըկարաց վեր վերցնել: Հերիքնագի երազը այդ ժամանակ փոխեց իր կերպարանքը: Նրան թւում էր, որպէս թէ մի ծառի տակ պառկած է մէջքի վրայ և մի փոքրիկ երեխայ իր կուրծքի վրայ կանգնեցրած՝ խաղացնում է: Երեխան թրութրուում է, ինքն էլ «պապա՛ր պապա՛ր» է երգում: Բայց հետըզհետէ սկսեց յոգնիլ, շնչառութիւնը ծանրացաւ: Ուզում էր թողնել երեխային և գլուխը բարձրացնել, բայց չէր կարողանում: Երազական տեսութիւններն սկսեցին արագ արագ փոփոխուիլ. նրան ճնշում են, խեղդել են ուզում: Վերջապէս կարողացաւ ձայն հանել Հերիքնագր և զարթնել: Արզումանն իսկոյն յետ քաշեց գլուխը և տեղը հանգարտ նստեց:

— Ախի՛, էդ քնչ էր, ինչք՞ բղաւեցիր, հարցրեց Մարիամը նոյնպէս զարթնելով:

— Ոչինչ, երազումս էի, պատասխանեց Հերիքնագը երեսը շրջելով քրոջ կողմը:

— Երեսիդ խաչահանիր. ասա՛ անուն հօր, և որթուն, և հոգուն, և սրփուն, ամմէն.

Խաչ օքնեա ինձ. ամենակալ, թողս մեղս իմ...
Հերիքնագը մրմնջեց քրոջ թելադրած աղօթքը և կրկին քնի մէջ մտաւ. բայց Մարիամի քունը փախաւ, եւ չըկարաց քնել: Արզումանն այդ նկատելով՝ խօսեց վերջապէս.

— Մարիամ, քնած ես, թէ զարթուն:

— Արզուման, դու ես:

— Ես եմ, հօ չէք բարկանալ իմ գալուս համար:

— Քոռանամ ես, էդ քնչ խօսք է, ինչք՞ պիտի բարկանաք: Դու քնչ գիտէիր, որ Շամիրը տանը չի:

— Ես նրան տեսայ:

— Նա էլ տեսաւ քեզ:

— Ձէ, նա ինձ չըկարաց տեսնել: Գիշերս նա չի գալ. մնաց Նախշուն վանքումը:

Այս որ լսեց Մարիամը, միամտեց, վեր կացաւ իսկոյն, որ Արզումանի համար ընթրիք պատրաստէ:

Հերիքնագը լսելով սրանց խօսիլը, նոյնպէս զարթեց, թէպէտ վեր չըկացաւ:

— Ինչք՞ չես խօսում, Հերիքնագ, թէ քնած ես, ասաց Արզումանը, գլուխը դնելով Հերիքնագի կուրծքին, որի անուշ հոտն առել էր մի քանի րոպէ առաջ:

— Ի՞նչ խօսեմ, ասեց Հերիքնագը և ըս-

կըսեց հեկեկալ: Ասում են քեզ պիտի բռնեն, պիտի ուղարկեն Սիբիր, ան, ե. ե. ես կը. կը. կը մեռ. մեռ. նեմ. նեմ...

— Լաց մի լինիր, հոգիս, ինձ ոչով չի կարող բռնել, և սկսեց Հէրիքնազի գլուխը շոյելով ճակատից համբուրել, ասելով, մի վախիր, հոգիս, ինձ չեն բռնիլ. մի քանի ասիս անցնի, ամեն ինչ կը հանգարուի:

— Վայ թէ եղպէս չըլինի:

— Որ եղպէս չըլինի, էն ժամանակն էլ ուրիշ բան կը մտածենք, հիմիկանից ինչք ենք դարդ անում: Էն ժամանակը քեզ վեր կառնեմ կերթանք Տաճկաստան: Ենտեղ հայեր շատ կան, մի քաղաքում, մի գիւղում կը կենանք, մեր գլուխը կը պահենք: Եթէ բանն էսպէս պատահի, կը գաս, որ քեզ տանեմ:

— Քեզ հետ Սիբիր էլ կերթամ չէ թէ Տաճկաստան: Կերթանք Ստամբուլ, Մարիամին էլ կը տանենք:

— Ձէ, Ստամբուլը հեռու է. կերթանք Ղարս, Երզրուրում, էս մօտիկ տեղերը: Բայց, Հէրիքնազ, մի բան եմ ուզում ասել քեզ:

— Ասա, հոգիս:

— Ով գիտէ, աշխարհք է, էսօր մարդ չի իմանալ, թէ եղուց ինչ կը գայ գլխին: Թէ որ բանն էսպէս պատահի, որ երկար ժամա-

նակ չը տեսնենք մէկ մէկի, խօսք կը տան ինձ, որ մինչև իմ մահը չըլտես, ուրիշ մարդու չը գնաս: Ես նրա համար եմ ասում, որ դու աղջիկ ես, թէկուզ շատ էլ սիրելիս լինիս ինձ, էդ չեն հարցնիլ քեզ, զօռով կը տան մէկ տղի, շատ էլ որ դու հակառակ լինիս, կարող են վախցնել, թնջ պէտք է անես: Ես տղայ եմ, ինձ ոչով չի կարող զօռով աղջիկ տալ: Դու գիտես, որ վաղուց է, որ սիրում եմ քեզ, բայց ես հաստատ չը գիտէի, որ դու էլ ինձ ես սիրում: Մտքումս ասում էի, նրան ուզող լաւ տղէք, հարուստ տղէք շատ կան, ինձ ինչք կուզի. բայց հիմի տեսնում եմ, որ դու լաւ սիրտ ունիս, լաւ ես իմացել, թէ ով է գիշեր ցերեկ քո սիրովը հալւում, մաշւում, ով է քեզ համար գլուխը լետ դրած: Իմ կեանքը, իմ ապրեցնողը հիմի դու ես, միայն դու: Հէնց որ իմանամ, թէ դու էլ իմը չես, էն օրը գլխիցս ձեռք կը վերցնեմ, էլ ում համար, ինչո՞ւ համար պիտի ապրեմ: Մէկ մէր ունիմ, էսօր կայ, էգուց չը կայ. ոտի մէկը գերեզմանումն է:

— Հոգիս, մենք երկուսս էլ մի սրտի ենք ու մի մտքի. ինչ որ դու ես ասում ինձ, ես էլ էն պիտի ասեմ քեզ: Ասում ես՝ դու աղջիկ ես, քեզ զօռով մարդու կը տան, զօռով

կրփախցնեն: Մէկ որ՝ խելօք տղան էդ չի անիլ. պէտք է առաջ աղջկայ կամքն իմանայ, տեսնէ նա էլ համաձայնէ՞ թէ չէ: Ամեն աղջիկ մէկ չի լինիլ, էնպէսն էլ կըլինի, որ իրան փախցնողի գլուխը կըկտրի, խանչալը փորը կըկոխի: Ինձ ո՞վ կարայ փախցնիլ, մինչև ես ինքս չուզենամ, և երբ որ ուզենամ, էլ քնչ հարկաւոր կըլինի փախցնել: Դու տեսնում ես, որ Մարիամն ինձ իր աչքի լոյսի պէս է պահում, գլուխը յետ դրած ունի ինձ համար: Դրա համար դու խսկի մի մտածիր: Լաւ իմանաս, որ ինչ որ ես եմ քեզ համար, էն էլ դու ես ինձ համար: Կարճ ասեմ, երբ որ դու ինձ ես սիրում, ես էլ քեզ, էլ ուրիշ ինչ հարկաւոր է մեզ: Ես հէնց մտքումս դրել էի, որ քեզ ասեմ, թէ մարդ ու կնկայ մէջ սէր չըկայ, մենք մարդ ու կնիկ չըգառնանք, հէնց էսպէս մնանք, որ միշտ սիրենք մէկ մէկու: Ես հէնց իմանում եմ, որ աշխարհքումս ինձ նման բաղդաւոր ոչով չըկայ, սաղ աշխարհքը չեմ փոխիլ քո սիրոյ հետ...

— Արզումանը լսելով Հէրիքնազի դիւցազնական խօսքերը, չիմացաւ ինչպէս շնորհակալ լինի նրանից: Արզումանը սիրում էր Հէրիքնազին անհաշիւ, բնազդամբ, բնական

ընտրութեամբ, առանց դադափար ունենալու նրա խելքի, նրա դատողութեան, նրա անհատական հակումների մասին: Նա առաջ զմայլում էր նրա գեղեցիկութեան վրայ, իսկ այժմ լսելով նրա լուրջ խօսք ու զրոյցը, սկսեց նաև հիանալ: Չճարիտն ասել, Հէրիքնազը մինչև այժմ չուներ էլ լրջօրէն դատելու շնորհք, չուներ անհատական, ինքնուրոյն կարծիք ու համոզմունք: Գիւղի մէջ ամենքն էլ առհասարակ մի կաղապարով ձուլւածի նման են լինում, վայ նրան, ով որ ընդհանուր ձուլուածքի տիպը չըկրէ իր վրայ: Բացառութիւն կազմելու համար մարդ պէտք է բացառիկ հանգամանքների ենթարկուի: Արզումանն այս բացառիկ հանգամանքներին ենթարկւելով՝ իրան վիճակակից էր արել և իր Հէրիքնազին, որ գիշեր ցերեկ նրա վրայ էր մտածում և կեանքի հանգամանքների վրայ կրիտիքական հայեացք ձգելով նոր կարծիք և նոր համոզմունք էր կազմում և այդ բոլորը այն վառ սիրոյ շնորհիւ, որ ուներ դէպի Արզումանը: Մէրը հրաշք է գործում, վառելով մարդուս երևակայութիւնը, որի մէջ աճում, զարգանում են ինքնուրոյնութեան սաղմերը:

Արզումանը տեսնելով Հէրիքնազի հերոս

սական վճռականութիւնը, սկսեց նայել նրա վրայ ոչ միայն իբրեւ սիրուհու, այլ և իբրեւ մտերիմ ընկերուհու և իմաստուն բարեկամի վրայ: Արզումանի աչքերը, որ սովոր չէին արտասուք ցօլացնելու, այժմ սկսեցին աղբիւրանալ: Նա բռնեց Հէրիքնազի երկու ձեռքը, կապրեց շրթունքներին՝ և ասեց.

— Հէրիքնազ, Հէրիքնազ, իմ աննման Հէրիքնազ, քո էդ խօսքերը կենդանացրին իմ եօթը եղբայրներին: Հէնց իմանում եմ, թէ հիմի եօթն էլ կշտիս կանգնել, ինձ մխիթարում, ինձ սիրտ են տալիս, թէ՛ մի վախենար, մենք քամակիդ կանգնած ենք: Իմ սիրուն, իմ աննման Հէրիքնազ, երբ որ ձեր օջախն ու մեր օջախը վառ էին, մեր խնկերի վրայ էսպէս փորձանքներ չէին գալիս: Գեղի մէջ մենակ լինելը, անօգնական լինելը աշխարհիս ամեն անբախտութիւնից վատն է: Եսպէս չէր լինիլ ի հարկէ, եթէ արդար օրէնք, արդար դատաստան լինէր: Բայց վնաս չունի, ես այսուհետեւ էլ մենակ չեմ, քանի որ քո սիրտն ու միտքը ինձ հետ է: Մինչև հիմա դու միայն իմ նշանածն էիր, իսկ այսուհետեւ երկու բանով էլ աւելի ես— համ իմ քոյրն ես, համ իմ եղբայրս:

Հէրիքնազը կուռը ձգեց Արզումանի շը-

լընքովը և սկսեց մխիթարել նրան: «Մի վախենար, Աստուծոյ ողորմած է», ասեց և համբուրեց ճակատիցը: Նրանք երկուսն էլ մի առժամանակ լռեցին, և այս լռութեան մէջ երջանիկ էին:

ԺԲ.

Մարիամը դուրս եկաւ և Արզումանին ներս հրաւիրեց հացի:

— Դէ դու էլ վեր կաց, Հէրիքնազ ջան, ասաց Արզումանը և ինքը ներս գնաց:

Հէրիքնազը երկար սպասեցնել չըտաւ, իսկոյն հագնւեց և գնաց Արզումանի մօտ նստեց նրա վրայ թիակ տըլածի պէս:

Ասում են միջի մէջ աւելի վառ է լինում մարդուս երեակայութիւնը, քան թէ լուսի, զիշերն աւելի, քան թէ ցերեկը: Բայց այս երեւոյթը եթէ ճշմարիտ էլ է, աւելի մաշւած մարդոց համար է, իսկ անարատ հոգիների մէջ, կուսական սրտերի մէջ երեւակայութիւնն ամեն անգամ էլ վառւում է, բաւական է, որ մի առիթ, մի շփումն լինի: Հիմա այս ինչո՞ւ համար ասացի, ինքս

էլ չըզիտեմ, ուրեմն թողնենք այսպէս էլ մնալ...

Արզումանը սաստիկ քաղցած էր, և առաւօտն էր կերել մի կտոր թուրքի սաջա-հաց: Մեր թուրքերը մինչև հիմա էլ իրանց նախնեաց սովորութիւնն ունին. մի բան գըտած ժամանակ ուտում են անկշտում կերպով, բայց երբ բան չըկայ ուտելու, այնպէս էլ մնում են: Գալլի պէս ագահ են, իշի պէս սակաւապետ: Այսպէս են մանաւանդ փախըստական աւազակները: Մէկ օրում այնքան ուտում են, որ մի շաբաթ բաւականանում է: Ի՞նչ կը լինէր Արզումանի վիճակն այս իշագալլերի մէջ, — կարելի է երեւակայել: Արզումանը թէպէտ քաղցած էր, բայց Հէրիք-նաղին տեսաւ թէ չէ, ստամոքսն իր պահանջից լետ կացաւ, տեղի տալով սրտի պահանջին:

— Զարմանալի բան է, ասաց Արզումանը. իմ միտս է, որ էսօր սովածութիւնից սիրտս թռթռում էր. բայց հիմա ախորժակ չունիմ:

Մարիամը գիտէր, որ ուրախութիւնն ախորժակ փակել գիտէ, բայց ախորժակ բանալու հնարքը նոյնպէս գիտէր: Մի բաժակ օղիով լցրեց տըւաւ Արզումանին, ասելով՝ գի-

նի չունինք, այս մի բաժակ արաղով խմիր մեր երկուսի կենացը: Արզումանը ոչ օղի և ոչ գինի խմելու սովորութիւն չունէր, բայց Մարիամի առաջարկութեան համար թոյն էլ որ լինէր՝ կըխմէր: Մի չաղ հաւ էր եփել Մարիամը և մի քանի ձու խաշել: Լաւ ախորժակով կերաւ Արզումանը, իսկ և իսկ թուրքի նման, որ մի շաբաթուայ պաշար ունենայ ստամոքսումը: Մարիամը նկատեց, որ Արզումանի ծամելիքները, դադար առնելու մտադրութիւն չունի, վեր կացաւ մի մեծ աման էլ սալ սալ մածնով լցրեց դրաւ Արզումանի առջևը: Այս էլ սրբեց մեր հերոսը և լետոյ ասեց. «Ձանէս բեզարեց. ութ օր է, ինչ որ էսպէս ախորժակով հաց չեմ կերել»:

Այս միջոցին աքաղաղը կանչեց:

— Ա՛յ զահրումար, բացականչեց Արզումանը: Երանի մութն ընկնի աշխարհիս վրայ, էլ մէկ սաղ տարի չըլուսանայ:

— Կուզէ՞ս մի սաղ տարով քեզ էնպէս մի մութը տեղ գցեմ, որ սատանան էլ չըգտնի, ասեց Հէրիքնաղը:

— Ո՞րտեղ կըգցես:

— Մեր մեծ տան ներսի օթախը:

Արզումանը լսել էր սրանց մեծ տան համբաւը, բայց աչքով չէր տեսել: Մի ան-

վառ ճրագ և լուցկի վեր առան և մեծ տունը մտնելով՝ ճրագը վառեցին։ Արդումանը մի քանի քայլ առաջ գնալով՝ ճրագը բարձրացրեց և սկսեց չորս կողմը նայել։ Ահագին մեծութեան կօնաձև մի շինութիւն էր այս տունը և վերև նայողին թըւում էր, թէ ուր որ է պիտի փրլի։ Ութ ահագին հաստութեան փայտէ սիւների վրայ էին հաստատւած առաստաղի հաստ ու երկայն գերանները, որոնք կիսով չափ փտել էին արդէն և մօտ էին կոտրատւելու։ Սրա համար բանի պէտք չէին ածում այս տունը, բայց չէին էլ քանդում։

Այս տան միջով Հերիքնազը առաջնորդեց Արդումանին և տարաւ իր ասած ներսի սենեակը, որ կրիաձև կորաքամակ մի բնական մեծ շինութիւն էր։

— Ահա քեզ տուն և մութ աշխարհ, ասեց Հերիքնազը։ Ժամանակով մեր հարսնատունն է եղել սա, մէկ տարի էլ դու հարսնութիւն արա։ Լաւ կաւեմ, կըսրբեմ, ամեն օր հացդ ջուրըդ կըբերեմ, շատ անգամ մօրդ էլ կըկանչեմ կըգայ էստեղ քեզ կըտեսնի։ Հը՞, ի՞նչ կասես։

— Ձէ, Հերիքնազ ջան, դու մի վախիր, ես առանց էստեղ մնալու էլ քեզ շուտ շուտ

կըտեսնեմ, էլ ինչ հարկաւոր է, որ ինքս ինձ բանտի մէջ գցեմ։ Բայց էստեղ մի բան միտս ընկաւ։ Մի ժամանակ նորասկսեցի բերում էին էստեղ համբուրելու, ո՞ւր է էն օջախը։

— Էդ մեծ տան օջախն է. եկ տանեմ ցոյց տամ։

Երբ որ գնացին օջախի մօտ, որ մեծ տան կենդրոնումն էր, Արդումանն ասեց.

— Հերիքնազ, դու հաւատում ես, որ էս օջախը զօրաւոր է։

— Էդ ի՞նչ խօսք է, ի հարկէ հաւատում եմ։ Ամեն շաբաթ իրիկուն, ահա տեսնում ես, էս քարի վրայ մոմ եմ վառում, ծուներ դնում։ Երբ որ իմ հօրն ու մօրը տեսնում եմ էրազումս, իմ հէրն ահա էնդեղ է լինում նստած, մէրս էլ ահա էստեղ, մէկ մէկու դէմ ու դէմ։ Սաղ ժամանակն էլ էդտեղ էին նստում։ Նըրանց տեղն ոչով իրաւունք չունէր նստելու։ Հարսներն էլ երբ որ բան չէին ունենում, ներսի օթախումն էին նստում, իսկ հաց ուտելիս գալիս էին էսպէս շնորքով կանգնում։

— Ձարմանք բան է, ի՞նչպէս էլաւ, որ էս շէն օջախը էսպէս շուտով հանգաւ։

—Աստրծու կամքն էր. ամեն ցաւ, ամեն պատուհաս վրայ վրայ եկաւ...

—Իմ լաւ միտս է, որ առաջ խօսերը եկաւ, յետոյ տաւարի ցաւը. յետոյ չըզիտեմ էլ մի ինչ ցաւ էր, մեր գիւղի կէսը տարաւ...

—Եդ թող, էդ ցաւերի անուէն մի տար, լաւ չի: Քեզ մի ուրիշ բան ասեմ: Ես միշտ մօրս տեսնում եմ էրագումս, միշտ իր տեղն է լինում նստած: Վազում եմ գլուխս դնում գոգումը, նա էլ ձեռն է քսում գլխիս, էրեսիցս պաշում: Բայց էս գիշեր որ դու եկար մեր տուն, էս էլի մօրս տեսայ էրագումս, բայց շատ տխուր էր, ոչ գլխիս ձեռը քսեց, ոչ էրեսիցս պաշեց, կասես վրաս բարկացած լինէր:

—Ի՞նչ էս կարծում, ինչի՞ պէտք է էդ պէս լինէր:

—Ո՛վ գիտէ, կարելի է թէ իմ արարմունքը նրան դուր չի եկել, որ էս...

—Հասկանում եմ: Նրա համար, որ դու նշանւած չես, և ինձ սիրում ես:

—Եդպէս եմ կարծում...

—Հէրիքնազ ջան, գիտե՞ս ինչ կայ. էս ուզում էի օրինաւոր նշան բերել, բայց բանն էսպէս եկաւ: Ես հիմա ինձ մօտ մի խաչ մանէթ ունիմ քեզ համար պատրաստած, որ շըլնքիդ կապես:

Արզումանը հանեց խաչ մանէթը և տրւաւ Հէրիքնազին՝ ասելով.

—Ահա քեզ նշան: Թէ որ կուգես, դու էլ քո մատնիքներիցդ մինն ինձ տուր: Արի իմ հոգի, չոքենք, էս օջախի քարիցը համբուրենք, թո՛ղ քո հէլն ու մէրը տեսնեն, մեր նշանն օրհնեն:


Հէրիքնազն առաւ խաչ մանէթը, իր մատից մի մատանի հանեց տրւաւ Արզումանին. չոքեցին, համբուրեցին օջախի քարիցը և յետոյ իրանք համբուրւեցին: Որքան սէր, որքան սրբութիւն կար այդ համբուրի մէջ...

Մարիամը մեծ տան մօլթ անկիւնումը կանգնած՝ ահանատես վկայ էր այդ բոլոր անցքին: Նա ձայն չէր հանում ու չէր ուզում խանգարել, միայն վերջին համբուրից յետոյ մօտեցաւ և ասեց.

—Ուխտներդ ընդունելի լինի, Աստուած մուրազներիդ հասցնէ:

—Ամէն, ամէն, ասեցին միաձայն Հէրիքնազն ու Արզումանը:

Այս միջոցին աքաղաղը երրորդ անգամ կանչեց և մեր փախած Պետրոսին իմաց տրւաւ, որ ժամանակ է ապաշխարելու երթալ...



Handwritten text in a cursive script, likely a letter or document, spanning the left page. The text is mostly illegible due to fading and bleed-through from the reverse side.

Handwritten text in a cursive script, likely a signature or name, located on the right page.

Ա.

Ամառն էր: Գիւղացիք սովորութիւն ունէին ամեն ամառ սար երթալու: Մեր սարերը, որ ձմեռն անմարդաբնակ են լինում և անհիւրընկալ իրանց բուք ու բորանով, ամառ ժամանակ կատարեալ դրախտի են փոխարկւում, հիւրասիրելով իրանց ստորոտներում և լանջերի ու գագաթների վրայ անթիւ ոչխարներ ու տաւարներ: Որքան երեւելի է Արագածը իր պատւական արօտատեղիներով և անմահական ջրերովը, որքան երեւելի են Արցախի և Սիւնիքի սարերը, նոյնքան և աւելի ևս երեւելի են Գուգարաց աշխարհի սարերը—Լալւարը, Լօքը, Ղարախաչը, Ագրիղաւը, Թէլլիզաղը և ուրիշ անթիւ սարեր, որոնք կարծել են տալիս սարեցուն, որ Եդեմական դրախտն այստեղ է եղել, ուր Ադամն ամառը բնակելով՝ ձմեռն արտաքսուել, գնացել է Ղարաբաղ:

Այս սարերից մի քանիսի ստորոտում անտառներ էլ կան. այս կողմանէ երեւելի են մանաւանդ Լօքի և Լալւարի հիւսիսային ստո-

րոտները, որոնց շատ տեղը իրանց անմատչե-
լի լինելովը գեռ ևս կացնի ձայն չեն լսած:
Այս անտառների մէջ կայ և որսերի առա-
տուլթիւն.— արջ, խոզ, եղնիկ, եղջերու, խրմ-
բերով են ման գալիս: Սեպտեմբեր ամսին ցուլ
եղջերուներն իրանց գոռոցով դըրմբացնում են
բոլոր ձորերը: Այս սարերումը կան և ամուր
պատուարաններ գողերի և աւազակների հա-
մար: Սրանց մէջ ամենանշանաւորը Ղարան-
լըխ-Ռարա ասլաճն է, որ նշանակում է Մը-
թին ձոր. պակաս չէ և Շէյթանլուն, որ կը-
նշանակէ Սատանի բոյն, ինչպէս և Գիւլի-
Մամմազը, որ մի նշանաւոր աւազակի անուն
է կրում: Այստեղերը մօտիկ լինելով Տաճկաս-
տանից, երկու կողմի աւազակների հաղորդակ-
ցութիւնը հեշտանում է, մի կողմից միւս կողմ
են փոխադրում իրանց կողոպուտը:

Սարեցիք ամբողջ ամառը մի տեղ ան-
շարժ չեն մնում, այլ երկու և երեք շաբա-
թը մէկ անգամ տեղափոխւում են, որ անա-
սունների համար խամ արօտատեղ ունենան:
Այս տեղափոխութիւնը մի առանձին անյար-
մարութիւն չի պատճառում, դժար չէ իրանց
շարժական դադէքը հաւաքել և մի ուրիշ
տեղ սարքել: Բնակութիւն հաստատելու հա-
մար որոշ տեղեր կան, որոնք ասւում են

Իւրդ կամ Ուրդ: Ամեն ուրդ մի անուն ու-
նի, ասում են օրինակ, Վերի ուրդ, Ներքի
ուրդ, Մէջի ուրդ, Յեխի ուրդ, Քամի ուրդ,
Մէլիք-Ապովի ուրդ, Պօղոսի ուրդ և այլ շատ
ուրդեր: Երբ որ ուրդը կամ մի հովիտ, մի ձոր,
մի սար մարդու անուն է կրում, այդ ցոյց է
տալիս, որ այն մարդը մի նշանաւոր գործ է
կատարել այնտեղ: Մէլիք-Ապովը՝ իր անունը
կրող ուրդումը եօթը լեզգու գլուխ է կտրել,
երեքին էլ ողջ ողջ մաշկել, միայն երկուսին
է ազատել, որ լուր տանեն իրանց աշխարհը:
Ասում են, մինչև այդ ժամանակ, որ լեզգի-
ների արշաւանքը մի սովորական բան էր, իս-
պառ վերջացաւ: Պօղոսի համար պատմում
են, որ ինքը և նշանածը իրար կուռ բռնած
անցնում են եղել այժմ իր անւանը նւիրւած
ուրդովը: Այդտեղ նրանց շրջապատում են լեզ-
գիքը և ուզում են բռնել գերի տանել, Պօ-
ղոսն անձնատուր չի լինում. խանչալը տալիս
է նշանածին, իսկ ինքը թրով յարձակւում
է լեզգիների վրայ և աջ ու ձախ կոտորում:
Բայց լեզգիքը շատ ժամանակ չեն տալիս,
ուրթ իննը հրացան մէկ անգամից արձակելով
վրան՝ զնդակահար են անում քաջ երիտա-
սարդին: Իր սիրեկանի մահը տեսնելով՝ Պօղո-
սի նշանածը, Ջառին՝ ընկնում է խանչալի

վրայ և ինքն իրան սպանում: Եւ այսպէս երկու անարատ հոգիք, դեռ ևս կոյս, անթառամ պսակին են արժանանում: Ամեն անգամ այնտեղով անցնելիս, մեծերը պատմում են փոքրերին այս անցքը, որ մեծ տպաւորութիւն է գործում խոզների վրայ:

Բ.

Վարդավառի շաբաթ օրն էր: Սարիեալը, ուր վարդի կոկոնի նմանութիւն բերող մի բլուր է, հեռուից նայողին այնպէս է թրւում թէ ահագին մեծութեան մի ծաղկափունջ է: Ինչ գոյնի ծաղիկ ասես, որ նրա վրայ չըկար, մինը քանրդ միւսը պայծառ, մինը քանրդ միւսը հոտաւէտ: Հարս ու աղջիկ զուգւել, զարդարւել էին այդ օրը և այդ սարի վրայ ծաղիկ քաղելու էին գնացել, որ միւս օրը կատարեն վիճակախաղի հանդէսը:

Զրգիտեմ ինչիցն է. ամեն տեղ վիճակախաղի հանդէսը Համբարձման տօնին են կատարում, իսկ Ղարաբաղ և նոյն տեղից գաղթածները՝ Վարդավառին: Այս էլ պէտք է ասել, որ ոչ մի տեղ Վարդավառը այնպէս փա-

ռաւոր կերպով չի տօնում, ինչպէս Ղարաբաղում: Նրանք չեն ասում Վարդավառ, այլ Վերթէւոր, որ կընշանակէ վարդաւոր, և այս է հէնց այս տօնի էլ պատմական նշանակութիւնը, որովհետեւ Վարդաւորը Անահիտն էր, որ ունէր վարդի մատն և ասում էլ էր Վարդամատն:

Ծաղիկ քաղողների մէջն էր և մեր Հերիքնազը, որ ամեն մի ծաղիկ պոկելիս խղճահարւում էր, թէ մեխի չեն այս ծաղիկները, որ այսպէս անգթութեամբ կտրում, հեռացնում ենք իրանց արմատից, չէ որ սրանք էլ հոգի ունին, սրանք էլ ունին մուրազ: Արդեօք սէրն էր նրան այս աստիճան քնքշացրել: Աւելի դալար, աւելի պաճառ ու գեղեցիկ ծաղիկներին զիմիշ չէր անում ձեռը տալ, աշխատում էր այնպէս քայլել, ոտներն այնպէս փոխել, որ ոչ մի ծաղիկ, ոչ մի խոտ չըճրխէ, չըթառամեցնէ: Այս տրամադրութեան մէջ ինչ տարօրինակ բան ասես՝ երեւակայում էր Հերիքնազը: Մի ծաղիկ նրան թրւում էր որպէս նորահարս, միւսը նորափեսայ, մէկը պառաւած, միւսը դեռ մանուկ, մէկին պաշպչում էր, մէկէլի կշտին նստում, վրան նայելով զմայլում էր. հիանում էր նրանց ձևերի կանոնաւորութեան և Համաշափութեան վրայ

և այնպիսի յատկութիւններ էր նշմարում, որ մինչև նոյն օրը աչքին չէին զարնւել, ուշագրութիւնը չէին գրաւել: Մինչև այսօր նրանք անշունչ բաներ էին, որոնց պոկել և հոտ առնել կարելի էր միայն, բայց հիմա բոլորն էլ շունչ, բոլորն էլ հոգի առած՝ խօսում էին նրա հետ: Միև աղջկէքը ուրախ ու զըլարթ, երգելով, «գիւլըմ հայ» կանչելով, մէկ մէկի բոթելով, հրելով, միմեանց տակ ու գլուխ ընկնելով, գլորւելով, վազիզում էին մէկ թուփից միև թուփ, մէկ ծաղկից գէպի միևսը, ասում էին—տեսնենք ո՞վ շատ կըքաղի, ո՞վ աւելի շատ գոյնի ծաղիկներ կունենայ, և այսպէս բաւականին հեռանում էին, իսկ Հէրիքնազը չէր մասնակցում նրանց զըլարճութեանը, չէր վազում նրանց հետ. նա՝ կարծես գիտութեամբ՝ յետ էր մնում, որ մենակ մնայ, և շատ էր սիրում նա այդ մենակութիւնը: Միև աղջկէքը հասել էին սարի գագաթը, բայց ինքը դեռ նրա ստորոտումն էր և չէր ուզում նրանց հետեւի, որ չըզրկւի իր քաղցր ցնորքներից:

Արդէն հինգ ամիս էր անցել, ինչ որ Արզումանին չէր տեսել, նրանից ոչ մի համբաւ չունէր: Այդ հինգ ամիսը հինգ տարուց աւելի էր թըւում Հէրիքնազին: Հինգ ամսւան մէջ

բաւական կերպարանափոխւել էր Հէրիքնազը: Նրա աչքերը, որ առաջ էլ հալուհու աչքեր էին, թուխ թուխ, խոշոր ու վառվռուն, բայց մի տեսակ ապշութիւն ունէին, գեղեցկութեան հետ ունէին և գեղացութիւն, իսկ այժմ մի նոր ոյժ, մի նոր զօրութիւն էին ստացել, որով թափանցում էր նա դիտելի առարկայի մէջ, թափանցում էր մարդու սրտի և հոգու խորքերը: Նրա դէմքի գծազրութիւնը առաջ էլ գեղեցիկ էր, բայց այժմ փոխւել էր արտայայտութիւնը, որ աւելի վրսեմ և աւելի սքանչելի էր: Առաջ նա մի գեղեցկութեան կուտակութիւն էր, ինչպէս վարդը կոկոնի մէջ, իսկ այժմ բացւել էր իր բոլոր շքեղութեամբ: Առաջ նա մի գեղեցկուհի էր, իսկ այժմ մի աստածուհի, արամազդեան գերդաստանից, որ Հելէկոնեան լեռներից տեղափոխւել էր Սարի-եալ, որ մի քիչ ժամանակ անց կացնէ հողեղէնների հետ: Չքնաղատիս, աննման արարած, պաշտելի՝ Հէրիքնազ...

Վաղուց արդէն ազապ տղերանց երեւակայութեան միակ նիւթը Հէրիքնազն էր: Անյարմար էին համարում Հէրիքնազ անունը տալ նրան, Գիւնեա-գեօզալի էին ասում, Արաբի-Ջանգի, Ասլի ու Մէհրի, Գիւլու-

զար, և առհասարակ աշխատում էին իրանց սիրած վեպերի հերոսուհիների անունը տալ նրան, բայց ոչ մէկը չէր կայչում, նա մնում էր դարձեալ Հէրիքնագ: Շատերը խաղ էին կապում (երգ յօրինում) և կամենում էին Արզումանի արկածների պատճառը համարել, բայց չէին կարողանում յաջողցնել, չէր ընդհանրանում: Մի բիծ, մի արատ չէին կարողանում դնել վրան, որովհետև զօրաւոր օջախի զաւակ էր, ժողովուրդը պատկառանքով էր նայում նրա վրայ և համոզուած էին, որ մի որ և իցէ անտեղի ակնարկութիւն դէպի նա՝ անպատիժ չի մնալ:

Շատերը խնամախօս եկան հարուստ և շէն տներից, շատ հեռաւոր գիւղերից, և քաղաքից, բայց ամենքն էլ մերժեցան: Շատերը փորձ արին փախցնելու, բայց տեսան, որ Հէրիքնագի փախցնելը դժարին գործ է և անհնարին, քանի որ նա ինքն իրան պաշտպանելու և քաջութիւն ունի և զէնք:

Ոչ ոք, բացի Մարիամից, չըզիտէր, որ Հէրիքնագը նշանւած է: Շրջունջ կար միայն, որ Հէրիքնագը սիրահարւած է Արզումանի վրայ, բայց ձեռներին ոչ մի փաստ չունէին: Շամիրը շատերին էր խօսք տալիս, շատերից ընծաներ առնում, որից մի ձի, որից մի հրա-

ցան, բայց նպատակին չըհասնելով՝ ընծաները լետ էր դարձնում: Մի մեծ պատերազմ էր այս, բայց Հէրիքնագը այս պատերազմից յաղթող դուրս եկաւ և հաստատ մնաց իւր սիրոյ մէջ:

Հէրիքնագը տեսաւ որ իր ընկերները շատ են հեռացել, էլ չուզեց նրանց ետևից հասնել: Նստեց տեղնուտեղը և սկսեց իր քաղած ծաղիկները երգելով փնջել: Առաջ «ջանգիւլըմ» երգեց մեղմ ձայնով, յետոյ սկսեց բալաթի: Բայաթին նրա սիրտը այնպէս շարժեց, որ արտասուք եկաւ աչքերից: Լաց էլաւ Հէրիքնագը, առաջ կամաց, բայց քիչ քիչ ձայնը բարձրացրեց և սկսեց բոլոր ուժովը գոռալ, որ մէկ անգամից դուրս վիժէ բոլոր կսկիծը:

Հինգ ամսւայ մէջ շատ բան էր զգացել Հէրիքնագը, շատ էր տխրել, բայց ոչ մի անգամ չէր լաց էլել: Նրա սիրտը քարացածի պէս էր: Բայց հիմա, երբ աչքը ձգեց իր չորս կողմի սարերի վրայ, երբ երևաց Ղարանլիւ-Ղարան, որ մութ անդունդի նման երկարու-մէկ ձգւել էր երկու ահագին լեռների միջով, Հէրիքնագի սիրտն ուռաւ և ուզեց կուրծքը պատռել: Ահա այդ ձորն է Արզումանի բնակարանը, ասում էր նրա սիրտը և ուզում էր թռչել դէպի այն կողմը:

Հէրիքնազը երկար, երկար ժամանակ նա-
լեց դէպի Մթին ձորը և մի տխուր տպաւո-
րութիւն ստանալով, աչքը ձգեց միւս բլուրների
և սարերի վրայ, որոնք նոյնպէս տխրութեամբ
էին նայում իր վրայ: Մի տխուր նախազգաց-
մունք գրգեց նրան, թէ այս վերջին անգամն է,
որ զմայլում է իր ծննդարանի շքեղ տեսարան-
ներով, էլ Կաթնաղբի ջրիցը չըպիտի խմի, էլ
Բոխոտ սարի հաղարձիցն ու մոռիցը չըպիտի
ուտի, էլ Զուխտակ աճարքու վրայ կարմիր
թել չըպիտի կապի, որ լիշատակ մնայ, միւս
տարին գայ մի նոր թել աւելայնի, էլ Սա-
րի-եալի վրայ ծաղիկ քաղելու չըպիտի գայ...
Այսպիսի տխուր մտածմունքներից յետոյ մի
թալկութիւն եկաւ վրան և պառկեցաւ ցօղա-
թաթախ ծաղիկների մէջը և քունը տարաւ:

Մարիամը տեսաւ որ Հէրիքնազը բաւա-
կան հեռու է մնացել, վախեցաւ, թէ մի փոր-
ձանքի չըպատահի, մանաւանդ նկատելով՝ որ
հեռււից ձիաւորներ են գալիս այնպիսի արա-
գութեամբ, որ կարծեց թէ Հէրիքնազին փախ-
ցնելու են գալիս: Իր հետ մի խումբ աղջիկ
առաւ և սկսեց սարիցը վալը իջնել դէպի
Հէրիքնազը: Զիաւորները Հէրիքնազին չընկա-
տելով՝ ուղղակի գիմեցին դէպի Մարիամի
խումբը: Նրանցից մինը վալը իջաւ ձիուցը:

Մարիամը ճանաչեց, որ նա Արզումանն էր,
և իսկոյն մօտ գնաց բարևեց: Արզումանը մի
քանի խօսք ասեց Մարիամին և իսկոյն ձին
հեծաւ ու կայծակի արագութեամբ հեռացաւ իր
ընկերների հետ: Աղջկերքը ուրդ հասան թէ
չէ՝ չաւ արին ամեն տեղ, թէ Արզումանին
տեսանք, Մարիամը նրա հետ երկար խօսեց,
բայց մենք չիմացանք թէ ինչ խօսեցին:

ԳԺ

Այս շաբաթ երեկոյին մի առանձին ու-
րախութիւն և զրւարճութիւն էր երևում սա-
րեցոյց մէջ, մանաւանդ ջահիլ աղջիկների և
տղաների: Միակարգ շարւած դագէքի առջև
խարոյկները աւելի էին թէթաղել: Կարմրա-
թուշիկ հարսն ու աղջկէք պատել էին կրակ-
ների չորս կողմը: Մի տեղ շրէի էին ածում,
մի տեղ երգում, բայց ամենից շատ հաւաք-
ւել էին պառաւ Հոռոմի մօտ, որ սկէսուրու-
թիւն և մայրութիւն էր անում ամենքին և
առանց նրա հրամանին ոչինչ անել չէին կարող
միւսները:

Երկինքը բաւական պարզ էր այս գիշեր:
Թեպէտ լուսին արդէն անցել էր արեւմտեան

սարերի քամակը, բայց այնտեղից դարձեալ օգնում էր երկնքի պայծառ աստղերին և լուսաւորում մօտակայ սարերն ու ձորերը: Բազումք աստեղատունը բաւական բարձրացել էր և ցոյց էր տալիս, որ մօտ է կէս գիշերը, բայց այս գիշեր կարծես ոչ ոք մտադրութիւն չունէր քնելու: Սրա պատճառն այն էր, որ առաւօտեան արշալուսին աղջկէքը իրանց քաղած ծաղիկը պէտք է տանէին եօթն աղբիւրի ջրով ցօղէին. իսկ տաւարածները պիտի աշխատէին նրանցից այդ ծաղիկը խելու: Սա մի կռիւ է, որ կատարւում է տղայոց և աղջկանց մէջ, որից յառաջ է եկել և կռւածադի կբառը: Եթէ տղջրկէքը ծաղիկը խլել տան, պէտք է տղաներին ընծաներ տալով յետ առնեն: Ընծան լինում է մի քանի ջուխտ նախշուն գուլբա և զանազան ուտելիք — ձըւաձեղ, սեր, գաթա: Տղէքը այդքան ընծաների համար չեն աշխատում, որքան աղատելու համար այն ամօթահարութիւնից, որ պիտի կրեն աղջիկներից, նրանց ծաղր ու ծանակը պիտի դառնան, եթէ չըկարողանան խել: Իրաւունք ունին և գողանալու ծաղիկը, որ մի բղուղի մէջ թաքցրած են պահում այս գիշեր:

— Ա՛յ տղէք, քիչ լախաւահա՛յի տըւէք, գնացէք շնթռկեցէք: Առաւօտները ձեզ վեր-

կացնել չի ըլում, օրը կէս օր է ըլում, որ կովերն արօտ էք տանում, ասաց պառաւ Հռոմը բարկանալով տաւարածների վրայ:

— Հը՛մ, էդ քու բանը չի. ուզում էք մեզ քնացնէք, որ ձեր բանը լաւ տեսնէք հա: Տղէք, սուտ է ասում. խաբում է մեզ. չըքնէք, ասեց տաւարածների գլխաւորը:

— Չըքնէք էլ, ոչինչ չէք կարող անել, անմեղ էք անուշ քունըներըդ կտրում, ասեց մի աղջիկ հեգնելով:

— Դուք մազ մանեցէք, առաւօտը ձեզ կծկիլ կըտանք ձեր մանածը. սրախօսեց մի տաւարած:

— Հաչեցէք ինչքան կուզէք, մենք էնքան շատ ենք, որ մեզ ոչինչ չէք կարող անել:

— Ինչքան էլ շատ ըլիք, էլի տակի դօլը ձերն է...

— Վճ՛ւյ, գետինը մտնես...

— Քեզ հետ կըմտնեմ թէկուզ դժօխքը...

— Դու խրատողի էրեսիցը կպչես:

— Դու ես իմ խրատողը:

— Թաղեմ արեւդ, ես քեզ երբ եմ խըրատել:

— Գիշերըս կըխրատես, ես էլ խելօք կըկենամ:

— Ես գիտեմ, քեզ ինչպէս կըխրատեմ: Այս ասելով աղջիկը մի խնձոր վեր առաւ, որ տղայի գլխին խփի. նա փախաւ, գլուխը պըրծացրեց:

— Ախշի, թողէք էդ շներին, քնչ էք հաչացնում, ասեց Հոռոմը: Դուք քաշւեցէք ձեր տեղերը, թող դրանք էնքան կենան, որ ջանքերը դուս կայ: Թէ որ զօչաղ տղէք են, առաւօտը կերեալ:

— Կերեալ, հալըձթ կերեալ: Մի Հէրիքնազ ունիք, նա էլ հրէն տեղումը պառկած գելն է տալիս. էլ ո՞վ ունիք, որ ձեր էրեսը պարզ անի, ասեց տաւարածների գլխաւորը, որ մօղրովից աւելի իշխանութիւն ունէր ամեն տաւարածների վրայ: Սա վեր կացաւ տեղիցը, և միւսների հետ հեռանալով՝ կարգադրութիւն արաւ: Ամեն աղբիւրի մօտ չորս-հինգ հօգի ուղարկեց, որ պահպանեն մինչև լոյս:

Հէրիքնազն այս նախատօնէքին ներկայ չէր: Ծաղկաքաղից տուն հասաւ թէ չէ՝ Հէրիքնազի ջանն սկսեց կոտրատել. և ծնօտիքն իբար զարկելով իմացրին նրան, որ այս է ահա դող ասած բանը, որ ունեցած չէր երբէք: Արգէն տասնութ տարեկան էր Հէրիքնազը, բայց դեռ ևս ոչ մի անգամ հիւան-

դացած չէր: Երկու տարեկան ժամանակն էր ծաղիկն ու կարմրուկը հանել և այն էլ շատ թեթեւ, և չէր էլ լիշում ինքը: Իսկ այժմ ընկել էր դողի անգութ ճանկերը, որ բաւական դողացնելուց յետոյ, ձգեց մի անտանելի տաքութեան մէջ և Հէրիքնազն սկսեց գելը տալ:

Արգումանն այսօր Մարիամին տեսնելով Սարի-եալումը, ժամադիր էր եղել վերի աղբիւրի մօտ տեսնելու Մարիամին այս գիշեր: Մարիամը գնաց նշանակած տեղը և գրտաւ Արգումանին, որ այնտեղ թաք կացած սպասում էր:

— Ասա տեսնեմ քնչ ունիս ասելու, ասեց Մարիամը:

— Էն եմ ուզում ասել, որ էս քանի ամիսը էն կողմումն էի (սահմանից դուրս): Էնտեղ մի քանի ծանօթների գտայ. նրանք խօսք տըւեցին ինձ, որ լաւ կընդունեն և լաւ կըպահպանեն, եթէ գնամ իրանց մօտ բնակեմ: Հիմա ուզում եմ Հէրիքնազին առնել էն կողմն անցկենալ. էնտեղ, ինչպէս մեր օրէնքն է, կըսպակենք և մեզ համար հանդարտ կապրենք:

— Ես համաձայն եմ, Արգուման: Թէպէտ շատ դժար է ինձ համար մի հատիկ քրո-

ջիցս զըրկւելը, բայց լաւ է եղալէս անես, քան թէ սաղ աշխարհքս մեզ վրայ հաչացնես: Բայց գիտես, Հէրիքնազը հիմա հիւանդ պառկած է, դողացնում է: Պէտք է մի քիչ համբերես: Եգուց չէ, էլօր կերթանք Ներքի ուրդը. էնտեղ չորս կողմն անտառ է. կարող ես մթնով գալ Զուխտակ աճարքու մօտերքը, ես էլ կըգամ էնտեղ, երբ որ լաւացած կըլինի Հէրիքնազը, քեզ իմաց կըտամ...

Հէնց այս միջոցին մի քանի տաւարածներ շրջապատեցին Արզումանին ու Մարիամին: Արզումանը դրանց տեսնելով հեռացաւ, իսկ Մարիամին բռնեցին:

— Ծաղիկը մօտըդ է, տո՛ւր, բղաւեցին երեք-չորս տաւարած:

— Ի՞նչ ծաղիկ, թնչ էք ասում, ասեց Մարիամը շփոթւելով:

— Թողէք, թողէք, ասացին միւս տաւարածները, որոնք ճանաչեցին Արզումանին, — դրանց ծաղիկը ուրիշ կռածաղիկ է, մեր ուզած ծաղիկը չի: Նւ սկսեցին մէկ մէկի ալանջում փսփսալ — տեսա՛ր, տեսա՛ր, Արզումանըն էր, Արզումանն էր...

Պ.

Միւս օրը սովորական հանդէսը շատ փառաւոր կերպով կատարեցին աղջկէքը: Ծաղիկը կիսել էին և տըւել երկու խմբի ձեռքը: Առաջին խումբի ձեռիցը խլեցին տաւարածները և ուրախութիւնից զժլածի պէս փախան: Իսկ միւս կէսը աղջկէքը տարան ցօղեցին իրանց ուզածի պէս և վերադարձան ուրախ ուրախ: Տաւարածները երբ որ իմացան իրանց խաբւած լինելը, խլած ծաղիկները խաչաձև փնջեցին և կախեցին կովերի ճակատներից: Այսպէսով համ կովերը զարդարւեցին ծաղիկներով, համ աղջկէքը կատարեցին իրանց հանդէսը առանց տղաներին հարկ վճարելու: Բայց տղէքը մտածեցին, որ Քայս խորամանկութեան վրէժը միւս տարի առնեն, և սրանով մխիթարեցին իրանք իրանց,

Առաւօտը վաղ վեր կացաւ Հէրիքնազը և ուզում էր հանդէսին մասնակցել, բայց Մարիամը թոյլ չըտըւաւ, թէ՛ կըմըսես, դողդէ կըկրկնւի, տաք կաց, որ լաւանաս շուտով: Նա չըպատմեց իր գիշերային այցելութիւնը, չասեց որ Արզումանին տեսել է, որ Հէրիքնազին մի նոր մտածմունքի մէջ չըձգէ:

Հէրիքնազը երկու մատանի ուղարկեց Մարիամի ձեռով, որ գցէ բոլորի մէջ: Մատնիքներեց մէկն իր համարէր, իսկ միւսն Արդումանի: Այդ մատնիքները հանեցին թէ չէ, իրանց հարեանի աղջիկը բերաւ Հէրիքնազին տըւաւ և պատմեց թէ որի համար ինչ վիճակ դուրս եկաւ:

—Դէ ասա տեսնեմ, Մագթաղ ջան, սրա համար ինչ դուրս եկաւ, ասեց Հէրիքնազը իր մատնիքի համար:

—Դրա համար Դախունց Թէլլուն ասեց.

Սիրել եմ սէրն էրէսին,

Ըռէհան թերն էրէսին,

✓ Ով իմ սիրածն ինձ չըտայ,

Աստծու կայծերն էրէսին:

—Ամէն, ասեց Հէրիքնազն ուրախանալով: Դէ հիմի էլ էս ասա, սրա համար ինչ դուրս եկաւ:

—Դրա համար էլ Դիւլջըհանն ասեց.

Այ տղայ, բաղովն արի,

✓ Ոտներդ շաղովն արի,

Էս թաղը զալմաղալ է,

Ման տուր, էն թաղովն արի:

—Արի, հոգիս, արի, մըմաջ Հէրիքնազը: Խօ սուտ չէս ասում, Մագթաղ, ըղորդ էդպէս դուրս եկաւ:

—Սուտ չեմ ասում, իմ ախպոր աղիդ արեւ: Ում համար ինչ որ դուրս է եկել, բոլորն էլ միտս է: Զեր Մարիամի համար տես ինչ դուրս եկաւ.

Մի ծառ ունիմ թըբըլլի,

Պտուղն է օձի լըլի.

✓ Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,

Ինձ տըւին զարիբ տըլի:

—Խեղճ Մարիամ, բայց հէրն ու մէրն քնչ անեն, նրանք հօ չեն տըւել: Ես որ լինէի կասէի—

Գնացի ջուրը լըւացք,

Սապօնս էր ոսկէջրած,

✓ Իմ հէրն ու մէրն քնչ անեն,

Ճակատիս էս էր գըած:

—Դէ հիմի Շամիրինն ասա, թէ որ միտըդ է:

—Շամիրինը գեռ չէր դուրս եկել, որ ես եկայ, Մարիամը կըգայ կասի: Ինձ չըթողեց, թէ մինչև վերջը մնացել էի. գնա, ասեց, Հէրիքնազը մենակ է, սիրտը կընեղանայ: Ինքը պառաւ կնիկ է դառել, պառաւները հետ էր նստել:

—Խնչ պառաւ:

—Ինքն ու Արգումանի մէրը մի կողմ էին քաշւել, քիթ քիթ տըւած քըչփչում էին,

չիմացայ, ինչ էին խօսում:

— Բա քեզ համար թնջ դուրս եկաւ,
Մագլթադ:

— Ինչ համար էնպէս բան դուրս եկաւ,
որ ամենքն էլ ծիծաղեցին: Քրքրւի Խանումի
ջանը—ասեց.

Գիւլըմ, գիւլըմ, գիւլ չիչակ,
Ես ու դու մտնենք մի փրչակ,
Մինչև լուսը քրչիւրչանք,
Որ լուսանայ—կըչկըչանք:

— Ել ուր ես նեղանում, ուրախ բան է
դուրս եկել:

— Ե՛հ, դրանից ինչք՞ պիտի նեղանամ,
ինչ կուզի՞ թող դուրս գայ: Ես մի մատանի
էլ Արզումանի համար էի գցել, տես՝ թնջ
դուրս եկաւ.

Դարըլէր ջուր է գնում,
Հարցրէք՝ ուր է գնում,
✓ Քենուն մահանա արած՝
Իր եարին հիւր է գնում:

— Դու Արզումանի համար ինչք՞ էիր վի-
ճակ գցում, հարցրեց Հէրիքնազը՝ նախանձե-
լով:

— Ե՛հ, հէնց էնպէս: Մտքումս ասեցի՝
խեղճ տղայ է, քոյր չունի, բան չունի, մի
մատանի էլ նրա համար կըգցեմ, տեսնեմ

թնջ է դուրս գալիս: Եդ որ դուրս եկաւ, ա-
մենքն էլ հարցրին. «Եդ ումն էր, եդ ումն
էր», ես չասեցի: Յետոյ իմացայ, որ նրա քե-
ռակինն էլ է մի մատանի գցել, մէրն էլ
մի սադափ խաչ էր գցել: Քեռակնկայ գցածն
էլ էս դուրս եկաւ.

Կանցնեմ գետի էն կուռը,
✓ Կըքաղեմ դաստով նուռը,
Թէ որ սիրածս ինչ չըտան,
Կըքաջեմ խանի դուռը:

Մօր գցածն էլ էս դուրս եկաւ.

Գետը նի մըտայ, խոր ա,
Քաթան շապիկըս նոր ա,
✓ Իմ նանին խաբար արէք,
Ես օլքա օլքա կորայ:

— Խեղճ նանի, ով գիտէ՝ լաց էլաւ, եդ
որ լսեց:

— Չէ, նա ինքը չիմացաւ, հեռու նստած
ձեր Մարիամի հետ խօսում էր. նրան խաբեցին,
ուրիշ բան ասեցին. ա՛յ ինչ ասեցին.

Դու նստել ես դօշակին,
✓ Ուշքըդ, միտքըդ փեշակին,
Խըմել ես նըռան գինին,
Հոտ կանես մանիշակին:

— Ո՛ւր էր, եդպէս լինէր, խեղճ նանի
Հէրիքնազը շատ սիրում էր Արզումանի

մօրը: Մինչև այս տարւայ սար գալը նրա հետ մօտիկ յարաբերութիւն չունէր. մեծ էր իրանց գիւղը, իրանք գիւղի մի ծայրումն էին կենում, նրանք՝ միւս: Բայց այստեղ՝ սարումը դրկից էին: Գիւղացիք երբ որ սար են գնում, սովորաբար նոր դրացիներ են գտնում: Այստեղ մի քանի դագա միասին մէկ տան պէս են լինում. այստեղ աւելի լաւ է երևում, թէ որ տներն են միմեանց աւելի սիրելի. կամ որոնք են ուզում նոր բարեկամութիւն հաստատել, նոր խնամութիւն անել, որոնք են ուզում միմեանց աւելի մօտիկից ճանաչել: Մարիամը օգուտ քաղելով այս սովորութիւնից, աշխատեց բանն այնպէս բերել, որ դրկից դառնայ Արզումանի մօրը և ձեռքից եկած օգնութիւնն անէ նրան և մխիթարած պահէ: Հէրիքնազի էլ ուղածն այդ էր: Նա ամեն օր պառաւի ոտներն էր լրւանում, շաբաթը երկու անգամ գլուխը, երկու շաբաթը մէկ անգամ լողացնում էր, ջուրը բերում էր, կովը կթում, կերակուրն էփում, շորերը լրւանում, կարկատում, ամեն ազիզ կերակուրից նրա բաժինը պահում, ուտեցնում, ամեն երեկոյ տեղը շինում, քնացնում: Շատ անգամ էլ, Շամիրը տանը եղած ժամանակը ինքը գնում էր պառաւի մօտ քնում, նրան գրգռում, համ-

բուրում իր սիրելի ու կարօտը նրանից առնում: Երբ որդուն միտն էր բերում, ուզում էր լաց լինի, Հէրիքնազը չէր թողնում, այնպէս էր յոյս տալիս նրան մխիթարում, որ խեղճը սուս էր կենում: Խեղճ պառաւը չէր իմանում ինչպէս շնորհակալ լինի այս երկնային հրեշտակից: Նա չէր իմանում, որ սրանք որ և իցէ յարաբերութիւն են ունեցել կամ ունին իր որդու հետ: Որտեղ նստում էր, Մարիամի ու Հէրիքնազի գովասանքն էր անում, նրանց օրհնում:

—Ախչի Հէրիքնազ, հանաքը դէնը կենայ, ասում են դու Արզումանին սիրում ես, ըղորդ է, հարցրեց Մագթաղը պարզսրտութեամբ:

—Ի՞նչ կըլինի, որ ըղորդ լինի, պատասխանեց Հէրիքնազը:

—Ի՞նչ պիտի լինի, էն կըլինի, ինչ որ էլել է Քեարամուն ու Սօլուն. նրանց պէս կերւիք, ձեր մուրազին չէք հասնիլ:

—Ես լաւ կըհամարեմ նրա սիրովն երևեմ, քան թէ մի ուրիշի սիրովը կանանչեմ, էդ էլ գիտես:

—Դու լաւ կը համարես, բայց թէ քեզ թողնեն է՛... Ես էլ ուզում եմ Գրիգորի սիրովն երևեմ, բայց իմ հէրն ու մէրն ասում են.

«Ուզես չուզես, քեզ պիտի Կիրակոսին տանք...
Ե՛, Հէրիքնազ ջան, ես էլ դարձեր ունիմ
քեզ նման. շատ անգամ որ ինձ ու ինձ միտք
եմ անում, ասում եմ, մենք էլ ինչացու ենք,
որ իսկի մարդու տեղ չեն դնում, Հէնց ում
ասես՝ տալիս են, ուր ասես՝ շարժում են.
էլ ոչ հարցնել կայ, ոչ դէս, ոչ դէն: Բայց էլի
քու բանն իմիցը դժար է: Ես որ ուզենամ,
Գրիգորին կը սովորցնեմ, մի գիշեր կը գայ
կը փախցնի կը տանի: Մի քիչ զաւթաղալ կա-
նեն, յետոյ կը հաշտեն: Բայց քեզ որ փախ-
ցնեն, պիտի օլքա օլքա կորցնեն, էլ ոչ դու
կըտեսնես մեզ, ոչ մենք՝ քեզ: Դու էդ կանես:

— Ինչի՞ չեմ անիլ, երբ տեսնեմ ուրիշ
հնար չըկայ: Ինձ համար էնտեղ է լաւ, որ-
տեղ որ ինձ սիրում են:

— Մի՞թէ մենք չենք սիրում քեզ. ո՞ւմ-
նից ես մի դառը, մի կծու խօսք լսել, ո՞վ է մէկ
տնգամ քեզ ասել—«տեղըդ ծուխ է, դէնը նըս-
տիը»... մենք ամենքս էլ քեզ սիրում ենք: Մեզ
պիտի թողնես, ընկնես սարէսար, գնաս զա-
րիբ զուրբաթ տեղ, կը հիւանդանաս, մի սառը
ջուր տըռող չես ունենալ, կը մեռնիս, վրադ
սգող չի լինիլ... Օ՛, շատ դժար է, ասելն է
միայն հեշտ. մեր սարերի պէս սարեր, մեր
ջրերի պէս ջրեր, մեր բաղերի պէս բաղեր,

մեր քօլերի ու հանդերի նմանը ոչ մի տեղ
չես գտնիլ...

— Քրքրէս դու, Մազթաղ, հիմիկանից
լացս բերում ես: Ախի՛, մէկ թող դեռ լաւա-
նամ. յետոյ Աստուած ողորմած է, նա իր ստեղ-
ծածին չի կորցնիլ, ինչպէս որ ստեղծել է,
էնպէս էլ կը պահի: Ինչ որ մարդիս ճակատիս
գրած է, էն կը լինի, հազար դու էլ ասա,
ես էլ, մեր խելքն թնչ է կտրում: Հիմի ջա-
նըս սկսում է կտրտուել էրէկւայ պէս, ով
գիտէ էլի պիտի դողացնեմ...

— Օ՛, դրան դող կասեն, դեռ ո՞րտեղ ես.
ամեն օր կէսօրից յետոյ պիտի բռնի:

— Բա սրան մի դեղ, մի ճար չըլկայ:

— Դրա ճարն էն է, որ դողըդ բռնի թէ
չէ՝ գնաս վրադ սառը ջուր ածես. էնքան
պիտի ածես, որ ջանըդ սկսի զընգը զընգը
դողալ:

— Ասում են՝ վախն էլ կը պրծացնի, դու
մէկ օր ինձ վախացրու. թաքուն սառը ջուր
ածա վրաս, որ ես վեր թռչեմ...

— Եդ չէ, ասում են Նունիա մի տէրտէր
կայ, նա աղօթում է թէ չէ՝ իսկոյն կը տրոււմ
է դողը:

— Դէ էդ տէրտէրին ո՞րտեղ գտնենք հի-
մի: Արի մի ջրաման վերցնենք, գնանք ձորի

աղբիւրը, էնտեղ դու ինձ վրայ ջուր ածա, ինչքան որ գիտես: Շուտ արա գնանք, քանի որ Մարիամը չի եկել, նա որ գայ, էլ չի թողնիլ: միշտ ասում է՝ տաք պահիր քեզ, չըմբռնես: Ըղորդ է ասում, էն օրը որ էն թաց տեղը քնած չըլինէի, էս օրը չէի ընկնիլ: Արի գնանք, Հիմի ինչ կըլինի կըլինի կամ դէս կըկտրի, կամ դէն, ես մեռնելուց չեմ վախում, երանի շուտով մեռնեմ, էս աշխարհքիցս պըծնեմ: ինչ աշխարհք է, որ սրան թամաշ ենք անում, ապրում: գընանք, գընանք:

Ե.

Վարդավառից յետոյ սարեցիք լեռների գագաթներից վայր եկան և իրանց դադէքք սարքեցին մի անտառոտ հովտի մէջ: Մինչև այս ուրդը փոխւելը շատերը դեռ ևս արանումն էին, բայց Հիմա, որ հունձն աւարտել, խուրճը կրել էին կալերի մօտ դիզել, ամենքն էլ եկել էին սար, որ մի քանի շաբաթ սառը ջրերի վրայ, լեռնային զովաշունչ օդի մէջ հովանան: Գիւղացոց այս սովորութիւնը ամենայն տարի կրկնւում է միակերպ: Մայիսին

ուղարկում են տաւարը և ընտանիքը, իսկ տղամարդիկն սպասում են մինչև հունձի աւարտը: Շատ անգամ ամբողջ ուրդի մէջ շաբաթներով տղամարդի երես չի տեսնւում, կանանիքը կարողանում են պաշտպանւել զանազան աւազակային և սիրային յարձակմունքներից, բայց սովորաբար միշտ ահ ու դողի մէջ են լինում: Բայց երբ հաւաքւում են տղամարդիկը, սկսւում է մի նոր կեանք: Շատերը միայն հանգստանալու համար են գալիս, իսկ շատերն էլ մի նոր աշխատութիւն սկսելու մտքով: Այստեղ են շինում սովորաբար իրանց տան գործածական փայտէ գործիքները, ինչպէս՝ սայլ, գութան, լուծ, կամն, հորսլի, թի, խնոցի, մըղան, խոնջա, տաշտ, տաշտակ, խփի, ըողին (հաւանգ), զանազան կոթեր, գդալներ և շերէփներ:

Մի քանի հսկայական կաղնի ու աճարքի ծառերի տակ իրանց համար գործատեղի էին արել մինչև երեսուն, քառսուն տղամարդ և որն ուրաքով, որը կացնով տաշ էին անում, իսկ անգործներից ոմանք պառկոտել քնել էին բերանքսիվայր, ոմանք նստած թամաշա էին անում և զանազան խորհուրդներ տալիս շինողներին իբրև գ օ գ-ո ւ ս տ ա ս ի, այսինքն՝ աչքով միայն վարպետ և ոչ գործով: Այս-

պէսները ոչ մի բան շինելու շնորհք չեն ունենում: Այս անշնորհքներին էր և Շամիրը, որ միայն գդալ շինել գիտէր և ուրիշ ոչինչ: Սա անցեալ երեկոյին էր եկել արանիցը: Առաւօտը վաղ վերկացաւ և իր փոքր ուրազն ու կեռկտուցը վեր առաւ գնաց հասարակաց գործատեղին, որ գդալներ շինէ: Շամիրը դեռ նստած չընստած, ձաղարանց Թաթոսը ամբողջի միւս ծալրից կանչեց.

— Հէ հէ հէ ւ Շամ, Շամիր հէյ...
բղաւեց Թաթոսը մի քանի անգամ կրկնելով Շամիրի անունը, որովհետեւ բազմաթիւ կացիւնների և ուրազների ձայնը թող չէր տալիս լսելու մի խօսք, թէ և առանց այս էլ բղաւելով խօսելու սովորութիւնից զուրկ չէր Թաթոսը:

— Ի՞նչ է, ւպէր, ի՞նչ ես ասում:

— Արանիցն ի՞նչ խաբար ունիս:

— Ի՛հր խաբար, ձեր տղէքը մածուն են ուզում, շոքը շատ է զօռ անում:

Թաթոսը գլուխը տմբտմբացրեց, որով ուզեց ասել պէտք է մածուն հասցնել տղերանցը:

— Շամիր, ասում են՝ ձաղարանց տղէքը Հանէսի գլուխը պատռել են, ըղորդ է, հարցրեց մէկը:

— Ի՛նձ հարցրու էդ բանը, Շամիրն ի՞նչ գիտէ: ձաղարանց տղէքն ինչ ասես՝ կանեն, իրանք օխտնութ հոգի, Հանէսը մեն մենակ: Գցում են արխի մէջը, բահով էնքան խփում են գլխին, որ քիչ է մնում մեռնի, — ասեց տաշ անողներից մէկը Վարդան անունով, ուրազն ուսին դնելով, և դառնալով դէպի Թաթոսը գոչեց բարձրաձայն.

— Ս՛ հըլիւոր, ինչի՞ քու շների կապը չես քաշում, մարդ պէտք է Արզումանի նման գըլխիցը ձեռք վերցնի, որ ձեզ հետ խօսի: Ել ոչ ջուրվարի էք մտիկ տալիս, ոչ քօթի էք ականջ դնում, էդ ի՞նչ անաստաճութիւն է, որ դուք անում էք: Ասում եմ ջուրը նօբաթով է, նօբաթն իմն է, ջուրվարն ինձ է տըւել ջուրը, նրանք կատաղած շների նման վրաս թափւեցին, քիչ էր մնում սպանեն: Ասած է. «Խոփըդ սուր է, հանդը բաժանովի է». ասենք՝ ես մի մենակ տղայ եմ, քամակ չունիմ, հէնց պիտի ինձ ոտի տակ գցէք: Էնպէս բան աւրէք, որ Աստաճ վեր կալնի, թէ ի՛չ՝ Սուրբ Սարգսի անունը վկայէ, մի օր էլ ես ձեռք կըվերցնեմ գլխիցս, էն ժամանակը կըտեսնեք ո՛ւմ մէր տղայ կը բերի:

Այս խօսքի վրայ ամենքն էլ իրանց գոր-

ծիքները դադարեցրին և տեղնուտեղ լսողութիւն դառան:

—Այ տղայ, թէ՛ս էս հաշում, թէ՛ս էս գլխիցդ սարսաղ սարսաղ դուրս տալիս, ասեց Թաթոսը և շարունակեց աւելի բարկանալով և սպառնալով—Արզումանի նման շանիցն էս օրինակ առնում: Մարդասպանը դու ես, որ մարդասպանին էս սպառնում: Համբերիր, մէկ մօղրովը գնայ, տես քու կաշին ինչպէս եմ մաշկել տալիս:

—Ես ու իմ Աստուածը, Արզումանն էսպէս անմեղ էր, ինչպէս Աստուծո՛ւ գառը: Քեօխէն նրան տափ էր տըլել, նա էլ գնացել էր վարելու: Զեր բաղի տակի հողը, ներքի հողերի քեօնդալանը, վերի հողերի դիքավարը, քօլաբերանքս սիպտակ հողը, դամիջի չորս օրավար տեղը, որ ունիք հիմի, ո՛ւմն են էդ տափերը, Արզումանի հօրը չէր, ինչք՞ գցեցիք ձեր ճանգը. բա դու չես ամանչո՛ւմ, սաղ գեղը քանդում, տակն ու վրայ ես անում, բա դու խըղճմտանք, բա դու Աստուած չունիս...

—Տեսնում է՞ք, այ խալիս, տեսնում է՞ք, էս շունն ինչեր է հաշո՛ւմ...

—Վարդան, մի վախիր, մէկ լաւ վերածա դրա աբուռը, քանի որ մենակ է,—

շըշնջաց Վարդանին մի երիտասարդ, բայց Թաթոսը կարծեց թէ նա ասում է՝ «սո՛ւս կաց, ամօթ է, ծեր մարդ է, էդպէս բաներ մի ասիր», և սկսեց աւելի կատաղել:

—Կաց, ես քու էդ բլբլան լեզուդ կըկտրեմ տակիցը: Գիշերըս Արզումանն թէ՛ էր շինում քու կշտին. ասա՛ տեսնեմ, դու թէ՛ իրաւունքով ես մարդասպանին տեղ տալիս, ասա՛ տեսնեմ:

—Մոգոնիր, մոգոնիր, որքան կարաս, շառեր մոգոնիր, ես քու հնարած սուտերիցը վախողը չեմ: Արզումանին ո՞վ է տեսել ինձ մօտ, վկայ ունի՞ս, դէ հիմի դո՛ւ ասա տեսնեմ:

—Էս սաղ խալիսը քո՛ւ հօ չե՛ն, բոլորն էլ վկայ չե՛ն:

—Խալիսն ո՛ւր ես վկայ կանչում, Թաթոս բիձա. խալիսիցը մէկն էլ ես եմ. Արզումանի էրեսը ես չեմ տեսել, ասեց մէկը, գլուխը բարձրացնելով և կոշտացած ձեռքով ճակատի քրտինքը սրբելով:

—Այ խալիս, այ ջամհաթ, չէք լսե՛լ, որ Արզումանին թէ օրը ցերեկով, թէ կէս գիշերին տեսել ե՛ն, բղաւեց Թաթոսը:

—Լա՛ւ, որ տեսել են, Վարդանի մօտ հօ չեն տեսել, ասեց Մինաս անունով մէկը: —Արզումանին աղջրկէքն են տեսել ծաղիկ

քաղելիս. Շամիրի կնկայ Հետ է խօսեցել. գիշերն էլ Վերի աղբիւրի մօտ են տեսել, էլի Մարիամի Հետ:

— «Կէս գիշերին, Մարիամի Հետ, շշմառ ջրաց Շամիրը, չըհաւատալով իր ականջներին: — Մինաս, դու հասկանում ես, էդ թնջ ես ասում, հարցրեց Շամիրը:

— Ինչպէս թէ «հասկանում ես», խուլ Հօ չեմ: Արդումանին տեսել են քու կնկայ Հետ խօսելիս, ուրիշ մարդի մօտ չեն տեսել:

Շամիրի ջանը դող ընկաւ, ձեռքերն ըսկըսեցին դողդողալ, էլ բան չըկարաց շինել, վերկացաւ փրնթփրնթալով գնաց: Շատերն այդ նկատեցին և կասկածի մէջ ընկնելով՝ գլխները քաշ գցեցին: Նրա քամակից հեռացաւ և Թաթոսը:

— Ես ճաղար քօփագիցը մարդու խէր չի հասնիլ. սիրտս ասում է՝ էլի մէկ արիւն պիտի պատահի: Մինաս, դու էլ որ մի քիչ լեզուդ բերանումդ պահէիր չէր լինի: Շամիրը որ կայ՝ բըռի արջ է. հիմա պիտի գնայ կրնկանը ոտի տակը գցի, տըռի, ես գիտեմ նրա խաչին խասիաթը:

Այս խօսողը Խաչատուրն էր, Արդումանի երբեմն սրտակից բարեկամը: Հիմա էլ Ար-

դումանի Հետ միայն սա ունէր յարաբերութիւն, բայց ոչ ոք չըգիտէր:

— Ես Մարիամի մասին վատ բան չեմ մտածել և վատ բան էլ չասեցի, պատասխանեց Մինասը: Շատ կարելի է, որ Մարիամին Արդումանի մէրը լինի ուղարկած, ինքը չի կարում տեղիցը ժաժ գալ:

— Դէ եղպէս էլ պիտի ասէիր, բայց դու էնպէս ասեցիր, որ նա ուրիշ բան հասկացաւ:

— Նա որ շիտակ բանը ծուռ հասկանայ, ես թնջ մեղաւոր եմ: Էդ քօփագ շունը որ չը լինէր, ես էն էլ չէի ասիլ:

Այս միջոցին Սարգիս քեօխւան եկաւ, և նստածները տեղերիցը վեր կացան:

— Բարի յաջողում, տղէք, Աստուած ղըլաթ տայ, ասեց քեօխւան և նստեց մի գերանի վրայ:

ՄԻՋԱՆԿԵԱՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ով, չուզենայ կարող է չըկարդալ)

Սարգիս քեօխւան մօտ վացսուն տարեկան մարդ էր: Նրա գէմքի գծագրութիւնը

և հայեացքը ցոյց էին տալիս, որ բաւական չար ու բարի տեսած մարդ էր: Ոչ ոք գեղի հաւատարմութիւնը այնպէս գրաւած չէր, որքան սա: Գիւղացոց շահերը պաշտպանելու համար ամենայն ինչ զոհ բերելու պատրաստ էր:

Գիւղ ասածդ (եթէ ոչ հիմա, գոնէ շատ առաջ) մի ջոկ աշխարհ, կղզիացած երկիր է է, և ունի իր կախումն սւ անկախութիւնը. իր մատնիչն ու պաշտպանը, իր Վասակն ու Վարդանը: Գիւղացիք օրտեղ որ բնակուում են, ինչքան տեղ որ բռնուում են, ասում են՝ էս տեղերը մ եր ն է: Այստեղից յառաջ է գալիս սեփականութեան մասին մի ջոկ գաղափար, որ նման չէ այն սեփականութեանը, որ տիրող օրէնքն է սահմանում: Հետեւեալ խօսակցութիւնից կերևայ, թէ որպիսի գաղափար ունին գիւղացիք գիւղի սեփականութեան մասին:

— Տղէք, Թաթոսն էստեղ էր, քնչ էլաւ, հարցրեց քեօխւան:

— Նա տեսաւ որ դու գալիս ես, ինքն ըռադ էլաւ, պատասխանեցին մի քանիսը:

— Ա՛յ, ճաղար շուն...

— Սարգիս բիձա, էդ անիրաւի ձեռին

մենք մինչև երբ պիտի տանջւենք, գանգաոււեց Վարդանը:

— Մինչև լաւ իմանաք, թէ քնչ գազան է դա:

— Ո՞վ չի ճանաչում էդ քօփագին... մեղայ քեզ Աստուած, ինչէր է գալիս բերանըս:

— Դուք էն էք տեսնում, ինչ որ հիմի է անում, բայց էն չէք տեսել, ինչ որ մինչև հիմի արել է: Էս տեղիցը որ հիմի մենք սաբալախի (խոտահարի) ենք տալիս, առաջ ո՞վ էր իմացել էդպէս բան. էդ-էդ-էդ անիրաւը գնաց մեր պապական տեղերը մի թաւադի վրայ ծախեց:

— Լաւ, քնչպէս է ծախում, իրանը հօ չի, որ ծախի:

— Էդ ես էլ չէի իմանում, թէ ինչպէս են ծախում, բայց հիմի քիչ ու միչ հասկանում եմ: Գիտէք ինչ կայ, գեղըցին մի տեղ թէկուզ հարիւր տարի կենայ, կարող չի ասել, որ էս տեղն իրանն է, բայց եթէ թաւադը մի տեղ տասը տարի կենայ, էն տեղը կըմնայ իրան: Բայց թաւադն ինչի համար է կենում. նա վար չի անում, ցան չի անում, գեղըցին է վարում, ցանում, նրան բ ա հ ր ա տալիս: Հիմի լաւ ականջ դրէք: Թաւադը նրանով է հաստատում տեղն իրանը լինելը, երբ որ հաստա-

տում է, որ էդ տեղիցը նա բահրա է առել, կամ սաբալախի, կամ իջարա: Եդ էլ ինչո՞վ պիտի հաստատի: Երբ որ ես, դու, սա, նա ասենք՝ ըզորդ է ասում, մենք էստեղ կացել ենք, բայց դրան միշտ բահրա ենք տւել, հասկանում էք, թէկուզ ոչինչ էլ տըւած չըլինինք, միայն թէ ասենք տըւել ենք: Եդ խօսքն ասելու համար թաւաղը սրան, նրան փող է տալիս, պատիւ է տալիս, որ քննութեան ժամանակը գնան ասեն, ըզորդ է, մենք բահրա ենք տըւել: Այ, էդ ճաղար շուներ քանի՞ քանիսից է փող առել, սուտ երդում կերել, վկայութիւն տըւել, թէ մենք սաբալախի ենք տըւել, բահրա ենք տըւել: Դա, մէկ էլ Մաթոսն ու Մարկոսը, — ողորմի. նրանց կշտի մեռելներին — մեր բոլոր հանդերը տըւին թաւաղներին: Առաջ ո՞վ էր թաւաղի անուն իմացել, ո՞վ էր նրանց երեսը տեսել: Մի քսան տարի չըկայ, ինչ որ դրանք եկան մէկ մէկու ետեից. մարդ իմանայ՝ մինչև էդ ժամանակը ո՞րտեղ էին, հալբաթ առաջ եղպէս օրէնք չըկար: Հէնց որ հանդերն սկսեցին չափել, որտեղ մի քաղցած թաւաղ կար, ձեռքը մեկնեց, թէ էս իմն է: Միտս է, մէկ անգամ եկողները երեսնից աւելի էին, մէջերումը սուտ թաւաղներ էլ շատ կային: Շատերի անունը

հիմի էլ միտս է, ալ ասեմ մի քանիսին:

Սարգիս քեօխւան այստեղ տէրողորմեան գրպանից հանեց և սկսեց թաւաղների անունը տալով հատիկները ձգել, որ տեսնէ քանիսի անունն է միտը: — Օրբէլիանօվ, Մուխրանսկի, Չաչիկօվ, Բարաթօվ, Թուրքեստանօվ, Սուխանօվ, Շանշիօվ, Մէլիքօվ, Փիրադօվ, Փէրշանգօվ, Թարխանօվ, Ղօրդանով, Աւթանդիլօվ, Մուրթուլաձէ... Ե՛հ էլ ո՞ւմ միտն է, քանըզ շուն շատ էին: Մէկ տեղից քսանմարդ բռնում էր, ամենքն էլ ասում էին «իմն է»: Խազնի մարդն ասում էր՝ թագաւորական է, Սիօնի տէրտէրն էլ ասում էր՝ վանքական է: Բայց էս երկուսը աչքները էս և էն թաւաղի վրայ էին գցում, որ տեսնեն որից կարող են շատ փող առնել, որ իրանք ձեռք վերցնեն: Իրանք թաւաղներն էլ էին մէկ մէկու համար վկայութիւն տալիս, խօսք մէկ էին անում, իրար մէջ բաժանում. չափողներն էլ ջոկ էին շահւում: Գեղըցոց վկայութիւնն էլ հաղիւր էր, որ կողմ ուզում էին, էն կողմն էին շուռ տալիս նրանց. ուղիղ խօսողներին հեռացնում էին կամ ասածը ծուռ գրում և իրանց ձեռք քաշել տալիս: Ահա էսպէս մեր բոլոր տեղերը մնաց դրանց. մենք էլ ոչինչ չունինք, ոչ հող, ոչ ջուր, ոչ ծառ, ոչ խոտ,

ամենի համար էլ փող ենք տալիս էն էլ մէկն երկուսով, ամեն տարի թանգացնում են:

— Որ գիտէիք եղպէս է, ինչք չէիք արգա տալիս, ինչք չէիք գանգատուում:

— Բա քիչ ենք արգա տըւել, քիչ ենք գանգատ արել. էլ գիւանխանա չենք թողել, ամեն տեղ էլ արգա ենք տըւել: Ես հիմի եմ հասկանում, որ մեր բոլոր աշխատանքը զուր էր: Մենք արգա էինք տալիս, թէ եղ տեղերը մերն է, չէինք իմանում, որ թագաւորական տեղը խաղնինն է: Դաւին խաղնէն պիտի քաշէր, նա պիտի իր ունեցածի տէրը դառնար. մենք մեր փողով նրա իրաւունքն էինք պաշտպանում, բայց նա մեզ չէր օգնում: Խաղնէն էլ էր թաւաղների ձեռին, գիւանխանէքն էլ, մեր խօսքին ո՞վ պիտի ականջ դնէր: Շատ անգամ ծեծում էլ էինք թաւաղներին, երբ որ գալիս էին բահրա ուզելու, չէինք տալիս: Բայց դրա պատիժն էլ քաշում էինք:

— Թուլաձէին քնչպէս ծեծեցիր, Սարգիս բիձա, մէկ դու եղ ասա:

Սարգիս քեօխւան միտը բերաւ իր ջահելութիւնը, մի քթահաղ տըւաւ ու սկսեց.

— Եղ Թուլաձէն մի երկու անգամ եկաւ մեր բաղերի տակի հողերին գաւի տըւաւ, թէ

իմն է, պիտի բահրա տաք: Մենք չըտըւինք: Սա գնաց մօղրովին գանգատ արաւ, նրանից մի հրաման բերաւ, օխտնութ մարդ էլ հետը: Բահրա առնելը շատ էին հեշտացնում մօղրովները, բայց եղ կենայ դեռ: Մեր քեթխուղէքը հաւաքւեցին, խորհուրդ արին, թէ քնչ անենք, տանք թէ չըտանք: Վճռեցին, որ չըտանք. եթէ տանք, եղ տեղերն իր վրայ կըհաստատի, հիմի իր ուզածը մի ոչինչ բան է, բայց յետոյ կըգայ տասնից մէկը կառնի, յետոյ էլ չորսից ու երեքից մէկը: Մի քանի վախուկ մարդիկ էլ, սրտները դող ընկած՝ ասում էին՝ ուզենք չուզենք՝ պիտի տանք, մօղրովիցը հրաման է բերել, նրա հրամանին ո՞վ կարայ ընդդէմ կենալ: Քեօխւան լուսահոգի Ակօբն էր, նա ասեց. Մօղրովի հրամանն ինձ վրայ է, ես նրա պատասխանը կըտամ. նա քնչ գիտէ թէ էս տեղերը սրանն է, որ հրաման է տըւել: Չըպիտի տանք, թող ուր ուզում է գնայ: Թուլաձէն Թաթոսի տանն էր վեր եկել, էլի էս անիծածն էր նրա օգնականը: Սա սովորեցնում է, թէ առաւօտը հորթերը գալու ժամանակը քու մարդկանցով գնա առաջը կըտրիր տար տուն արա մի աղալում ու դուրս չանես, մինչև բահրէդ չըտան: Նա էլ հէնց էսպէս էլ արաւ, հորթերը հա-

լաքեց տարաւ մի աղալի մէջ արաւ, թէ՛ չեմ
թողնիլ մինչև իմ բահրէն չըտաք:

Կովերն արօտատեղից եկան: Հորթ չըկայ,
որ կթեն. հիմի դու տես սրանց բառանջելը,
կովերը դռներին են բառանջում, հորթերն ա-
ղալումը: Էս անիծած ճաղարը դուրս է եկել,
իրանց կտրին կանգնել ու պարծենալով ասում
է: «Ես որ ասում եմ եկէք բահրան տանք,
ինձ չէք ականջ դնում, դէ հիմի գնացէք ձեր
հորթերը բերէք, տեսնեմ ինչպէս էք բերում»:

Լուսահոգի մէրըս ասեց. ա՛յ տղայ, գնա՛
մեր հորթերը բեր, թէ չէ՛ էլ հաց չեմ տալ
որ ուտես: Ես էլ հէնց էդ էի ուզում: Զա-
փարիցը մի բըհիր հանեցի, վազեցի դէպի
հորթերը: Թուլածէն ինձ որ տեսաւ թուրը
հանեց: Մի ափիցեր էր, ապէլատներ էլ ունէր
ուսին, խաչ էլ ունէր կուրծքին: Բհիրս վրայ
բերի թէ չէ՛ թուրն էրկու կտոր էլաւ. մէկ
էլ որ հասցրի, տեղն ու տեղը փռւեց, ու
«վայմէ՛, միշէլէթ» (ո՛հ, օգնեցէք) կանչեց:
Ո՛վ պիտի օգնէր, մինչև իր մարդիկը կօգնէին,
իմ օգնականներն աւելի էին շատացել: Լու-
սահոգի Ղուկասը նրա բձերին աղցան էր
արել: Մեր քեօխւան հէնց տեսնում է որ ես
գնում եմ, քամակիցս մինչև քսան տղայ է
ուղարկում: Էսպէս մի լաւ ջարդ ու բուրդ

արինք, և հեշտ էլ պրծանք. էն գնալն էր, որ
նրանք գնացին, էլ չիմացանք կոտորեցին, թէ
սաղ մնացին:

— Ա՛յ լաւ դատաստան, ասաց քեօխւին
հասակակից մէկը: Ախպէր, գնում ես գան-
գատ, տանում են բերում, բերում են տա-
նում, մարդու հոգի է դուրս գալիս, դրանց
զաւթրին չի հատնում: Սրան մեղարահացեր
տար, նրան գառը տար, մէկէլին թաղարնե-
րով ալիւր տար, մի ուրիշին փող տուր.
մէկի ոտներն ընկիր աղաչիր... Ո՛վ է գեղըցու
ըռխին մտիկ տալիս: Տասնով, քսանով գնում
ենք դիւանխանի պատերի տակին շարւում
արեգունն արած խողերի նման, ո՛վ է մեզ մար-
դու տեղ գնում, գիր չենք գիտում, օրէնք
չենք գիտում. մի քիչ էլ որ էրեսներս պըն-
դացնում, ներս ենք մտնում, ստորոժը շընք-
ներիս խփելով դուրս է անում: Էսպէս քաշ
արի, քաշ արի, յետոյ եկ տանդ վեր ընկիր:
Գեղըցիք էլ ասում են՝ մեր փողերը տարաք
կերաք, ոչինչ էլ չըշինեցիք: Տօ, ձեր փողերը
զահրումար ըլի ուտողի գլխին, մենք ենք
ուտում...

— Էդ լաւ դատաստան է, Պետրոս, բայց
ամեն անգամ չի մարսւում: Դրանից սիրտառած՝
Նախուսովին էլ ծեծեցինք, բայց քիչ մնաց

Սիբիրէն ուղարկում: Ուղարկէին էլ, ո՞վ էր հարցնողը, ո՞վ պիտի ասէր՝ ինչի՞ էք ուղարկում:

— Եդ թնչպէս էլաւ, Ստրգիս բիձա, մէկ էդ էլ պատմիր, խնդրեցին ջահէլները, և իրանց գործը թողնելով՝ որպէս թէ հանգըստանալու համար, շարւեցին քեօխւի չորս կողմը: Քեօխւան չիբուխը լցրեց, և չախմախին խփելով՝ սկսեց իր պատմութիւնը.

— Ս.յ ինչպէս էլաւ: Լուսահոգի Ղուկասը—Արղումանի հէրը—մի առաւօտ եկաւ ինձ մօտ: Ես ու նա ընկեր էինք, ուր էլ որ գնայինք, միասին կերթայինք: Մի տղամարդ էր որ, քսան մարդու չէր ասիլ Աստուծ է ստեղծել... Ի՞նչ էս նստել, ասեց, արի գնանք կակալ թափ տալու: Ասում եմ՝ ո՞րտեղ. նա թէ՛ մեր տափի կշտի կակալին կոտրատում են էնքան բռնել են. ոչով չի գնում թափ տալու, Նախուսովիցը վախենում են, նա չի թողում, ասում է՝ իմ բաղի կշտին են, իմն են: Ասում եմ՝ էդ թնչ խօսք է, հէնց ինչ որ իր բաղի կշտին ըլի, իրանը կըլի: Իր տեղը չափարած է, չափարից դուրս նա ոչինչ չունի: Նա թէ՛ էս էլ հէնց էդ եմ ասում: Արի գնանք, թող ով ղօչաղ տղայ է, գայ մեր առաջը կտրի:

Մէկ մէկ էրկէն կակալթափի առանք, գնացինք: Հէնց նոր էինք ծառը բարձրացել,

մէկ մէկ ճիւղ դեռ չէինք թափ տըւել, մէկ էլ տեսանք հրէս օխտնութ հոգի ծառի տակը կտրեցին: Նախուսովի բճերն էին: «Չամօդիթ, թքւէնի ռջուլի» (վայր իջէք, ձեր հաւատը...) որ չասեցին, մեր Ղուկասի աչքերն արնով լցւեց: Կացէք, ասեց, էս ռջուլի նշանց կըտամ: Վէր էկաւ, էրկէն ձողին ձեռին, զրաղ կանգնեց ու մէկ թէ էրկու սրանց, էլ իսկի չըթողեց որ մօտենան, մինչև էս էլ վրայ հասաւ ու էս փորերնին ուռած բաղանջիներին կալմէջ արինք, մինչև փախան, գլխները պրծացրին: Ասեցինք էս է, պրծանք, բայց մէկ էլ տեսանք, հրէս ինքը Նախուսովն է գալիս, մի քսան մարդ էլ հետը: Ասեցի՝ Ղուկաս, սրանց հետ կուլել չի ըլիլ, կամ փախչենք գլխներս ազատենք, կամ թէ չէ ասենք. «Աղա, էս ծառերը քոնը չի, դու ինչո՞ւ համար էս արգելում»: Եկաւ թէ չէ՝ փափախնիս վեր կալանք, առաջին կանգնեցինք, որ տեսնենք ինչ է ասում, պատասխանը տանք: Բայց անիրաւն էկաւ թէ չէ՝ «չահարիթ, (կապոտեցէք) ասեց, մագիթի ռջուլի (դրանց հաւատը): Մեր հաւատին դիպան թէ չէ, Ղուկասի փափախը ձեռիցը վեր ընկաւ: Կատաղած ասլանի նման ընկաւ Նախուսովի վրայ, ու տեղնուտեղը վէր կոխեց,

սրտին չոքեց: Բճերն իսկոյն վրայ թափւեցին, ես էլ ուզեցի օգնել, բայց գլխիս էնպէս խփեցին, որ շըշմած վեր ընկայ: Աչքս մէկ էլ էնտեղ բացարի, որ տեսայ երկուսիս էլ կապոտել են:

Ել ինչ գլխներդ ցաւացնեմ. մեզ տաւան քաղաք, գցեցին Մետեխի բերդը, դուդսաղի շորեր հագցրին, ամեն օր ջուր էին կրել տալիս, ճանպէքը սրբել տալիս, սև հաց էին ուտացնում... Էսպէս պահեցին մինչև վեց ամիս. վեց ամսից յետոյ դուրս բերին տարան մի դիւանխանա: Եդ դիւանխանի գլխաւորը ինքը Նալխուսովն էր: Նա ինքը վեր գցել տըլաւ մեզ ռօղգի խփել տըլաւ. քամակներիս կաշին մաշկել տըլաւ, յետոյ բաց թողեց. «Ի՛է հիմի գնացէք, ասեց, խելօք կացէք, իմացէք ում հետ գործ ունիք»: Մեր շորերը մեզ տըլին, հագանք, եկանք մեր տները, երեք ամիս տեղումը պառկեցինք: Գեղըցիք քանի անգամ եկել արգա էին տըլել մեզ համար, որ մենք անմեղ ենք, բայց արգան հէնց իրան Նալխուսովի ձեռքն է ընկնում. նա պիտի լինէր գեղըցոց խնդիրքի կատարողը, բայց նա այն թղթերը կամ կէրէր, կամ դէն կըգցէր: Հիմի էլ որ միտս է գալիս, ջանս փշաքաղում է: Ախրը երբ որ պատժողդ

ու ազատողդ քու թշնամին է, էլ թնչ կարող ես անել նրան:

— Մախլասի, գեղըցու բանը մի դարդ ու բալա է, ասեց Վարդանը: Մենք որ կանք, էրեխի պէս բան ենք: Երեխէն որ պահող չունենայ, ջուրն էլ կընկնի, կրակն էլ, ինչ ասես կըպատահի. մենք որ մեր գլուխը չըպահենք, ոչով մեզ իշի տեղ էլ չի դնիլ: Մարդ իմանայ, թնչ է մեր մեղքը, որ էս օրին ենք...

— Գառների մեղքն թնչ է, որ գալլերն ուտում են: Մեր մեղքն էն է, որ մենք ոչիար ենք, գալլերը մի կողմից պիտի ուտեն, մարդիկը մէկ էլ կողմից կթեն ու խուզեն: Խի տեսած կա՞ք, որ մէկը գայ մեզ համար մի բան բերի, մի բան տայ. դիփ էլ տանում են ու տանում: Էսօր գնա ճանպա շինի, էգուց գնա մորեխ կոտորի, էսօր էս տուր, էգուց էն, իշի պէս բանեցնում են, ոչխարի պէս բուզում, ով է մեր տէրն ու տիրականը: Գող ու աւազակ մի կողմից են թալանում, մօղղով ու եսասաւուլ մէկ էլ կողմից ծեծում, ջարդում, թաւաղներն էլ ջուկ են մեր միսն ուտում, արիւնը ծըծում, որը զօռով, որն էլ խաբէլով: Ի՛նչ սատանութիւն ասես՝ որ դըրանք չեն անում, ոչ Աստըծուն են հաւա-

տում, ոչ թաղաւորիցը վախում, ոչ ամօթ ունին, ոչ երկիւղ: Այ էդ Քաշարօն, որ էդքան տեղեր զաւթել, ուտում է, գիտէք՝ ինչպէս խաբեց մեզ: Դա մի խեղճ մարդ էր, մի խեղճ սէլապան, քաղքումը սէլապանութիւն էր անում, շիրաջների համար Կախէթից գինի էր կրում, ձկնապանների համար Սալեանի՝ ձուկը: Մի ձմեռ ալափ չունէր, որ եզինքը պահել էր, գիւփ էլ կոտորուեցին, մնաց խեղճ: Քաղքիցը վեր կացաւ եկաւ մեր գեղը, մի բօստանի տեղ ուզեց մեր խալխիցը, նրանք էլ տըւին, թէ խեղճ մարդ է, թող իր համար մի բան սերմի, մի բան աշխատի, տա՛նի իր օղլուշաղը պահի: Քաշարօն դառաւ բօտանչի. ամեն տեսակ կանաչեղէն ցանեց— լօբի, սիսեռ, սոխ, սխտոր, բակլա, դըթում, քալամ, կարտօփիլ, թամբաքու, մի խօւքով ինչ ասես— խիար, խարբուզակ, ձմեռուկ, ոսկ, դազար: Կշտին էլ մի դազա էր շինել էնտեղ էր կենում գիշեր ցերեկ: Մէկ էրկու տարի անցկացաւ մի քանի շահի աշխատեյ, մեր տէրտէրի հետ ընկեր դառաւ, ու նրա հետ բօստանը չափարեց բաղ շինեց, կշտի էլ մի ջաղաց: Մէկ էրկու տարի էլ անցկացաւ, տէրտէրը մեռաւ, բաղն էլ, ջաղացն էլ մնաց Քաշարօն: Էսպէս քաշ տըւաւ մինչև տասը

տարին լրացաւ. տասը տարուց յետոյ գնաց մի թաւաղի փող տըւաւ, նրա ազգական գըրւեց, դառաւ թաւաղ, յետոյ եկաւ բաղն ու ջաղացն էլ հաստատեց վրան, մի երկու հարիւր օրավար էլ ուրիշ տեղ խլեց մեզանից, թէ էս էլ է իմը: Մի սիրուն էլ հարսն ունէր, ինքը բացերես և լեզւանի, միշտ մօղրովների ու նաչալնիկների հետն էր ժամանակ անցկացնում, նրանց հետ սարերումն ու ձորերումը քէփ քաշում, էլ ո՞վ կարող էր նրան մի բան ասել: Շատ էլ գանդատ արինք, արգա տըւինք, կռիւ էլ արինք, թակեցինք դուս արինք, տուներ, ջաղացը քանդեցինք, բայց պատիժն էլ քաշեցինք. ոչինչ չըլարացինք անել, մեր խօսքն անց չի կացաւ ոչ մի տեղ:

Դիւփարովն էլ Քաշարօի նման արաւ: Նա էլ խեղճ ճօն էր՝ փափախչի: Եկաւ մեր գեղի մօտ, Քափանաքչի մի թուրք բէգի հետ մի ջաղաց ու բօստան շինեց, էդտեղ համ ճօնութիւն էր անում, համ ջաղացպանութիւն: Լաւ փող աշխատեց մէկ տղին լաւ ուսում տըւաւ: Տղան էնպէս մի ղուլլուղի մէջ մտաւ, էնպէս մի նաչալնիկ ունեցաւ, որ խօսքն ամեն տեղ անց էր կենում: Սա վեճ բաց արաւ գեղացոյց հետ, վերջը բոլոր գեղը

դաւթեց, հիմի իրանն է թէ գեղը, թէ նրա
էրկու հազար դեսետին ջրովի հողը: Հիմի
մեր թուրքերը կիսովի են վարում նրա հա-
մար, խոտահարկն էլ ջոկ են տալիս. տներին
էլ ջոկ են հարկ տալիս, թագաւորի խարջն
էլ ջոկ են քաշում, խեղճերն աղքատութիւ-
նից քաղցած կոտորւում են. գողութիւնով
են ապրում, ուրիշ ապրուստ չունին: Ուրիշ
տեղ էլ չեն ճարում, որ էդտեղից դուրս գան
հեռանան:

— Սարգիս բիձա, մէկ անգամ ասա մեր
աշխարհքն անտէր է, ու պրծիր. էլ թնչ ես
գլուխըդ ցաւեցնում, ասեց Պետրոս բիձան,
որ քեօխի բոլոր պատմածների ականատես
էր և մասնակից:

— Անտէր որ ըլի, էլի լաւ է, շների ու
գէլերի ձեռքին է: Իմ խօսքը մեր ճաղար
շան մասին էր, ես հեռու գնացի: Էլ մի
թաւադ չըկայ, որ նրա համար վկայութիւն
չը լինի տըւած. թէ մեր գեղի, թէ մեր
հարեան գեղերի բոլոր թաւադների հա-
մար էլ դա սուտ երդում է կերել, սուտ վը-
կայութիւն տըւել. մեր գեղը դա է քանդել...

— Դէ թնչ անենք, Սատաճ էլ դրա տու-
նը քանդել...

— Սմմէն, ամմէն, ձայն տըւին ամեն
կողմից...

2.

Աղբիւրի սառը ջուրը ոչ միայն չըլաւա-
ցրեց Հէրիքնաղին, այլ և աւելի սաստկացրեց
նրա տկարութիւնը. բոլորովին տաքութեան
փոխելով՝ ձգեց անկողնի մէջ:

Շամիրը երբ որ քաշւեց դէպի դագէն,
այդ ժամանակ Հէրիքնաղը սաստիկ տաքու-
թեան մէջ դելն էր տալիս և վերմակը վրա-
յից շրպուտում: Մարիամը կշտին նստել էր
տխուր ու տրտում և ծածկում էր, ծածկում
էր Հէրիքնաղին, որ չըմբսէ: Շամիրը ներս
մտաւ և լուռ ու մունջ հրացանն առաւ,
դուրս գնաց:

Այս վերջին օրերը Մարիամը բաւական
փոխւել էր և սկսել էր սէր ցոյց տալ մար-
դին. հետը խօսում, ծիծաղում էր, հանաք-
ներ էր անում, ոտ ու գլուխը շուտ շուտ
լըւանում: Չորս ամիս էր, որ Մարիամը լղի
էր և երեխան արդէն սկսել էր փորումը պըր-
պըրտալ և ուրախացնել մօրը: Մարիամի քաղցը
վարմունքն ու յարաբերութիւնը բաւական

կակղացրել էր Շամիրին, և նա սկսել էր մեղմացնել իր կասկածները, բայց այժմ, երբ լսեց նրա գիշերալին լարաբերութիւնը Արզումանի հետ, նրա քաղցր վարմունքը բոլորովին ուրիշ կերպարանք ստացաւ իր աչքումը:

«Օ՛... ես հիմի ամեն բան իմացայ: Իմ կնիկը ինձ ատեց, ուրիշին ձեռք բերաւ, բայց այդ բանն ինձանից ծածկելու համար, երևի սիրողի խորհրդով, սկսեց սէր ցոյց տալով ինձ քնացնել: Ես էլ ասում եմ, հիմա բախտաւոր եմ, կնիկս ինձ շատ է սիրում, վաղը միւս օրը զաւակի տէր կը դառնամ, նա ինձ «հալը» կասէ, ես էլ նրան իմ որդիս կը համարեմ... Ախմանիս, ախմանի Շամիր, մի անուն ունէիր խալիսի մէջ, էլ ուրիշ ոչինչ. էլ այսուհետեւ ինչո՞ւ համար ես ասըում, երբ որ էդ անունը ցեխի մէջ ընկաւ»: Այսպէս ինքն իրան փնթփրնթալով՝ բաւական հեռացաւ Շամիրը և անյայտացաւ անտառի խորքումը:

Ամբողջ երեք օր չերեաց Շամիրը: Մարիամը կարծում էր, թէ կամ արան կըլինի գնացած, կամ որսի, այս պատճառով մի առանձին կասկած և մտատանջութիւն չունէր այդ մասին: Արզումանը օգուտ քաղելով անտառի խոռութիւնից ամեն գիշեր գալիս էր

նշանակած տեղը, ուր տեսնում էր նրան Մարիամը և Հերիքնազի առողջութեան մասին տեղեկութիւն հաղորդում:

Է.

Մի ամպոտ և մութ երեկոյ էր: Մարիամը կովերը կթելուց լետոյ երկու փափուկ հաց, մի քանի կտոր պանիր մի աղլուխի մէջ կապեց ու ճանապարհ ընկաւ դէպի ջուխտակ աճարքին: Ճանապարհին նրա գէմը ելաւ Շամիրը: Մարիամը մարդուն տեսաւ թէ չէ՝ տեղնուտեղը մեխեց:

— Ո՛ւր, առաջ բարի, հարցրեց Շամիրը հեգնելով:

Մարիամն այնպէս շփոթեց, որ ոչ մի պատճառ չըկարաց հնարել, իսկ ճշմարիտն էլ վախեցաւ խոստովանել:

— Բեզ եմ հարցնում, այ կնիկ, ո՛ւր ես գնում էս կէս գիշերին քօլէքօլ ընկած, պընդեց Շամիրը սպառնողական ձայնով:

Պատասխան չը կայ:

— Սիրողիդ մօտն ես գնում, էնպէս չէ, արի ես քեզ կըրտանեմ նրա մօտ: Այս ասելով՝ Մարիամի ձեռքից բռնեց և քաշ տալով՝ տա-

րաւ անտառի խորքը: Մարիամն ամօթուց ազազակ չը բարձրացրեց, որ մարդ չիմանայ, բայց ընկաւ Շամիրի ոտները և սկսեց աղի արտասուքով թաց անել:

— Դու ուրիշ բան մի մտածիր, Շամիր ջան, Աստուած, երկինք, ծով, ցամաք, ես անմեղ եմ:

— Տեսնում եմ, տեսնում, այլ լիրբ, աներես, ես քօռ չեմ. դու որ անմեղ ես, էլ ո՞վ է մեղաւորը: Կէս գիշերին Արզումանի Հետ թնչ գործ ունէիր դու, ո՞ւր ես գնում Հիմի, ո՞ւմ Համար ես տանում էդ աղլուխը:

— Աստուած, երկինք, Շամիր ջան, ես անմեղ եմ, ինչ որ լսել ես, լետոյ կիմանաս դրա պատճառը. Հիմի ինձ Հաւատա, Աստըծուն Հաւատա, ես անմեղ եմ:

Մարիամը կարծում էր, թէ իր երգումով մարդի մտքի մէջ մի երկմտութիւն կը ձգի, ժամանակ կը վաստակի արդարանալու Համար և մահից կազատուի. բայց անգուց Շամիրի հոգին սեւացել էր, խիղճը քարացել, աչքերն արնով լցւել, ջանը դող ընկել, ականջները խլացել. նա Մարիամին այս ըռպէիս Համարում էր իր որսերից մինը, որի քամակին օրերով ման է գալիս, և տեսնելուն պէս՝ գետին տապալում հրացանի գնդակով: Մարիա-

մը, որ նրա ոտներն ընկած, աղիոգորմ արտասուք էր թափում, և ամեն սուրբի, ամեն խաչի և աւետարանի անունով երգւում, մէկ էլ լսեց լանկարծ. — «Հոգիդ տո՛ւր, դանջըղ... Մարիամն սկսեց երեսը խաչակնքել ինչպէս անմեղ նահատակ և աչքերը դէպի երկինք ձգել, բայց դեռ խաչի նշանը ամբողջութեամբ չէր դրոշմել կուրծքին, լանկարծ կծկւեց Շամիրի ոտքի տակին: Եղեռնագործը մի քաջցիով անշնչացրեց այն անմեղ, այն միամիտ, այն սուրբ Մարիամին, որ իր կեանքի մէջ ամուսնական ուխտի գէմ մի ցնորք անգամ իր մըտքիցը չէր անցկացրել:

Խեղճ կանայք, արդեօք զգո՞ւմ էք դուք ձեր գերութիւնը, ձեր ստրկութիւնը: Ի հարկէ, ո՞չ: Կարծում էք թէ այդ է ձեր վիճակն ու ճակատագիրը, որ դուք պիտի դառը լինիք, իսկ ձեր մարդիկը՝ գայլ: Մարդիկն էլ կարծում են, որ իրաւունք ունին ձեր կեանքի վրայ, մոռանալով՝ որ ինչպէս կեանք տալ կարելի չէ, և ոչ անել կարելի է:

Եղեռնագործը տեսաւ որ իր զոհի շնչառութիւնը ալ ևս չի լսում, մի ժամի չափ մնաց քարացած: Յետոյ չարագործութիւնը ծածկելու Համար, իր հայրենաւանդ բարբառոսական հնարքը գործ դրաւ: Արձակեց ան-

մեղ նահատակի գօտին և սնուր շինելով՝ դը-
ցեց շլինքը և կախեց մի ծառի ճղնից, որ այն-
պէս կարծւի, թէ ինքն իրան է կախել...

Ը.

Շամիրն իր չարագործութիւնից լետոյ վե-
րագարձաւ դագէքը: Հարբած մարդու պէս այս
և այն կողմն էր ընկնում, ճանապարհը կորց-
նում. կէս գիշերին հազիւ կարողացաւ տեղ
հասնել:

Հէրիքնազը թէև պառկած էր, բայց ան-
համբեր սպասում էր Մարիամի վերագարձին
և սաստիկ վարանման մէջ էր նրա ուշանա-
լու համար:

— Ախչի, ո՛ւր է քոյրըդ, հարցրեց Շա-
միրը Հէրիքնազին:

— Չը գիտեմ, դուրսը կըլինի, հիմի կը-
գայ:

Մի ժամի չափ անցաւ օրա վրայ, Մա-
րիամը չերեւայ:

— Ախչի, ո՛ւր է քոյրըդ, կըկնեց Շամիրը
բարկութեամբ:

— Ես թէ՛ գիտեմ, ո՛ւր է, ասեց Հէրիք-

նազը նոյնպէս բարկանալով, և իսկոյն վեր-
կացաւ տեղիցը՝ կարծես մի չարագուշակ ազդ-
մունքից դրդւելով:

Շամիրն սկսեց հարեաներին զարթեցնել,
իմաց տալով որ Մարիամը կորել է, ման են
գալիս, չեն գտնում:

Հարեանները զարթեցին և ամենքն էլ
սկսեցին այս և այն կողմն ընկնել, կանչել,
բղաւել անունը տալով՝ բայց ոչ մի տեղից
ձայն չըլսեց: Հէրիքնազն այնքան ուժ չու-
նէր, որ կանչէր, բայց ամենից լաւ նա էր
իմանում, թէ որ կողմ կըլինի դնացած, և
այնպէս էլ դնաց, բայց սաստիկ մութը լինե-
լով՝ ոչինչ չէր տեսնում: Շատ փնտրեց, ոչինչ
չըգտաւ, և սաստիկ յոգնելով, մէկ տեղ վայր
ընկաւ թուլացած, տիւր և տրտում: Չէր
իմանում, թէ ինչպէս մեկնէ Մարիամի այս
անակնկալ անյայտանալը: Այսպէս յուսահատ
դրութեան մէջ էր, յանկարծ մի օտքի ձայն
լսեց:

— Էդ ո՞վ ես, Մարիամ, դու ե՞ս, լալով
կանչեց Հէրիքնազը:

Արդումանն էր նոյն տեղը պըտրտուղը: Սա
լսելով Հէրիքնազի ձայնը, իսկոյն մօտեցաւ և
հարցրեց:

— Ախչի, թէ՛ ես շինում էստեղ:

—Ախ, Արզուման, դու ես: Մեր Մարիամը կորել է, ման ենք գալիս, չենք գրտնում, դու չես տեսնել. նա կարծեմ քեզ մօտ պիտի գար, թէպէտ ինձ ոչինչ չասեց:

—Ի՞նչ ես ասում, ո՞ւր է կորել. նա երեխայ հօ չի: Ես նորան էի մնում էստեղ, շատ սպասեցի, չերևաց. իմ քուռնս էլ տարաւ, նոր՝ զարթեցի, ուզում էի գալ ձեզ մօտ: Զի կորչիլ, մի վախիր: Դու թնչպէս ես, դ՞ուրաւացել ես, թէ չէ:

—Ե՞ս, ես լաւ եմ... անի, կռնիցս բռնիր, վեր կենամ, շատ եմ բեղարել: Ով գիտէ՝ քեզ նման նրա քուռնս էլ է տարել, հիմի լուսը կըբացուի, կերևայ, չեմ կարում ձէն տամ, էլ ջան չըկայ:

—Հերիքնազ ջան, դու հիւանդ ես, ինձ խաբում ես, թէ՛ լաւ եմ:

—Ախ, չէ, չէ, ես լաւ եմ, կըլաւանամ, հաւատա՛... Նստենք էստեղ: Ես չեմ կարում ման գալ: Իմանում եմ, խօսելու ձէն է գալիս. դիվի էլ Մարիամին են ման գալիս: Գնա՛, գնա՛, քեզ չըտեսնեն: Տուր ինձ ձեռքըդ. ինձ համար դարդ չանես, Արզուման ջան: Այս ասելով Հերիքնազը համբուրեց Արզումանի ձեռքը:

Արզումանն այնպէս շփոթեց, որ չիմա-

ցաւ ինչ խօսի: Մնաց ապուշ կանգնած ինչպէս փէտացած, մինչև բաւական մօտեցան խօսողները, երբ Հերիքնազի ստիպելովը հազիւ կարողացաւ անջատուել նրանից և հեռանալ:

Թ.

Երբ որ հարևաններն այս ու այն կողմ տարածուեցին, Շամիրն էլ գնաց իբր թէ նոյնպէս փնտրելու: Սրա հետ գնաց և մեզ ծանօթ Խաչատուրը:

—Ախրէր, շատ բան էինք լսել, բայց կնկայ կորչիլ չէինք լսել, ետրաբ ո՞ւր պիտի լինի գնացած, ասաց Խաչատուրը:

—Խաչատուր, մի կնիկ, որ մտքումը ծուռ բան գնի, ոտքը թեթեւացնի, ուր ասես՝ կերթայ, ուր ասես՝ կըկորչի:

—Ինչք ես էդպէս ասում, Շամիր. դու քու կնկանը չես հաւատում: Նա որ ծուռ մտքանի կնիկ լինէր, քեզանից առաջ մենք կիմանայինք. էդպէս բանը կնկայ մարդն էնպէս շուտ չի կարող իմանալ, ինչպէս ուրիշները կիմանան:

—Ուրիշները միթէ չեն խօսում իմ կըն-

կայ վրայ: Են օրը դու չըլսեցիր, որ ասում էին՝ կէս գիշերին տեսել են Արզումանի կըշտին... Ես էլի շատ բան եմ ինքս իմ աչքով տեսել. ես հաստատ գիտեմ, որ նա վատ բանի է:

— Շամիր, ես օրը ես էլ լսեցի, ինչ որ ասեցին. ես էլի շատ բան լսեցի, բայց դու չըմնացիր, որ ինքդ էլ լսես. սատանան սիրտը կրակ գցեց, վեր կացար որ գնաս հանգցնես: Դէ հիմի ինձ լսիր, տես քեզ ինչ եմ ասում: Ես վաղուց մտքումս դրել էի, որ քեզ հետ խօսեմ, բայց ոչ մի անգամ հանգումը չեկաւ: Հիմի լաւ պատահեցանք, պէտք է իմաց տամ քեզ ամեն բան: Խալին մարդու աչքը խօռ կըլինի, Շամիր, դու շատ բան ես վարաւորդ արել, բայց դիւի էլ ծուռ ես հասկացել: Հիմի ինձ ականջ դիր, տես սուտ եմ ասում թէ ըզորդ: Արզումանը քանի որ էդ փորձանքին չէր հանդիպել, մտքումը դրել էր, որ գայ քեզ խնդրի, որ Հերիքնազին իրան տաս: Հերիքնազն ու Արզումանը սիրում են մէկ մէկու, էդ սաղ աշխարհքին յայտնի է: Մի գիշեր՝ դու քաղաք գնացած ժամանակդ՝ նա իմ կշտիցս գնաց ձեր տուն: Գնացել էր Մարիամից ու Հերիքնազից խօսք առել, էգսի օրը պիտի օրինաւոր նշան ուղարկէր քեզ մօտ. նշանն էլ հազրել էր. էդ փորձանքը որ պա-

հեց, ամեն բան խափանւեց: Հիմի Մարիամն, ինչպէս ասի քեզ, խօսք է տըւել. առանց քեզ տուն է թողել: Նա ինչ գիտէր, թէ բանըն էդպէս կըգայ: Դու քօռ հօ չէս, չես տեսնում, որ Հերիքնազը մարդի չի գնում: Ի՞նչի չի գնում, կարող ես ասել: Նրա համար չի գնում, որ Արզումանիցը ձեռք չի ուզում վերցնել. ասում է՝ «ուր որ նա կըլինի, ես էլ էնտեղ կըլինիմ»: Հէնց լաւն էլ էն է, որ դու զուր տեղը վատամարդի չըդառնաս, հէնց քու ձեռքով վերցնես տաս իրան, թող ուր ուզում է տանի, քան թէ պիտի քեզանից թաքուն փախցնի: Արզումանը հիմի էստեղարէնք որ պտըտում է, Հերիքնազի համար է պտըտում: Բայց դու էնպէս ես կարծում, թէ քու կնկայ համար է: Դու քու կնկանը լաւ չես ճանաչում, Շամիր, նրա պատիւը չես իմանում, նրա լաւութիւնը չես տեսնում: Ո՞վ կայ մեր գեղումը դրա պէս հալալ ծծկեր, դրա պէս ամօթով, աբուռով, դրա պէս սուրբ սրտի տէր, դրա պէս անմեղ, անարատ:

Խաչատուրը չէր նկատում, որ իր խօսքերը մի մի նետի պէս ցըցւում էին Շամիրի սրտումը, որովհետեւ չըգիտէր, որ բանը բանից անց էր կացել: Շամիրի լեզուն կապւել էր՝ չէր կարողանում խօսել. մտքումն էր ա-

սուժ միայն, թէ՛ անիրաւ, էդ որ գիտէիր, ինչի՞ վաղ չէիր ասում ինձ: Նրա ոտները թուլացել էին, քիչ էր մնում, վայր ընկնի: Մի կերպ Խաչատուրի ետեւից քարշ գալով՝ առաջ գնացին և թնջ տեսնես յանկարծ... Երկու քոյր, մինը կախած, միւսը նրա ոտների տակ անշընչացած...

Երբ որ Արզումանը հեռացաւ, Հերիքնազը զօռով վեր կացաւ տեղիցը և սկսեց այս ու այն կողմ թափառել: Լուսն ու մութը սկսեցին իրարից բաժանուիլ թէ չէ՝ Հերիքնազի տէքումը մի բան երևաց. մինչև նրա խելքըն այս մասին մի հաշիւ կըտար, ահն ու կսկիծն իրար խառնուելով՝ կայծաղնահար արին նրան: Հերիքնազը տեղն ու տեղը վայր ընկաւ, այլ ևս չըկարողացաւ գրգւել իր միակ սիրելի քրոջ սուրբ մարմինը:



Շամիրը, անխելք ու անտաշ Շամիրը, երբ որ լուսով տեսաւ իր գիշերաչին եղբունագործութեան պատկերը, երբ որ բացւեց նրա մտքի ու խղճի աչքը, երբ տեսաւ որ կրկնա-

պատուել է իր չարագործութիւնը—ինքը մէկին է սպանել, բայց այստեղ երկուսն են ընկած,—մի սարսափելի, մի կատաղի գոռում, գոչում բարձրացրեց, գլուխը ծառերին զարկեց, ամբողջ մարմնով գետնէգետին զարկեց այսահարւածի նման: Նրա աչքերումն արտասուք չըկար, գլխի մագերը գլըլտում էր և կարծես ցաւի զգացումը կորցրել էր: Մարդիկ ժողովեցին շուտով և ուղեցին նրան կապուտել, որ ինքնասպանութիւն չըգործէ, բայց նա իրան բռնել ուղողների ձեռները կծոտեց, դուրս փախաւ ինչպէս մի վայրենի գազան և ընկաւ ձորերը: Մարդիկ վազեցին ետեւից, բայց հասնել չըկարողացան: Նա մի ահագին քարաժայռից անդունդ գլորւեց, ուր և գտաւ իր գոթիւքը: Նրան հէնց այդտեղ էլ թաղեցին:

Հերիքնազի և Մարիամի համար «Երկուհոգիս» անւանւած կաղնի ծառի տակը փորեցին և երկօքին քոյրերին մի գերեզմանում դրին իրանց շորերովը: Ասողներ եղան, թէ հարկաւոր է գիւղից քահանայ կանչել, բայց ծերերը թույլ չըտուին, ասելով—անհաղորդ էլածներին, խեղդածներին, իրանք իրանց սպանածներին տէրտէրով չեն թաղիլ: Սրա համար ոչ մի աղօթք չասւեց նրանց վրայ, ոչ մի հոգեհանգիստ չըկատարւեց նրանց համար:

Այս անսովոր և սարսափելի դէպքի լու-
րը շուտով տարածւեց ամենայն տեղ, բայց
նձ սիրտն այնքան կրկնեցար, որքան Արզում-
անինը: Արզումանը եկաւ աշկարա, օրը ցե-
րեկով, չոքեց նորաթաղ գերեզմանի վրայ և
իր ուղածի չափ արտասուեց: Բայց այդ արտա-
սուքը չբերեց իր սրտի կսկիծը: Նա
զգում էր, որ իր պատճառով են զոհւել այս
անմեղ գառնուկները. և այդ զգացումը նրան
մղում էր, որ լեռ չըմնայ իր սիրելիներին,
շուտով հասնի շէրիքնազի ետեւից և հոգով
միանայ նրա հետ: Եւ այդպէս էլ արաւ:
Խնքն իրան սպանող երիտասարդը, որի մասին
պատմեցինք առաջի գլխումը, այս Արզումանն
էր: Նա եկաւ Շա գիւղի քահանային խնդրեց,
որ երթայ այն անմեղ զոհերի գերեզմանի
վրայ թաղման կարգ կատարէ, և իրան էլ հա-
ղորդէ: Քահանան յանձնառու չեղաւ, ասելով,
որ նրանք իր ժողովուրդը չեն. իրան էլ չը
հաղորդեց, պատւիրելով որ գնայ իր քա-
հանայիցը հաղորդւի, բայց երբ հրացանի ձայ-
նի վրայ գիւղացիք հաւաքւեցին և Արզումա-
նին մերձ ի մահ գտան, քահանան էլ իսկոյն
եկաւ և հաղորդեց: Շա գիւղացիք լաւ էին
ճանաչում Արզումանին, ամենքն էլ ցաւելով

հարցնում էին, թէ ի՞նչն ստիպեց քեզ այդ-
պէս յուսահատուել:

— Ո՛հ, թողէք ինձ հանգիստ, Աստուծ
սիրէք, իմ ցաւն ինձ բաւական է: Աշխարհիս
մարդիկը շատ անգուլթ են. միայն մեռնելուց
լետոյ են ավսոսում մարդու: Ասաց Արզումա-
նը և անմահ հոգին ուղարկեց Անմահին:

Շա գիւղացիք մի սալի մէջ դրին Ար-
զումանի մարմինը և տարան իր պապական
գերեզմանատունը:

Վ Ե Ր Ջ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՅԵՐԷՆ ԳԸՐ-
ՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՆ խմբագրական մասնա-
ժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-
թեան համար ընդունվում են հետևեալ բովան-
դակութեան ինքնուրոյն և թարգմանական գը-
րուածքներ:

1. Գ ե ղ ա ղ ու ե ս տ ա կ ա ն:

2. Գ ի տ ն ա կ ա ն. զուտ գիտնական գը-
րուածքներից կըտպագրուեն միայն այնպիսիները,
որոնք վերաբերում են Հայոց կեանքի հետազո-
տութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից մի-
այն ժողովրդականացրած գրքեր:

3. Գ ա ս ա գ ը բ ե ը, նամանաւանդ ընդհա-
նուր գրականութեան, ընդհանուր պատմութեան,
Հայոց գրականութեան, բնական պատմութեան և
ֆիզիկայի ձեռնարկներ՝ կազմած մեր թեմական
դպրոցների համար:

4. Մ ա ն կ ա կ ա ն ընթերցանութեան հա-
մար:

5. Ն ի լ թ ե ը մեր ժողովրդի կեանքի ու-
սումնասիրութեան վերաբերեալ (աւանդութիւն-
ներ, երգեր, սովորութիւններ և այլն):

Ծ ա ն օ թ ու թ ի ն. — Մանրամասն ծրա-

գիր վերոյիշեալ նիւթերի ժողովելու համար՝ կը-
տպագրուի յետոյ: Ընկերութեանս խմբ. մասնա-
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւ-
թերից ընտրութիւն և քաղուածք անել, եթէ
ուղարկողը նախօրոք որոշ պայմաններ չէ դնում:

Տպագրուած գրքերի համար վարձատրութիւն
տրվում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն
գրուածքների համար՝ 20—25 ռ., իսկ թարգ-
մանական գրուածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը
կարող է և աւելի լինել խմբ. մասնաժողովի
հայեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго
Общества изданія армянскихъ книгъ.



18	Փնջիկ, գրեց Աղեքս. Արարատեանց . . .	— 20
19	Նամուս, վեպ, գրեց Շիրվանդադէ . . .	1 —
20	Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. երկրորդ տպագ. . .	2 —
21	Թիֆլիզեցոյ մտաւոր կեանքը, Գ. Տէր-Աղեքսանդրեանի . . .	1 —
	Նոյնը ընտիր թղթի վերայ. . .	1 50
22	Ղևոնդ պատմագիր . . .	2 —
23	Սրբազան պատմութիւն Հին ուխտի, Սահակ քահանայ Սահակեանի . . .	— 30
24	Նոյնը ուսուցիչների համար . . .	1 75
25	Սոկրատէս, թարգմ. օր. Թ. Ստեփոյեան . . .	— 10
26	Պատմութիւն Հայոց Ս. Պալասանեանի . . .	1 50
27	Ուղեցոյց դարձնական շերամապահութեան, Կ. Մելիք-Շահնապարեանցի . . .	— 40
28	Ժամանակագրութիւն Հայոց, Յ. Գարգելի . . .	1 25
29	Վարդ-Ռէսլի, Սպիրի. թարգմ. Ի. Յ. . .	— 10
30	Նալ եւ Դամայեանթի. Ֆ. Շմիդտի. թարգմ. Յ. Լալայեանցի . . .	— 20
31	Աստուած գիտէ արդարեւ ու մեղաւորը, Կոմի Լ. Տոլստոյի, թարգմանութիւն Մ. Ա. . .	— 7
32	Հաւատարիմ Սաղիտրին. Վայլաներ, թարգմ. Փ. Վարդանեանի . . .	— 10
33	Լինհարդ եւ Գերտրուդ, Հենրիխ Պետտալցի. թարգմանութիւն . . .	— 25
34	Յաւերուած ի գիրս պատմութեան Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ. Նորայր Բիւզանդացի . . .	— 20
35	Նաւի փոքրաւորը. Մ. Ռոզենհայնի. թարգմանութիւն Յ. Լալայեանի . . .	— 15
36	Ուռնոց Յովսէփ, Ե. Սպիրի թարգմ. Ի. Յ. . .	— 15
37	Մեծապատիւ մուրացկանները, Յ. Պարոնեանի . . .	— 40
38	Ազգային ջոջեր. Յ. Պարոնեանի . . .	1 —
39	Բըա-բա, Ի. Օժէշկոյի . . .	— 25
40	Շնիկ, Կուլիկովայի . . .	— 5
41	Շէգերինի երեք զրոյցներ . . .	— 10
42	Տարասկոնցի Տարտարէնը . . .	— 40

43	Օրէանի կոյս, Օսորոգորսկու.	. . . — 25
44	Արարատսկու ինքնակենսագրութիւնը	. — 75
45	Գաղափարական քահանայ, Պօտապենկոյի	. — 75
46	Ընտանիքի յոյսը, Աննենսկայի, Թարգմ. օր. Վ. Տէր-Յովսէփեանի	. . . — 10
47	Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի	. 1 —
48	Քիմիա Բօսկոյի, Թարգմ. Ա. Մելիք-Ալլահ- վերդեան	. . . — 40
49	Շչեգրինի երեք վէպիկ, Թարգմ. Մ. Ղա- ղարեանց	. . . — 15
50	Սասմայ ծռեր, զրեց Գարեգին սարկաւազ.	— 50
51	Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի	. — 25
52	Դաստիարակութիւն մտաւոր, բարոյական և Ֆիզիքական, Սպենսերի, Թարգմ. Մ. Ղա- ղարեանցի	. . . 1 —
53	Մըռնան, Օ. Ի. Շմիդտ, Թարգմ. Քալանթար.	— 25
54	Խան-Միրան	. . . — 20
55	Տարաս-Բուլբա	. . . — 40
56	Փշրանքներ, Գ. սարկ. Յովսէփեան (մամ. տ.)	— —
57	Երկու բոյր, Ղ. Աղայեանցի	. . . — 25

Նոյնտեղ վաճառվում են նաև Բնիկրոյթեան հե-
տեւեայ գրքերը.

- 1 Ուսումնարանների առողջապահութեան հար-
ցեր, բժ. Ա. Բարայեանի . . . 1 —
- 2 Կրքեր եւ նոցա ազգեցութիւնը առողջու-
թեան վրայ, բժ. Ա. Բարայեանի . . . — 30
- 3 Բռնի միութիւն Հայոց Լէհաստանի. . . 2 —



ՀՀ Ազգային գրադարան



NL0167415

